Co-funded by the European Union

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԷՐԱԶՄՈՒՍ+ ԲԿԿԶ Նախագիծ # 101177299-ԷԿԱՄՊՈՒՍ-ԿՐԹ-2024-ԲԿԿԶ

«Սոցիալական հեռավորություն պահպանող և ներառական կամպուսային կրթության խթանումը Հայաստանի բուհերում» - ԷԿԱՄՊՈՒՍ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԹՎԱՅԻՆ ԵՎ ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակ(ներ)ին և անպայմանորեն չեն արտացոլում Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության տեսակետները: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

ԵՐԵՎԱՆ 2025

Հեղինակային իրավունք © 2025 – eCAMPUS: Բոլոր իրավունքները պաշտպանված են
Այս փաստաթղթի ցանկացած օգտագործում պահանջում է աղբյուրի պատշաճ հղում և ERASMUS+ eCAMPUS նախագծի հիշատակում:

Co-funded by the European Union

NATIONAL CENTER FOR PROFESSIONAL EDUCATION QUALITY ASSURANCE FOUNDATION

ERASMUS+ CBHE Project # 101177299-eCAMPUS-EDU-2024-CBHE

“Fostering Socially Distanced and Inclusive on Campus Education in Armenian HEIs” - eCAMPUS

ANALYSIS

OF THE CURRENT STATE AND NEEDS ASSESSMENT OF THE INTERNAL QUALITY ASSURANCE SYSTEM FOR DIGITAL AND ONLINE LEARNING IN HEIs OF THE RA

Co-funded by the European Union. Views and opinions expressed are, however, those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union or European Education and Culture Executive Agency. Neither the European Union nor the granting authority can be held responsible for them.

YEREVAN 2025

Copyright © 2025 - eCAMPUS. All rights reserved
Any use of this document requires proper citation of the source and acknowledgment of the ERASMUS+ eCAMPUS project

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
II. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 7
III. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 9
Բաժին 1. Ինստիտուցիոնալ պատրաստվածություն 9
Բաժին 2. Կառավարում և ՈԱ ռազմավարություն 14
Բաժին 3. Ուսումնական պլանի և դասընթացի մշակում 24
Բաժին 4. Դասավանդում և ուսուցում 32
Բաժին 5. Դասախոսական կազմի վերապատրաստում և օժանդակում 41
Բաժին 6. Ուսանողների գնահատում և ակադեմիական ազնվություն 51
Բաժին 7. Ուսանողների օժանդակություն և աջակցող ծառայություններ 64
Բաժին 8. Տեխնոլոգիաներ և ենթակառուցվածք 70
Բաժին 9. Տվյալների գաղտնիություն և անվտանգություն 74
Բաժին 10. Էթիկա և արդարություն 83
Բաժին 11. Մշտադիտարկում և շարունակական բարելավում 86
Բաժին 12. ՀՀ բուհերում որակյալ թվային ուսուցման հիմնական մարտահրավերներ 94
Բաժին 13. ՀՀ բուհերում առցանց ուսուցման կազմակերպման հաջողված փորձեր 95
Բաժին 14. Լրացուցիչ դիտարկումներ և առաջարկություններ 96
IV. ԱՄՓՈՓՈՒՄ 98
V. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 99
Հավելված 1. Բուհում թվային ուսուցման որակի ապահովման (ՈԱ) համակարգի ինքնավերլուծության հարցաշար 99
Հավելված 2. Հարցաշարը լրացրած բուհերի ցանկ. 110

CONTENT

I. INTRODUCTION....6
II. METHODOLOGY....7
III. DATA ANALYSIS AND RESULTS....9
Section 1. Institutional Profile....9
Section 2. Governance and QA Strategy....14
Section 3. Curriculum and Course Design....24
Section 4. Teaching and Learning....32
Section 5. Faculty Development and Support....44
Section 6. Student Assessment and Academic Integrity....54
Section 7. Student Support and Services....63
Section 8. Technology and Infrastructure....68
Section 9. Data Privacy and Security....73
Section 10. Ethics and Equity....80
Section 11. Monitoring and Continuous Improvement....83
Section 12. Key Challenges in Maintaining the Quality of Digital Education at Armenian HEIs....90
Section 13. Successful Practices in Organizing Online Learning at Armenian HEIs....91
Section 14. Additional Comments and Recommendations....92
IV. CONCLUSION....94
V. APPENDICES....107
Appendix 1. Feedback Questionnaire for Institutional Self-Evaluation of the Digital Education Quality Assurance (QA) System....107
Appendix 2. List of Universities that Completed the Questionnaire....115

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) **«Խթանելով սոցիալական հեռավորության վրա գտնվող և ներառական կրթությունը Հայաստանի բուհերում» (eCAMPUS)** Erasmus+ ծրագրի շրջանակներում 2025 թվականին նախաձեռնել է ՀՀ բուհերում **թվային և առցանց ուսուցման որակի ապահովման համակարգի կարիքների գնահատում**: Այս նախաձեռնության նպատակն է բացահայտել բուհական համակարգում թվային ուսուցման կազմակերպման մակարդակը, գնահատել գործող քաղաքականությունները, կառավարման մեխանիզմները և որակի ապահովման ընթացակարգերը՝ ծրագրի գործընկեր հաստատությունների հետ համագործակցությամբ բարելավման մեխանիզմներ մշակելու համար:

I. INTRODUCTION

In 2025, within the framework of the Erasmus+ programme **"Fostering Socially Distanced and Inclusive on Campus Education in Armenian HEIs"** (eCAMPUS), the National Centre for Professional Education Quality Assurance (ANQA) initiated a **needs assessment of the digital and online learning quality assurance system** in higher education institutions of the Republic of Armenia.

The aim of this initiative is to identify the level of organization of digital learning within the higher education system, to assess existing policies, governance mechanisms, and quality assurance procedures, and — through cooperation with partner institutions of the programme — to develop mechanisms for improvement.

II. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գնահատման համար կիրառվել է առցանց հարցաշար՝ որպես հարթակ օգտագործելով հարցումների անցկացման QuestionPro համակարգը: Հարցումն իրականացվել է 2025 թվականի սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին:

Հարցման **նպատակն** է գնահատել.

- որքանով են ՀՀ բուհերը պատրաստ թվային և առցանց ուսուցման իրականացմանը,
- ինչ մակարդակի վրա են գտնվում թվային ուսուցման ռազմավարությունները, կառույցներն ու մեթոդաբանությունները,
- որքանով են ձևավորված այդ ուղղությամբ որակի ապահովման ներքին մեխանիզմները:

Ընտրանք

Հարցաշարը նախատեսված է ՀՀ բուհերի այն ներկայացուցիչների համար, ովքեր անմիջականորեն ներգրավված են **ուսումնական գործընթացի կազմակերպման, թվային համակարգերի ներդրման և որակի ապահովման աշխատանքներում**, մասնավորապես.

- ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորներ,
- ՏՀՏ համակարգերի գծով պրոռեկտորներ կամ ՏՀՏ կենտրոնների տնօրեններ,
- որակի ապահովման կառույցի ղեկավարներ,
- դեկաններ,
- ուսումնամեթոդական վարչությունների ղեկավարներ,
- ամբիոնների վարիչներ և կրթական ծրագրերի ղեկավարներ:

Ընդհանուր առմամբ հարցաշարը լրացրել են **55 բուհական ներկայացուցիչներ**, և բոլոր լրացումներն ավարտվել են ամբողջությամբ՝ ապահովելով **100% ավարտման ցուցանիշ**:

Հարցաշարը ներառում է հետևյալ ուղղությունների վերլուծությունը.

1 **Ինստիտուցիոնալ պատրաստվածություն** – ռազմավարական քաղաքականություններ, կառավարման կառուցվածքներ, թվային ենթակառուցվածքներ:

2 **Ուսուցման մեթոդաբանություն և գործիքներ** – առցանց ուսուցման մեխանիզմներ, LMS համակարգերի կիրառում, դասընթացների ձևաչափեր:

3 **Որակի ապահովում և գնահատում** – ներբուհական ընթացակարգեր, չափանիշներ, փաստաթղթային հիմքեր և դերաբաշխումներ:

Վերլուծական զեկույցը ներկայացնում է հարցաշարի արդյունքների ամբողջական ուսումնասիրությունը՝ **քանակական և որակական վերլուծության համադրմամբ**:

- Քանակական վերլուծությունը ներառում է տոկոսային բաշխումներ, միջիններ և համեմատություններ՝ ըստ բուհերի:
- Որակական վերլուծությունը հիմնված է բաց հիմնավորումների բովանդակային վերլուծության վրա՝ բացահայտելով հիմնական միտումները, դժվարությունները և զարգացման ուղղությունները:

Այս զեկույցը հանդիսանում է համապարփակ գնահատում ՀՀ բուհերում թվային և առցանց ուսուցման որակի ապահովման համակարգերի ներկա իրավիճակի մասին՝ ներկայացնելով ինչպես հաջողված փորձերը, այնպես էլ զարգացման կարիքները։
Այն կարող է ծառայել միաժամանակ մի քանի մակարդակներում.

- **Քաղաքական և ռազմավարական մակարդակում** – որպես վերլուծական հիմք կրթության թվայնացման պետական քաղաքականության, ռազմավարական ծրագրերի և կարգավորիչ փաստաթղթերի վերանայման կամ մշակման համար։
- **Ինստիտուցիոնալ մակարդակում** – որպես **ինքնագնահատման և բարելավման գործիք**, որը թույլ կտա բուհերին գնահատել իրենց թվային կառավարման, ուսուցման մեթոդաբանության և որակի ապահովման գործընթացների արդյունավետությունը, բացահայտել խնդիրներն ու սահմանել զարգացման առաջնահերթությունները։
- **Հետազոտական և մեթոդաբանական մակարդակում** – որպես **վերլուծական հենք և տվյալների բազա**, որի վրա հնարավոր է կառուցել խորքային հետազոտություններ՝ կրթության թվայնացման, ինստիտուցիոնալ քաղաքականության ձևավորման և որակի ապահովման մեխանիզմների զարգացումն ուսումնասիրելու նպատակով։
- **Միջազգային և համագործակցության մակարդակում** – որպես համադրելի վերլուծություն, որը կարող է օգտագործվել միջազգային գործընկերների, համագործակցության ծրագրերի պատասխանատուների կողմից՝ քաղաքականության համեմատական գնահատման և համագործակցությունների պլանավորման համար։

III. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Բաժին 1. Ինստիտուցիոնալ պատրաստվածություն

Ուսանողների ներգրավվածությունը թվային բաղադրիչ ունեցող դասընթացներում

Հարցաշարի շրջանակներում անդրադարձ է կատարվել ուսանողների ներգրավվածությանը թվային բաղադրիչ (առցանց, հիբրիդային, խառը և այլն) ունեցող դասընթացներում բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ուսանողների՝ թվային դասընթացներում ընդգրկվածության մակարդակը բուհերից բուհ զգալիորեն տարբերվում է՝ սկսած 0%-ից մինչև 100%: Սա փաստում է, որ թվային ուսուցման իրականացման մակարդակը բուհական համակարգում միասնական չէ և պայմանավորված է տարբեր ինստիտուցիոնալ, տեխնիկական և կառավարչական գործոններով:

Բուհերի մի մասում թվային դասընթացների ընդգրկվածությունը գնահատվել է որպես ամբողջական (100%), մյուսներում՝ մասնակի (10–30%), իսկ որոշ հաստատություններում թվային բաղադրիչ առհասարակ չի կիրառվում:

Աղյուսակ 1. Ուսանողների ներգրավվածության մակարդակների տոկոսային բաշխում

Ներգրավվածության մակարդակ	Շեմ	Բուհերի մոտավոր բաժինը	Նկարագրություն
Շատ ցածր ներգրավվածություն	0–5%	մոտ 35%	Թվային ուսուցում գրեթե չի իրականացվում կամ առկա են միայն փորձնական դասընթացներ:
Ցածր ներգրավվածություն	6–20%	մոտ 25%	Թվային բաղադրիչը կիրառվում է որոշ առարկաներում կամ հիբրիդային ձևաչափով:
Միջին ներգրավվածություն	21–50%	մոտ 20%	Թվայնացումը տարածված է առանձին ֆակուլտետներում կամ կրթական ծրագրերում:
Բարձր ներգրավվածություն	51–80%	մոտ 10%	Թվային ուսուցման գործընթացները ունեն կառուցվածքային մոտեցում և կիրառական են:
Շատ բարձր ներգրավվածություն	81–100%	մոտ 10%	Թվային հարթակներն ինտեգրված են ուսումնական գործընթացին և օգտագործվում են բոլոր ուսանողների կողմից:

Պատասխաններից ձևավորվում են երեք հիմնական խմբեր.

1. Բուհեր՝ ամբողջական թվայնացման մակարդակով

Այս խմբին պատկանում են այն հաստատությունները, որտեղ թվային հարթակները (օր.՝ Moodle, MS Teams կամ ներքին LMS համակարգեր) կիրառվում են բոլոր ուսանողների համար։ Օրինակներ.

- Երևանի պետական համալսարան՝ նշվել է, որ բոլոր ուսանողներն (14333) ընդգրկված են Ուսուցման կառավարման համակարգում, որտեղ հասանելի են բոլոր դասընթացները և ուսումնամեթոդական նյութերը։
- Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան՝ ուսանողների ընդգրկվածությունը գնահատվել է 100%։
- Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան՝ 80% ընդգրկվածություն։ Այս բուհերում առկա են նաև հաստատված մեթոդական ընթացակարգեր թվային ուսուցման իրականացման համար։

2. Բուհեր՝ մասնակի թվայնացման փուլում

Այս խմբում ընդգրկված բուհերում առկա են թվային բաղադրիչ ունեցող առարկաներ կամ առանձին ֆակուլտետներ, սակայն համակարգը դեռևս համատարած կիրառում չունի։ Օրինակներ.

- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան՝ 30%,
- Գավառի և Գորիսի պետական համալսարաններ՝ մոտ 2.4%,
- Շիրակի պետական համալսարան՝ 10–15%,
- Եվիասիա միջազգային համալսարան՝ թվային ուսուցում ամբողջությամբ չի իրականացվում, սակայն բոլոր ուսանողները գրանցված են MS Teams հարթակում և օգտվում են թվային նյութերից։

3. Բուհեր՝ նվազ կամ բացակայող թվայնացումով

Այս խմբի հաստատություններում թվային ուսուցման գործընթացը գրեթե բացակայում է կամ կիրառվում է միայն արտակարգ իրավիճակներում։ Այսպիսի հաստատությունների շարքում են ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի մի շարք ստորաբաժանումներ, ԵԹԿՊԻ-ի առանձին ֆակուլտետներ (մինչև 8 ուսանող)։

Հարցաշարի շրջանակում արված վերլուծությունները ցույց են տալիս, որ.

- Թվային ուսուցման ընդգրկվածության աստիճանը կախված է բուհերի ինստիտուցիոնալ կարողություններից, տեխնիկական ապահովվածությունից և ներբուհական կառավարման որոշումներից։
- Պետական խոշոր բուհերում թվային համակարգերը հիմնականում ներդրված են և կիրառվում են ուսումնական գործընթացի բոլոր փուլերում։
- Փոքր կամ մասնաճյուղային բուհերում թվայնացման մակարդակը սահմանափակ է՝ հիմնականում պայմանավորված ռեսուրսային և մեթոդաբանական սահմանափակումներով։

- Որոշ բուհերում թվային ուսուցման առկայությունը նույնացվում է տեխնիկական հարթակի (օր.՝ MS Teams) օգտագործման հետ՝ առանց մեթոդական ամբողջական ձևավորման։

Դասախոսների ներգրավվածությունը թվային բաղադրիչ ունեցող դասընթացներում

Հարցաշարի շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև դասախոսների ներգրավվածությանը թվային բաղադրիչ (առցանց, հիբրիդային, խառը և այլն) ունեցող դասընթացներում բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ դասախոսների թվային դասընթացների իրականացման մակարդակը ևս տատանվում է 0%-ից մինչև 100%։ Միջին ցուցանիշը գնահատվում է շուրջ 20–25%, ինչը վկայում է, որ դասախոսների ներգրավվածությունը ընդհանուր առմամբ համահունչ է ուսանողների ներգրավվածության մակարդակին, սակայն առկա են որոշակի շեղումներ՝ պայմանավորված բուհերի տարբեր հնարավորություններով։

Աղյուսակ 2. Դասախոսների ներգրավվածության մակարդակների տոկոսային բաշխում

Ներգրավվածության մակարդակ	Շեմ	Բուհերի մոտավոր բաժինը	Նկարագրություն
Շատ ցածր ներգրավվածություն	0–5%	մոտ 40%	Թվային դասավանդում գրեթե չի իրականացվում կամ առկա է միայն մեկ-երկու դասախոսների նախաձեռնությամբ։
Ցածր ներգրավվածություն	6–20%	մոտ 25%	Թվային դասընթացներ կան որոշ առարկաներում կամ ֆակուլտետներում։
Միջին ներգրավվածություն	21–50%	մոտ 15%	Թվայնացման գործընթացն ունի մասնակի համակարգային բնույթ։
Բարձր ներգրավվածություն	51–80%	մոտ 10%	Թվային դասավանդման համակարգերն ակտիվորեն կիրառվում են։
Շատ բարձր ներգրավվածություն	81–100%	մոտ 10%	Բոլոր դասախոսները ներգրավված են թվային կամ հիբրիդային դասընթացների իրականացման մեջ։

Հիմնվելով բուհերի բաց մեկնաբանությունների վրա՝ կարելի է առանձնացնել երեք հիմնական խմբավորում.

1. Լրիվ թվայնացված դասավանդում ունեցող բուհեր

Այս խմբի բուհերում բոլոր կամ գրեթե բոլոր դասախոսներն ընդգրկված են թվային ուսուցման գործընթացներում։

Օրինակներ.

- Երևանի պետական համալսարան՝ նշվել է, որ ամբողջ դասախոսական կազմը ներգրավված է, քանի որ բոլորը օգտվում են էլեկտրոնային կառավարման համակարգից։
- Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան՝ 100% ընդգրկվածություն։
- ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան՝ 80%։ Այս բուհերում առկա են հաստատված կառավարման հարթակներ և մեթոդաբանական հիմքեր դասավանդման թվային բաղադրիչների իրականացման համար։

2. Մասնակի ներգրավվածություն

Այս խմբում դասախոսների թվային դասավանդման ընդգրկվածությունը գնահատվում է միջին մակարդակով՝ 10–30%։

Օրինակներ.

- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան՝10%,
- Հյուսիսային համալսարան՝ 30%,
- Գավառի պետական համալսարան՝ մոտ 25–30%,
- Շիրակի պետական համալսարան՝ մինչև 15%։

Այս բուհերում առկա են առանձին թվային դասընթացներ կամ առարկաներ, սակայն համակարգային քաղաքականություն դեռևս չկա։

3. Նվազ ներգրավվածություն կամ բացակայություն

Այս խմբում դասախոսների թվային ներգրավվածությունը գրեթե բացակայում է։

Օրինակներ.

- ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ստորաբաժանումներ՝ 0%,
- ԵԹԿՊԻ՝ առանձին դեպքեր (1 դասախոս)։

Միևնույն ժամանակ, որոշ մասնավոր բուհեր նշել են, որ բոլոր դասախոսները պարտադիր կերպով տեղադրում են ուսումնական նյութերը գործող հարթակներում, սակայն առցանց դասավանդման մեթոդաբանությունը դեռևս ձևավորված չէ։

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս.

- Դասախոսների թվային դասավանդման ընդգրկվածությունը միջինում համահունչ է ուսանողների ներգրավվածությանը, սակայն մի շարք բուհերում նկատվում է անհամաչափություն. ուսանողները կարող են թվային հարթակներում գրանցված լինել, մինչդեռ դասավանդողները իրականում չեն կիրառում թվային մեթոդաբանություն։
- Թվային հարթակի օգտագործումը շատ դեպքերում դիտվում է որպես տեխնիկական պահանջ, ոչ թե մեթոդաբանական գործընթաց։
- Բուհերի մի մասում (հատկապես խոշոր հաստատություններում) առկա է թվային կրթական հարթակի կիրառման պարտադիր պահանջ, ինչը բարձրացրել է դասախոսների ներգրավվածության մակարդակը։

- Փոքր բուհերում և մասնաճյուղերում դասավանդման թվայնացման գործընթացը հիմնականում իրականացվում է անհատական կամ փորձնական մակարդակով՝ առանց ինստիտուցիոնալ քաղաքականության:

Ուսուցման կառավարման օգտագործվող համակարգեր (LMS)

Անդրադարձ է կատարվել բուհերում կիրառվող ուսուցման կառավարման համակարգերին (Learning Management Systems, LMS)՝ պարզելու, թե որոնք են առավել լայնորեն օգտագործվող հարթակները թվային և առցանց ուսուցման կազմակերպման գործում:

Տվյալները ցույց են տալիս, որ բուհերի մեծ մասը կիրառում է միջազգային տարածում ունեցող կամ ներքին մշակված ուսուցման կառավարման համակարգեր: Ամենատարածված հարթակն է **Moodle** համակարգը, որն օգտագործվում է գրեթե յուրաքանչյուր երկրորդ բուհում: Բացի դրանից, նկատվում է ներքին (in-house) հարթակների և տարբեր այլ հիբրիդ լուծումների ակտիվ կիրառություն:

Գծապատկեր 1. LMS համակարգերի օգտագործման տոկոսային բաշխում



Աղյուսակ 3. Բուհերում օգտագործվող ուսուցման կառավարման համակարգերի (LMS) տեսակներ և դրանց բաշխում

Օգտագործվող համակարգ	**Տոկոս**
Moodle	47.27%
Canvas	1.82%
Blackboard	0.00%
Ներքին մշակված համակարգ (In-house system)	16.36%
Այլ (օր.՝ MS Teams, Google Classroom և այլն)	34.55%
Ընդհանուր	**100%**

1. Moodle համակարգի գերակշռություն

Բուհերի մոտ կեսում կիրառվում է Moodle հարթակը՝ որպես հիմնական ուսուցման կառավարման համակարգ։ Այն ընտրվել է հիմնականում իր բաց կոդով կառուցվածքի, ճկունության և ինտեգրման հնարավորությունների շնորհիվ։ Այս համակարգն օգտագործվում է թե՛ պետական, թե՛ մասնավոր բուհերում և ապահովում է դասընթացների կառավարման հիմնական գործառույթները՝ ուսումնական նյութերի տեղադրում, առաջադրանքների հանձնարարում, գնահատում և հետադարձ կապ։

2. Ներքին մշակված (In-house) համակարգեր

Մի շարք բուհեր ունեն սեփական՝ բուհի ներքին կարիքներին հարմարեցված ուսուցման կառավարման հարթակներ։ Այս համակարգերը հաճախ մշակվել են ՏՀՏ կենտրոնների կամ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինների կողմից։ Դրանք հնարավորություն են տալիս հարմարեցնել հարթակը ներքին ընթացակարգերին և գնահատման քաղաքականությանը։

Այս մոտեցումը առավել տարածված է տեխնիկական կամ ինժեներական ուղղվածությամբ բուհերում, որտեղ առկա են սեփական ՏՀՏ ստորաբաժանումներ։

3. Այլ համակարգերի կիրառություն

Որոշ բուհեր թվային ուսուցման համար կիրառում են այլ հարթակներ՝ ըստ տեխնիկական հնարավորությունների։

Հաճախ նշվել են.

- **MS Teams**,
- **Google Classroom**,
- **Zoom** և այլ առցանց հարթակներ։

Այս հարթակները հիմնականում օգտագործվում են ոչ թե որպես ամբողջական LMS, այլ որպես ուսուցման օժանդակ գործիք՝ դասընթացների իրականացման և հաղորդակցության նպատակով։

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս.

- LMS համակարգերի ընտրությունը բուհերում հիմնականում պայմանավորված է տեխնիկական և ֆինանսական գործոններով։
- Moodle-ի լայն կիրառությունը վկայում է բաց աղբյուրով լուծումների նկատմամբ բուհերի նախապատվության մասին։
- Ներքին մշակված հարթակների առկայությունը ցույց է տալիս որոշ բուհերի ՏՀՏ ներուժի և ինքնուրույն տեխնոլոգիական զարգացման կարողությունների բարձր մակարդակ։
- «Այլ» կատեգորիայում ներառված հարթակների բազմազանությունը վկայում է, որ դեռևս չկա միասնական մոտեցում՝ LMS համակարգերի ընտրության և օգտագործման վերաբերյալ։

Բաժին 2. Կառավարում և ՈԱ ռազմավարություն

Թվային և առցանց ուսուցման կազմակերպման ռազմավարության կամ քաղաքականության առկայություն

Անդրադարձ է կատարվել այն հարցին, թե բուհն ունի՞ թվային և առցանց ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ պաշտոնապես հաստատված ռազմավարություն կամ քաղաքականություն:
Պատասխանների բաշխումը ցույց է տալիս, որ բուհերի մոտավորապես քառորդ մասը (25%) ունի պաշտոնապես հաստատված և կիրառվող ռազմավարություն կամ քաղաքականություն թվային ուսուցման կազմակերպման ուղղությամբ: Շուրջ 40% բուհերում նման քաղաքականությունը գործում է ոչ ֆորմալ՝ ըստ անհրաժեշտության կամ անհատական նախաձեռնությամբ, իսկ մնացած բուհերը փաստում են, որ գործընթացը դեռևս փաստաթղթային ձևակերպման փուլում է կամ առհասարակ բացակայում է:

Գծապատկեր 2. Թվային ուսուցման ռազմավարությունների առկայության մակարդակ



Աղյուսակ 4. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	4	7.27%	Տվյալները բացակայում են կամ տեղեկությունը անհայտ է:
1 – Առկա չէ	5	9.09%	Թվային ուսուցման քաղաքականություն կամ փորձ առկա չէ:
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	22	40.00%	Գործում են առանձին նախաձեռնություններ՝ առանց պաշտոնական հաստատման:
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	10	18.18%	Քաղաքականությունը փաստաթղթավորված է, բայց դեռևս չի կիրառվում հետևողականորեն:

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
4 – Համակարգային կերպով իրականացվող	14	25.45%	Գործող ռազմավարությունը հաստատված է և կիրառվում է ամբողջ բուհում:
Ընդհանուր	**55**	**100%**	

1. Ռազմավարություն և կանոնակարգեր ունեցող բուհեր

Այս խմբի բուհերում առկա են թվային ուսուցման կազմակերպման պաշտոնական փաստաթղթեր, ռազմավարական ծրագրեր կամ հատուկ կանոնակարգեր:

- Օրինակ՝ ԵՊԲՀ, ԵՊՀ, ԲՊՀ, Գավառի պետական համալսարան, Գորիսի պետական համալսարան, ՀՊՄՀ:
- Թվային ուսուցման հարցերը ամրագրված են ռազմավարական ծրագրերում կամ առանձին կարգերում («Հեռավար ուսուցման կազմակերպման կարգ», «Թվային կրթության ռազմավարություն» և այլն):
- Նման բուհերում քաղաքականությունը դիտարկվում է որպես ինստիտուցիոնալ առաջնահերթություն:

2. Փաստաթղթերի մշակման փուլում գտնվող բուհեր

Շատ բուհեր նշել են, որ ռազմավարությունը կամ կանոնակարգերը գտնվում են մշակման կամ վերանայման փուլում:

- Օրինակ՝ ԵԹԿՊԻ, ՆԳՆ կրթահամալիր, ՊԿԱ:
- Պատասխաններից երևում է, որ կա ներքին պատրաստակամություն թվային կրթության քաղաքականության ձևավորման ուղղությամբ, սակայն փաստաթղթային ամրագրման գործընթացը դեռ ընթացքի մեջ է:

3. Ոչ ֆորմալ կամ մասնակի կիրառվող քաղաքականություններ

Այս խմբում ընդգրկված են այն բուհերը, որտեղ առկա են առանձին նախաձեռնություններ կամ գործողություններ, սակայն դրանք պաշտոնապես չեն ամրագրված:

- Թվային ուսուցման գործընթացները հիմնականում իրականացվում են անհատական մակարդակով կամ ըստ ֆակուլտետների:
- Որոշ դեպքերում թվային բաղադրիչը ներառված է ընդհանուր որակի ապահովման կամ ուսումնական գործընթացի կարգավորումներում՝ առանց առանձին քաղաքականության ձևակերպման:

4. Քաղաքականության բացակայություն

Բուհերի մի փոքր մասում արձանագրվել է թվային ուսուցման կազմակերպման ռազմավարության կամ քաղաքականության բացակայություն: Այս բուհերը թվային դասընթացներ իրականացնում են միայն ըստ անհրաժեշտության կամ արտաքին պահանջների՝ առանց մշտական ինստիտուցիոնալ մեխանիզմների:

Վերլուծությունները ցույց են տալիս.

- Խոշոր բուհերն ընդհանուր առմամբ ունեն փաստաթղթավորված քաղաքականություններ և ռազմավարական հիմքեր, մինչդեռ փոքր բուհերում գործընթացը դեռևս մասնակի կամ ոչ ֆորմալ բնույթ ունի:
- Թվային ուսուցման քաղաքականության առկայությունն անմիջականորեն կապված է բուհի կառավարման և որակի ապահովման կառուցվածքային զարգացածության մակարդակի հետ:
- Հաճախ հանդիպում է «փաստաթուղթը մշակման փուլում» ձևակերպումը, ինչը վկայում է բուհերի անցումային վիճակի մասին՝ ոչ ֆորմալ փորձից դեպի համակարգային մոտեցում:
- Նման բաշխումն արտացոլում է, որ համակարգային քաղաքականության առկայությունը դեռևս ամբողջ ոլորտում ձևավորման փուլում է:

Թվային ուսուցման որակի ապահովման գործընթաց և ներգրավված ստորաբաժանումներ

Հարցաշարի շրջանակում գնահատվել է՝ արդյոք բուհում թվային ուսուցման որակի ապահովման գործընթացում ներգրավված ստորաբաժանումների (օր.՝ ֆակուլտետներ, որակի ապահովման կենտրոններ, ՏՀՏ ստորաբաժանումներ, ուսումնամեթոդական բաժիններ և այլն) դերերն ու պարտականությունները հստակ սահմանված և փաստաթղթավորված են:
Քանակական տվյալների բաշխումը ցույց է տալիս, որ բուհերի զգալի մասն այս ոլորտում գործում է ոչ ֆորմալ մակարդակում՝ առանց ամբողջությամբ հաստատված փաստաթղթային հիմքի: Միայն մոտ 15% բուհերում գործընթացը համարվում է համակարգային, մինչդեռ ավելի քան 45% բուհեր նշում են, որ համապատասխան դերերն ու գործառույթները առկա են, բայց ձևակերպված են ոչ ֆորմալ կերպով կամ անհատական նախաձեռնություններով: Մոտ 16% բուհերում նման դերեր առհասարակ չեն սահմանվել:

Գծապատկեր 3. Թվային ուսուցման որակի ապահովման դերերի հստակեցման աստիճան



Աղյուսակ 5. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	6	10.91%	Տեղեկությունը բացակայում է կամ պատասխանողը չի տիրապետում տվյալներին։
1 – Առկա չէ	9	16.36%	Թվային ուսուցման որակի ապահովման դերերն ու պարտականությունները չեն սահմանվել։
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	25	45.45%	Գործում են անհատական կամ ամբիոնային մակարդակի նախաձեռնություններ՝ առանց պաշտոնական փաստաթղթերի։
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	7	12.73%	Դերերն ու գործառույթները ձևակերպված են, սակայն դեռևս չեն կիրառվում հետևողականորեն։
4 – Համակարգային կերպով իրականացվող	8	14.55%	Դերերն ու պարտականությունները հստակ սահմանված և ամրագրված են փաստաթղթերով։
Ընդհանուր	**55**	**100%**	

Բուհերի հիմնավորումները ցույց են տալիս տարբեր մոտեցումներ՝ դերի բաշխման և փաստաթղթային կարգավորման հարցում.

1. Համակարգային փաստաթղթային հիմքեր ունեցող բուհեր

Այս բուհերում թվային ուսուցման որակի ապահովման գործընթացում ներգրավված ստորաբաժանումների պարտականությունները հստակ ամրագրված են համապատասխան կանոնադրություններում, կարգերում կամ ռազմավարական փաստաթղթերում։

- Օրինակներ՝
  - **ԵՊՀ՝** «Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ» և այլ կանոնակարգեր։
  - **ՀՊՄՀ՝** ռազմավարական ծրագիր և ֆակուլտետների կանոնադրություններ, որտեղ հստակ նշված են ՈԱ, ՏՀՏ և ուսումնամեթոդական բաժինների գործառույթները։

- **Գավառի և Գորիսի պետական համալսարաններ՝** «Հեռավար ուսուցման կազմակերպման կարգ» փաստաթղթով սահմանված դերեր։
- **ԵԹԿՊԻ** – մշակման փուլում գտնվող «Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման կարգ»։

2. Փաստաթղթերի մշակման կամ վերանայման փուլում գտնվող բուհեր

Շատ բուհեր նշել են, որ համապատասխան փաստաթղթերը դեռ մշակման փուլում են։

- Օրինակ՝ **ՀՀ ՊԿԱ, ՆԳՆ կրթահամալիր**։
- Նշվում է, որ փաստաթղթային հիմքերի վերանայումը կապված է բուհի թվայնացման ընդհանուր ռազմավարության արդիականացման հետ։
- Այս խմբում հաճախ կիրառվում են ժամանակավոր կարգավորումներ կամ վարչական հրամաններ։

3. Ոչ ֆորմալ գործընթացներ

Բուհերի մեծ մասը թվային ուսուցման որակի ապահովման գործընթացները կիրառում է ոչ ֆորմալ հիմքով՝ առանց պաշտոնական փաստաթղթերի։

- Որակի ապահովման վերահսկումն իրականացվում է հիմնականում ամբիոնների կամ ֆակուլտետների մակարդակով։
- Գործառույթները հիմնականում բաշխված են ՈԱ կենտրոնների, ՏՀՏ բաժինների և ուսումնամեթոդական վարչությունների միջև՝ առանց իրավական սահմանման։
- Համակարգային ընթացակարգեր մշակման փուլում են։

4. Փաստաթղթերի բացակայություն կամ սահմանափակ դերի ձևակերպում

Մի շարք բուհեր նշել են, որ այս ուղղությամբ դեռ որևէ փաստաթուղթ կամ հստակ դերաբաշխում չկա։

- Որոշ բուհերում նշվել է, որ թվային ուսուցման որակի ապահովումը կատարվում է ընդհանուր որակի վերահսկման ընթացակարգերի շրջանակում՝ առանց առանձին մեխանիզմների։

Վերլուծությունները ցույց են տալիս.

- Բուհերի մեծ մասում թվային ուսուցման որակի ապահովման գործընթացները դեռևս գտնվում են ձևավորման փուլում՝ ընդգրկելով ոչ ֆորմալ մեխանիզմներ և մասնակի փաստաթղթավորում։
- Որոշ համալսարաններ (ԵՊՀ, ՀՊՄՀ, ԵՊԲՀ, ԲՊՀ) ինստիտուցիոնալ մակարդակում սահմանել են դերերը։
- Փոքր բուհերում կամ մասնաճյուղերում որակի ապահովման դերը սահմանվում է ավելի ընդհանուր ձևով կամ բացակայում է։
- Բոլոր խմբերում ընդգծվում է նույն միտումը՝ թվային ուսուցման որակի ապահովումը դեռևս չի ինտեգրվել բուհերի ներքին որակի ապահովման ամբողջական համակարգի մեջ։

Թվային ուսուցման կառավարման և համակարգման կառուցվածքային համակարգեր և փաստաթղթային հիմքեր

Անդրադառնալով հետևյալ ուղղությանը՝ արդյոք բուհում առկա են թվային ուսուցման կառավարման կամ համակարգման պատասխանատու ստորաբաժանումներ (օր.՝ ՏՀՏ կենտրոն, թվային կրթության բաժին, էլեկտրոնային ուսուցման բաժին և այլն), հարկ է նշել, որ

բուհերի մոտ կեսը (մոտ 50%) ունի ձևավորված ստորաբաժանում կամ պատասխանատու միավոր, որը համակարգում է թվային ուսուցման գործընթացները: Մյուս կեսում նման կառույցներ կամ չկան, կամ դրանց գործառույթները մասնակիորեն իրականացնում են այլ ստորաբաժանումներ՝ ՏՀՏ բաժինները, որակի ապահովման կենտրոնները կամ ուսումնամեթոդական վարչությունները:
Հաճախ թվային ուսուցման կառավարման գործառույթներն իրականացվում են այլ կառուցվածքային միավորների հետ համատեղ գործունեությամբ՝ առանց առանձին վարչական կամ կանոնադրական կարգավորման:

Գծապատկեր 4. Թվային ուսուցման կառուցվածքային համակարգեր



Աղյուսակ 6. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	4	7.27%	Տեղեկությունը բացակայում է կամ պատասխանողը չի տիրապետում տվյալներին:
1 – Առկա չէ ստորաբաժանում	16	29.09%	Թվային ուսուցման կառավարման առանձին ստորաբաժանում բացակայում է:
2 – Գործառույթները մասնակի բաշխված են այլ ստորաբաժանումների միջև	11	20.00%	Թվային ուսուցման համակարգումն իրականացնում են ՏՀՏ, ՈԱ կամ ուսումնամեթոդական ստորաբաժանումները:
3 – Ստորաբաժանումը ձևավորված է, բայց	10	18.18%	Կառույցն առկա է գործնականում, սակայն

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
փաստաթղթային ամրագրված չէ			չունի պաշտոնապես հաստատված կարգավորում:
4 – Ստորաբաժանումը պաշտոնապես հաստատված և գործող է	14	25.45%	Թվային ուսուցման կառավարման կառուցվածքը հաստատված է կանոնադրությամբ կամ կարգով:
Ընդհանուր	55	100%	

Բուհերի հիմնավորումները վկայում են, որ կառավարման կառուցվածքային համակարգերի ձևավորումը տարբեր բուհերում գտնվում է տարբեր փուլերում:

1. Պաշտոնապես հաստատված ստորաբաժանումներ ունեցող բուհեր

Այս բուհերում առկա են թվային կրթության կառավարման առանձին միավորներ կամ ՏՀՏ ստորաբաժանումներ՝ հստակ գործառույթներով:

- Օրինակներ՝
  - **ԵՊՀ** – ՏՀՏ կառավարման բաժին և էլեկտրոնային ուսուցման համակարգի վարչություն:
  - **ՀՊՄՀ** – ՏՀՏ կենտրոն, որի կանոնադրությամբ ամրագրված է թվային ուսուցման համակարգման գործառույթը:
  - **ԵՊԲՀ** – առկա է էլեկտրոնային կրթության բաժին՝ մեթոդական և տեխնիկական աջակցության գործառույթներով:
  - **Գավառի պետական համալսարան** – ստեղծված է թվային կրթության համակարգման բաժին՝ ներառված բուհի կառավարման կառուցվածքում:

Այս հաստատություններում թվային կրթությունը համակարգվում է կենտրոնացված ձևով՝ ըստ հաստատված կանոնակարգերի:

2. Գործող, բայց փաստաթղթային չամրագրված ստորաբաժանումներ

Բուհերի մի խումբ նշել է, որ գոյություն ունեն պատասխանատու անձինք կամ խմբեր, որոնք համակարգում են թվային ուսուցման գործընթացները, սակայն դրանց կարգավիճակը դեռևս պաշտոնապես ամրագրված չէ:

- Օրինակ՝ **ԵԹԿՊԻ**, **ՀՀ ՊԿԱ**, **Գորիսի պետական համալսարան**, **Շիրակի պետական համալսարան**:
- Նշվել է, որ ձևավորվել են աշխատանքային խմբեր կամ ՏՀՏ և ՈԱ ստորաբաժանումների համատեղ թիմեր՝ թվային կրթության գործընթացները համակարգելու համար:
- Այս դեպքերում փաստաթղթային հիմքերը մշակման փուլում են:

3. Թվային ուսուցման գործառույթների ինտեգրում այլ ստորաբաժանումների գործունեության մեջ

Շատ բուհերում թվային ուսուցման կառավարման պարտականությունները իրականացվում են այլ ստորաբաժանումների կողմից՝ առանց առանձին կառույցի ստեղծման։

- Առավել հաճախ թվային կրթության համակարգման գործառույթը վերապահված է՝
  - ՏՀՏ բաժիններին,
  - Որակի ապահովման կենտրոններին,
  - Ուսումնամեթոդական վարչություններին։
- Այս մոտեցումը բնորոշ է հատկապես փոքր բուհերին կամ մասնաճյուղային կառույցներին, որտեղ առանձին ստորաբաժանում ստեղծելու ռեսուրս չկա։

4. Ստորաբաժանումների բացակայություն

Մի շարք բուհեր նշել են, որ առանձին ստորաբաժանում կամ պատասխանատու անձ թվային ուսուցման համակարգման համար առկա չէ։

- Այս բուհերում գործընթացը հիմնականում իրականացվում է ամբիոնների կամ ՏՀՏ մասնագետների անհատական ներգրավմամբ։

Վերլուծությունները ցույց են տալիս.

- Թվային ուսուցման կառավարման և համակարգման կառուցվածքային համակարգերի առկայությունը տարբեր բուհերում ունի զգալի տարբերություններ։
- Խոշոր բուհերն ունեն ձևավորված ստորաբաժանումներ և հաստատված կանոնադրություններ, մինչդեռ փոքր բուհերում գործառույթները մասնակիորեն են բաշխված։
- Բազմաթիվ բուհերում առկա են ոչ ֆորմալ կառավարման ձևեր՝ աշխատանքային խմբերի կամ պատասխանատու անձանց մակարդակով։
- ՏՀՏ բաժինները և ՈԱ կենտրոնները հաճախ իրականացնում են թվային ուսուցման համակարգման համատեղ գործառույթներ՝ առանց դրանց հստակ բաժանման։
- Թվային կրթության կառավարման պաշտոնական կառուցվածքների ձևավորումը շարունակում է մնալ զարգացման փուլում և պահանջում է փաստաթղթային հստակեցում ու ինստիտուցիոնալ ամրապնդում։

Թվային ուսուցման կառավարման պատասխանատվության հստակեցում բուհում

Անդրադարձ է կատարվել այն հարցին, թե բուհում հստակ սահմանվե՞լ են արդյոք թվային ուսուցման համակարգման և կառավարման պատասխանատու անձինք կամ մարմիններ (օր.՝ պրոռեկտոր, կրթական ծրագրերի ղեկավարներ և այլն)։

Տվյալների բաշխումը ցույց է տալիս, որ թվային ուսուցման կառավարման պատասխանատվությունը բուհերում հիմնականում բաշխված է տարբեր ստորաբաժանումների կամ ղեկավար պաշտոնյաների միջև։ Միայն մոտ 22% բուհերում պատասխանատվությունը հստակ ամրագրված է փաստաթղթային ձևով (օր.՝ հրաման, կարգ, կանոնադրություն)։ Մնացած մոտ 60% բուհերում պատասխանատվությունը սահմանվում է ոչ ֆորմալ՝ ըստ իրավիճակի կամ աշխատանքային պարտականությունների ներքին բաշխման։

Այս պատկերը վկայում է, որ թվային ուսուցման կառավարման ինստիտուցիոնալ համակարգը դեռևս ամբողջությամբ չի ձևավորվել։

1. Հստակ սահմանված պատասխանատվություն ունեցող բուհեր

Այս խմբում ընդգրկված են այն բուհերը, որոնք նշել են թվային ուսուցման համակարգման պատասխանատու մարմինների կամ անձանց պաշտոնական ամրագրում։

- Օրինակներ.
    - **ԵՊՀ՝** համակարգման պատասխանատվությունը վերապահված է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին և ՏՀՏ կառավարման բաժնին։
    - **ՀՊՄՀ՝** ՏՀՏ կենտրոնը և ուսումնամեթոդական վարչությունը համատեղ իրականացնում են համակարգումը՝ համապատասխան հրամաններով։
    - **ԵՊԲՀ** ՝ առկա է թվային կրթության համակարգող պաշտոն, որի գործառույթներն ամրագրված են ներքին կանոնակարգով։
    - **Գավառի և Գորիսի պետական համալսարաններ՝** պատասխանատվությունը բաժանված է ՈԱ կենտրոնի և ՏՀՏ բաժնի միջև։

2. Ոչ ֆորմալ կամ ընդհանուր բնույթի պատասխանատվություն

Բուհերի մեծ մասում թվային ուսուցման համակարգման պատասխանատվությունն իրականացվում է ոչ ֆորմալ մակարդակով։

Գործառույթները հիմնականում կատարվում են պրոռեկտորի, ՏՀՏ բաժնի կամ ՈԱ կենտրոնի կողմից՝ առանց պաշտոնական փաստաթղթի։

3. Պատասխանատվության բացակայություն կամ մշակում

Մի շարք բուհեր նշել են, որ ներկայումս պատասխանատու մարմին կամ պաշտոն դեռևս չի սահմանվել։

- Օրինակ՝ **ՊԿԱ**, **ԵԹԿՊԻ**, **ՆԳՆ կրթահամալիր**։
- Այս հաստատություններում թվային ուսուցման համակարգման մեխանիզմները ներկայումս գտնվում են վերանայման փուլում՝ կառավարման նոր կառուցվածք ձևավորելու նպատակով։
- Որոշ բուհերում գործընթացն իրականացվում է միայն ամբիոնների կամ ֆակուլտետների մակարդակով։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս.

- Թվային ուսուցման կառավարման պատասխանատվության սահմանման մակարդակը տարբեր բուհերում զգալիորեն տարբերվում է։
- Ոչ ֆորմալ պատասխանատվության գերակշռությունը վկայում է կառավարման համակարգի դեռևս անցումային բնույթի մասին։
- Պատասխանների մեծամասնությունում շեշտադրվում է համագործակցային մոտեցումը՝ ՏՀՏ բաժնի, ՈԱ կենտրոնի և ուսումնամեթոդական վարչության միջև, ինչը ցույց է տալիս համատեղ կառավարման փորձի ձևավորման գործընթաց։

Բաժին 3. Ուսումնական պլանի և դասընթացի մշակում

Թվային ուսուցման մեթոդաբանություն և կիրառվող գործիքներ

Գնահատվել է՝ արդյոք բուհերում առկա են թվային և առցանց ուսուցման իրականացման միասնական մեթոդաբանական մոտեցումներ կամ ուղեցույցներ (օր.՝ ուսուցման ձևաչափերի, գնահատման մեխանիզմների, ուսումնական նյութերի ներկայացման չափորոշիչներ)։

Գծապատկեր 5. Թվային դասընթացների ինտերակտիվ գործիքների կիրառման մակարդակ



Աղյուսակ 7. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	3	**5.45%**	Տեղեկությունը բացակայում է կամ պատասխանողը չի տիրապետում տվյալներին։
1 – Առկա չէ	26	**47.27%**	Թվային ուսուցման ձևաչափեր կամ չափորոշիչներ բուհում սահմանված չեն։
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	15	**27.27%**	Կիրառվում են որոշ ձևաչափեր, սակայն ոչ ֆորմալ՝ ըստ անհրաժեշտության։
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	6	**10.91%**	Գործընթացը փաստաթղթավորված է կամ մշակման փուլում է։
4 – Համակարգային կերպով իրականացվող	5	**9.09%**	Գործում են հաստատված չափորոշիչներ և ձևաչափեր՝ բուհի բոլոր ստորաբաժանումներում։
Ընդհանուր	**55**	**100%**	

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ բուհերի մեծամասնության՝ գրեթե կեսի մոտ (47.27%) թվային ուսուցման չափորոշիչներ կամ ձևաչափեր առայժմ չեն սահմանվել։ Միևնույն ժամանակ, 27.27% բուհերում կիրառվում են որոշ ձևաչափեր ոչ ֆորմալ մակարդակով՝ ըստ ամբիոնների կամ դասախոսների նախաձեռնությունների։ Միայն 9.09% բուհերում համակարգն ամբողջությամբ փաստաթղթավորված է և կիրառվում է ինստիտուցիոնալ մակարդակով։
Այս հարաբերակցությունը վկայում է, որ թվային ուսուցման կառուցվածքային չափորոշիչները դեռևս ձևավորման փուլում են և ամբողջությամբ ներդրված չեն բուհերի մեծ մասում։

Բուհերի բաց հիմնավորումները ցույց են տալիս երեք հիմնական մոտեցում.

1. Առկա են հաստատված փաստաթղթեր կամ հղումներ

Մոտ 10 բուհեր նշել են փաստաթղթային հիմքերի առկայության մասին.

- **Գավառի պետական համալսարան** – «Հեռավար (առցանց) կրթության կազմակերպման կարգ»
- **ՀՊՄՀ** – «Google Classroom և Google Meet հարթակների կիրառման ուղեցույցներ»
- **ԳԿՄԿ** – հաստատված ուղեցույց
- **ՀԱԱՀ**– LMS հարթակում տեղադրված դիդակտիկ ուղեցույցներ

2. Փաստաթղթերի մշակման կամ վերանայման փուլ

Բուհերի զգալի մասն արձանագրել է, որ գործընթացը գտնվում է մշակման փուլում։ Նշված են ձևակերպումներ՝
Այս խումբը կազմում է շուրջ **20–25%** բուհերի՝ ցույց տալով զարգացող գործընթաց։

3. Փաստաթղթերի բացակայություն

Մեծ մասամբ (գրեթե կեսը) բուհերը նշել են փաստաթղթերի բացակայության մասին։ Այս բուհերում գործընթացն իրականացվում է ամբիոնների կամ դասախոսների մակարդակով՝ առանց միասնական չափորոշիչների կամ ձևաչափերի։

Վերլուծությունները ցույց են տալիս.

- Թվային ուսուցման կառուցվածքային չափորոշիչների առկայությունը դեռևս սահմանափակ է. շուրջ 75% բուհեր կամ չունեն հաստատված փաստաթուղթ, կամ գործում են ոչ ֆորմալ սկզբունքով։
- Փաստաթղթավորված և համակարգային մոտեցումներ ունեն ընդամենը 9.09% բուհեր, որոնք հիմնականում խոշոր պետական հաստատություններ են։

Հաստատված մեխանիզմների և գործիքների (օր.՝ մուլտիմեդիա և այլ ինտերակտիվ գործիքներ) կիրառում, որոնք ապահովում են ուսանողների ակտիվ մասնակցությունն ու ներառականությունը թվային դասընթացներում

Հարցաշարի շրջանակում գնահատվել է՝ բուհերում որքանով են ներդրված և կիրառվում թվային ուսուցման մեխանիզմներ և գործիքներ, որոնք խթանում են ուսանողների ակտիվ մասնակցությունն ու ներառականությունը թվային և առցանց դասընթացներում։

Գծապատկեր 6. Թվային դասընթացների ինտերակտիվ գործիքների կիրառման մակարդակ



Աղյուսակ 8. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	4	**7.27%**	Տեղեկությունը անհայտ է կամ պատասխանողը չի տիրապետում տվյալներին:
1 – Առկա չէ	11	**20.00%**	Թվային ուսուցման մեխանիզմներ և գործիքներ բուհում բացակայում են:
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	25	**45.45%**	Գործիքները կիրառվում են անհատական նախաձեռնությամբ կամ ըստ անհրաժեշտության:
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	2	**3.64%**	Գործընթացը փաստաթղթավորված է, սակայն դեռևս նոր և սահմանափակ կիրառվող:
4 – Համակարգային կերպով իրականացվող	13	**23.64%**	Գործում են հաստատված մեխանիզմներ, որոնք ապահովում են ուսանողների ակտիվ մասնակցություն:
Ընդհանուր	**55**	**100%**	

Բուհերի մեծ մասը (45.45%) նշել է, որ թվային և ինտերակտիվ մեխանիզմների կիրառում իրականացվում է ոչ ֆորմալ մակարդակով՝ ըստ դասախոսների նախաձեռնությունների:

Միայն 23.64% բուհերում գործիքները կիրառվում են համակարգային ձևով՝ ներառված լինելով ուսումնական գործընթացի կազմակերպման ընդհանուր համակարգում: Միևնույն ժամանակ, 20% բուհեր նշել են, որ նման գործիքներ առկա չեն, իսկ 7.27% չեն ունեցել բավարար տեղեկություն հարցին պատասխանելու համար:

Հիմնավորումների հատվածում ներկայացված են բուհերի կողմից կիրառվող գործիքների և մեխանիզմների օրինակներ: Դրանք կարելի է խմբավորել չորս հիմնական ուղղությամբ.

1. Առկա և կիրառվող մեխանիզմներ (համակարգային կիրառում)

Մի շարք բուհեր փաստում են, որ ունեն տեխնիկական հագեցվածություն և մուլտիմեդիա հարթակներ.

- **ԲՊՀ** – Microsoft TEAMS, LMS (elearning.brusov.am), ինչպես նաև ՄեդիաԼաբ ուսումնաարտադրական լաբորատորիա և առցանց ու անցանց կրթության կենտրոն:
- **ՀՊՄՀ** – առկա են ինտերակտիվ լսարաններ, էլեկտրոնային գրատախտակներ, ուսանողների համար նախատեսված առցանց հարթակներ:
- **Գորիսի պետական համալսարան** – կիրառվում են գործող կառուցակարգեր թվային դասընթացների ժամանակ՝ ըստ առարկայի բնույթի:
- **Գավառի պետական համալսարան** – հաստատված է «Հեռավար կրթության կազմակերպման կարգ», որը ներառում է մուլտիմեդիա գործիքների կիրառման դրույթներ:

2. Ոչ ֆորմալ կիրառում և դասախոսների անհատական նախաձեռնություններ

Մեծ թվով բուհեր արձանագրել են, որ գործիքների կիրառությունը տարբեր է՝ կախված դասախոսից կամ առարկայից:

Ամենատարածված գործիքներն են՝ Microsoft Teams, Zoom, Google Classroom, PowerPoint, Kahoot:

3. Մշակման փուլում գտնվող գործընթացներ

Մի քանի բուհեր նշել են, որ մասնակցում են զարգացման ծրագրերի կամ աշխատում են նոր մեխանիզմների վրա:

4. Գործիքների բացակայություն կամ սահմանափակ կիրառում

Մոտ հինգերորդ մասը նշում է, որ առկա չեն հաստատված մեխանիզմներ կամ կիրառվող գործիքներ:

Հիմնավորումների վերլուծությունը ցույց է տալիս.

- Բուհերի մեծամասնությունը դեռևս գտնվում է ինտերակտիվ մեխանիզմների կիրառման ձևավորման փուլում. գործողությունները հիմնականում անհատական են:
- Քիչ բուհերում է (մոտ 24%) ինտերակտիվ գործիքների կիրառումը դարձել հաստատված մեխանիզմ՝ ներառված որակի ապահովման գործընթացում:
- Թվային և մուլտիմեդիա գործիքների կիրառությունը հիմնականում ապահովվում է LMS հարթակների միջոցով (Teams, Moodle, Google Classroom):
- Գավառի, ԲՊՀ, ԵՊՀ և Ագրարային համալսարաններում նկատվում են առավել համակարգային մոտեցումներ:

Թվային դասընթացների որակի և արդիականության պարբերաբար վերանայման գործընթաց
Հարցաշարի միջոցով գնահատվել է՝ բուհում գործո՞ւմ է արդյոք հաստատված մեխանիզմ կամ գործընթաց, որի միջոցով պարբերաբար վերանայվում է թվային դասընթացների որակը և արդիականությունը: Հաջորդող հիմնավորման հարցում բուհերը նշել են առկա փաստաթղթերը, ձևաչափերը կամ ընթացակարգերը:

Գծապատկեր 7. Թվային դասընթացների որակի պարբերական վերանայման մեխանիզմների առկայություն



Աղյուսակ 9. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	3	**5.45%**	Տեղեկությունը անհայտ է կամ պատասխանողը չի տիրապետում տվյալներին:
1 – Առկա չէ	19	**34.55%**	Բուհում դեռևս հաստատված գործընթաց կամ մեխանիզմ առկա չէ:
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	13	**23.64%**	Վերանայումն իրականացվում է անհատական կամ ամբիոնային մակարդակով:
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	4	**7.27%**	Գործընթացը փաստաթղթավորված է կամ մշակման փուլում է:
4 – Համակարգային կերպով իրականացվող	16	**29.09%**	Գործում են հաստատված ընթացակարգեր՝ պարբերական վերանայման համար:
Ընդհանուր	**55**	**100%**	

Վերլուծությունը ցույց է տալիս, որ բուհերի մոտ մեկ երրորդը 34.55% չունի թվային դասընթացների որակի պարբերական վերանայման հաստատված գործընթաց։ Միևնույն ժամանակ 29.09% բուհերում նման մեխանիզմները արդեն գործում են համակարգային ձևով, իսկ մոտ 24% բուհերում գործընթացն իրականացվում է ոչ ֆորմալ մակարդակով՝ ամբիոնների կամ դասախոսների նախաձեռնությամբ։
Սա վկայում է այն մասին, որ դասընթացների որակի պարբերական վերանայման համակարգերը դեռևս զարգացման փուլում են, սակայն մի շարք բուհեր արդեն ունեն մեթոդական և փաստաթղթային հիմքեր՝ այդ գործընթացը համակարգելու համար։

Բուհերի կողմից ներկայացված հիմնավորումները կարելի է խմբավորել երեք հիմնական ուղղությամբ՝

1. Համակարգային և փաստաթղթավորված գործընթացներ

Այս խմբում ընդգրկված են բուհեր, որտեղ առկա են հաստատված մեխանիզմներ և կարգեր՝

- **Շիրակի պետական համալսարան** – մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման հաստատված քաղաքականություն։
- **Գավառի պետական համալսարան** – «Դասալսումների կազմակերպման, քննարկման և գնահատման կարգ»՝ կիրառելի նաև թվային միջավայրում։
- **Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան**– մշտադիտարկման պլան, ցուցիչների փաթեթ, ամբիոնային արձանագրություններ և վերապատրաստման ծրագրեր (2022–2025թթ. ՌԾ)։
- **Գորիսի պետական համսալարան** – ուսանողների և դասախոսների բավարարվածության հարցաթերթեր՝ առցանց ձևաչափով (Google Forms)։
- **Հայաստանի ազգային ագրարային համալսարան**– ուսանողների բավարարվածության գնահատման ձևաչափեր, որոնք կիրառվում են e-learning հարթակում։

2. Մշակման փուլում գտնվող կամ ոչ ֆորմալ գործընթացներ

Բուհերը նշել են, որ առկա են նախաձեռնություններ կամ նախագծեր։
Վերանայման գործընթացները հիմնականում իրականացվում են ոչ պարբերաբար՝ ըստ անհրաժեշտության կամ ամբիոնների նախաձեռնությամբ։

3. Գործընթացների բացակայություն

Շատ բուհեր նշել են, որ առկա չէ որևէ հաստատված կարգ կամ մեխանիզմ։ Այս խմբում վերանայումը հիմնականում իրականացվում է ուսումնական արդյունքների ընդհանուր վերլուծության մակարդակում՝ առանց առանձին մեթոդաբանության։

Վերլուծությունները ցույց են տալիս.

- Թվային դասընթացների որակի և արդիականության վերանայման գործընթացը բուհերի մոտ դեռևս անհամաչափ զարգացած է. մոտ մեկ երրորդը չունի համակարգված մեխանիզմներ։
- Շուրջ 30% բուհեր արդեն ներդրել են պարբերական վերահսկման և վերանայման գործիքակազմ՝ ներառյալ դասալսումներ, բավարարվածության հարցումներ, ամբիոնային վերլուծություններ։

- Խոշոր բուհերն ավելի հաճախ ունեն փաստաթղթավորված մեխանիզմներ՝ ներառված որակի ապահովման ընդհանուր համակարգում:
- Փոքր բուհերում գործընթացը հիմնականում գտնվում է մշակման կամ փորձնական փուլում:

Թվային կամ առցանց նոր դասընթացների որակի գնահատման հստակ մեխանիզմների առկայություն (օր.՝ գործընկերային գնահատում, վերանայում, հաստատում ղեկավար օղակի կողմից և այլն)

Հարցաշարի շրջանակում գնահատվել է՝ բուհերում կիրառվում են արդյոք հաստատված մեխանիզմներ և գործիքներ նոր թվային կամ առցանց դասընթացների որակի գնահատման, վերանայման կամ հաստատման համար:

Գծապատկեր 8. Առցանց գնահատման արժանահավատության ապահովման մեխանիզմների առկայություն



Աղյուսակ 10. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	3	**5.45%**	Տեղեկությունը անհայտ է կամ պատասխանողը չի տիրապետում տվյալներին:
1 – Առկա չէ	22	**40.00%**	Թվային կամ առցանց դասընթացների որակի գնահատման մեխանիզմներ բուհում բացակայում են:
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	18	**32.73%**	Գործընթացը իրականացվում է ոչ ֆորմալ՝ ըստ անհրաժեշտության կամ դասախոսների նախաձեռնությամբ:

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	1	**1.82%**	Գործընթացը փաստաթղթավորված է կամ մշակման փուլում է:
4 – Համակարգային կերպով իրականացվող	11	**20.00%**	Գործում են հաստատված մեխանիզմներ՝ գործընկերային գնահատման կամ վերանայման ձևաչափերով:
Ընդհանուր	**55**	**100%**	

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ բուհերի մեծ մասում (72.73%) նոր թվային դասընթացների որակի գնահատման գործընթացները իրականացվում են մասնակի կամ բացակայում են, 40% բուհերում գործընթացը բացակայում է, 32.73% բուհերում այն իրականացվում է ոչ ֆորմալ ձևով՝ առանց հաստատված մեթոդաբանության:
Միայն 20% բուհերում են գործում հաստատված մեխանիզմներ կամ փաստաթղթային հիմքեր, որոնք ներառում են գործընկերային գնահատում, ամբիոնային վերանայում կամ ղեկավար օղակի հաստատում:

Վերլուծությունները ցույց են տալիս .

- Թվային կամ առցանց դասընթացների որակի գնահատման համակարգային մոտեցում ունի միայն բուհերի 20%-ը, ինչը վկայում է մեխանիզմների ձևավորման ընթացիկ փուլի մասին:
- Շուրջ մեկ երրորդ բուհերում (32.73%) առկա են միայն ոչ ֆորմալ կամ անհատական փորձեր՝ առանց փաստաթղթային ամրագրումների:
- 40% բուհերում նման գործընթացներ ընդհանրապես չկան, ինչը բացահայտում է ինստիտուցիոնալ մակարդակում այս ուղղության թերակատարությունը:
- Մի շարք բուհեր (ԳՊՀ, ՀՊՄՀ, ՇՊՀ) արդեն իրականացնում են պարբերական վերանայումներ և գնահատումներ՝ ներառելով ուսանողների և դասախոսների հետադարձ կապի մեխանիզմներ:

Բաժին 4. Դասավանդում և ուսուցում

Դիդակտիկ ուղեցույցներ թվային ուսուցման համար

Հետազոտության շրջանակում գնահատվել է՝ բուհում կա՞ն դիդակտիկ ուղեցույցներ, որոնք խթանում են թվային ուսուցման տարբեր ձևերի (ակտիվ, սինխրոն/ասինխրոն և այլն) կիրառումը: Հաջորդող հիմնավորման հարցում բուհերը տվել են փաստաթղթերի/հղումների օրինակներ կամ նշել են դրանց բացակայությունը:

Գծապատկեր 9. Թվային ուսուցման գործընթացում դիդակտիկ ուղեցույցների կիրառում



Աղյուսակ 11. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	5	**9.09%**	Տեղեկությունը հայտնի չէ
1 – Առկա չէ	26	**47.27%**	Դիդակտիկ ուղեցույցներ չկան
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	11	**20.00%**	Կիրառվում են անհատական/ամբիոնային մակարդակով
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	5	**9.09%**	Գործընթացը ձևակերպվում է, դեռ նոր է
4 – Համակարգային կերպով իրականացվող	8	**14.55%**	Պաշտոնապես հաստատված և կիրառվող ուղեցույցներ
Ընդհանուր	**55**	**100%**	

Բուհերի գրեթե կեսը (47.27%) նշում է, որ դիդակտիկ ուղեցույցներ չկան, իսկ 20.00%-ում դրանք կիրառվում են ոչ ֆորմալ ձևով։ Համակարգային, հաստատված ուղեցույցներ ունի 14.55% բուհեր։ Պատկերը ցույց է տալիս, որ մեթոդաբանական հիմքերը դեռևս ձևավորման փուլում են։

Պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս.

- Դիդակտիկ ուղեցույցների ինստիտուցիոնալացումը ցածր է. 66.36% բուհերում կա կամ բացակայություն (47.27%), կամ ոչ ֆորմալ կիրառում (20.00%)։
- Համակարգային կիրառումը դեռ սահմանափակ է (14.55%), սակայն առկա են կոնկրետ դեպքեր՝ կանոնակարգերով/ուղեցույցներով (ԳՊՀ, ԳորՊՀ, ՀՊՄՀ, ՀԱԱՀ, ԳԿՄԿ և այլն)։
- «Փաստաթղթավորված/մշակման փուլում» ընտրությունը (9.09%) վկայում է ընթացիկ ինստիտուցիոնալացման շարժի մասին, բայց հաջորդական կիրառումը դեռ չի կայունացել։

Հաստատված չափորոշիչների առկայություն, որոնք սահմանում են առցանց դասընթացներում ուսանողների հետ դասախոսների հաղորդակցության պահանջվող մակարդակը

Գնահատվել է՝ բուհերում կան արդյոք հաստատված չափորոշիչներ կամ կանոնակարգեր, որոնք սահմանում են դասախոս–ուսանող հաղորդակցության պահանջները առցանց միջավայրում (օրինակ՝ արձագանքման առավելագույն ժամկետներ, տեղեկատվության տրամադրման պարբերականություն, հետադարձ կապի ձևեր և այլն)։

Գծապատկեր 10. Առցանց դասընթացներում ուսանողների հետ դասախոսների հաղորդակցության պահանջվող մակարդակի գնահատման հաստատված չափորոշիչների առկայություն



Աղյուսակ 12. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	3	**5.45%**	Տեղեկությունը անհայտ է կամ պատասխանողը չի տիրապետում տվյալներին։
1 – Առկա չէ	24	**43.64%**	Բուհում բացակայում են հաստատված չափորոշիչներ դասախոս–ուսանող հաղորդակցության վերաբերյալ։
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	14	**25.45%**	Գործընթացը իրականացվում է անհատական կամ ամբիոնային մակարդակով՝ առանց ամրագրված կանոնակարգերի։
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	6	**10.91%**	Կանոնակարգերի մշակման կամ վերանայման գործընթացն ընթացքի մեջ է։
4 – Համակարգային կերպով իրականացվող	8	**14.55%**	Գործում են հաստատված չափորոշիչներ, որոնք կիրառվում են համակարգային ձևով։
Ընդհանուր	**55**	**100%**	

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ բուհերի մոտ կեսը (43.64%) չունի հաստատված չափորոշիչներ առցանց ուսուցման հաղորդակցման կարգի վերաբերյալ։ Միևնույն ժամանակ, 25.45% բուհերում առկա են ոչ ֆորմալ փորձեր՝ դասախոսների կամ ամբիոնների մակարդակով։ Միայն 14.55% բուհերում նման չափորոշիչները գործում են հաստատված և համակարգային ձևով։
Այս պատկերը վկայում է, որ առցանց միջավայրում հաղորդակցության որակի և պարբերականության կարգավորումը դեռևս ինստիտուցիոնալ մակարդակով ամբողջությամբ ներդրված չէ։

Բուհերի բաց պատասխանների հիման վրա առանձնանում են երեք հիմնական մոտեցում.

1. **Համակարգային մոտեցում ունեցող բուհեր (մոտ 15%)**

Մի քանի բուհեր նշել են հստակ հաստատված փաստաթղթեր կամ գործող կարգեր՝

- **ԳՊՀ**– «Բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և գնահատման կարգ» և «Հեռավար կրթության կազմակերպման կարգ»։

- **ՀՊՄՀ** – պարբերաբար քննարկումներ ռեկտորատի և ամբիոնների նիստերում՝ առցանց հաղորդակցման պարբերականության և արձագանքման ժամկետների շուրջ:
- **ՀԱԱՀ**– e-learning հարթակների (elearning.anau.am) և ներքին կարգերի միջոցով ապահովվում է հաղորդակցման պարբերականությունը:

2. Ոչ ֆորմալ և մասնակի կիրառվող մոտեցումներ (մոտ 25%)

Այս բուհերում արձագանքման և հաղորդակցության չափանիշները սահմանվում են անհատական մակարդակով:

3. Փաստաթղթերի բացակայություն կամ մշակման փուլ (մոտ 45%)

Բուհերի զգալի մասը նշել է, որ նման կարգեր առայժմ չկան: Այս բուհերում հաղորդակցման ընթացքը հիմնականում կարգավորվում է դասախոսների և ուսանողների անհատական պայմանավորվածություններով:

Վերլուծությունները ցույց են տալիս.

- **Հաստատված չափորոշիչներ** առկա են սահմանափակ թվով բուհերում՝ մոտ **14–15%**:
- **Ոչ ֆորմալ փորձեր** կիրառվում են մոտ **25%** բուհերում, սակայն առանց միասնական կարգավորումների:
- **Գործընթացների բացակայությունը (43.64%)** վկայում է, որ առցանց հաղորդակցության որակի ապահովումը դեռևս չի դարձել որակի կառավարման բաղկացուցիչ մաս:

Առցանց դասընթացներում ուսանողների միջև համագործակցության ապահովման համար (օր.՝ խմբային նախագծեր, գործընկերային գնահատում, քննարկումներ) ներդրված մեխանիզմներ

Գնահատվել է՝ բուհերում կիրառվո՞ւմ են մեխանիզմներ, որոնք խթանում են ուսանողների համագործակցությունը թվային և առցանց ուսուցման միջավայրում (օրինակ՝ խմբային նախագծեր, գործընկերային գնահատում, քննարկումներ և այլ ինտերակտիվ ձևաչափեր):

Գծապատկեր 11. Առցանց դասընթացներում ուսանողների միջև համագործակցության ապահովման մեխանիզմների առկայություն



Աղյուսակ 13. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	4	**7.27%**	Տեղեկությունը անհայտ է կամ պատասխանողը չի տիրապետում տվյալներին։
1 – Առկա չէ	16	**29.09%**	Համագործակցության հստակ մեխանիզմներ բուհում բացակայում են։
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	29	**52.73%**	Գործընթացը իրականացվում է անհատական մակարդակով՝ ըստ դասախոսների նախաձեռնության։
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	1	**1.82%**	Կանոնակարգերը ձևակերպման փուլում են։
4 – Համակարգային կերպով իրականացվող	5	**9.09%**	Գործում են հաստատված մեխանիզմներ կամ քաղաքականություն։
Ընդհանուր	**55**	**100%**	

Տվյալները ցույց են տալիս, որ ուսանողների համագործակցության ապահովման գործընթացն առցանց ուսուցման միջավայրում հիմնականում ձևավորվում է ոչ ֆորմալ մակարդակով.

- **52.73% բուհերում** համագործակցությունն իրականացվում է դասախոսների նախաձեռնությամբ կամ առանձին խմբային առաջադրանքների միջոցով։
- **29.09% բուհեր** նշել են, որ նման մեխանիզմներ առկա չեն։
- Միայն **9.09% բուհեր** ունեն հաստատված կամ համակարգային մոտեցում, որը ներառում է գործընկերային գնահատում, խմբային նախագծեր և քննարկումների ձևաչափեր։

Այս պատկերը վկայում է, որ ուսանողների փոխգործակցության մշակույթը առցանց միջավայրում դեռևս ձևավորման փուլում է և հիմնականում պայմանավորված է դասախոսների նախաձեռնությամբ։

Բուհերի հիմնավորումների հիման վրա կարելի է առանձնացնել երեք հիմնական խմբեր.

1. Համակարգային կամ հաստատված մոտեցում ունեցող բուհեր (մոտ 9%)

- **ԳՊՀ** – «Հեռավար (առցանց) կրթության կազմակերպման կարգը» ներառում է ուսանողների համագործակցության ձևաչափեր։
- **ՀՊՄՀ** – ուսանողները մասնակցում են համատեղ նախագծերին, մրցույթներին և խմբային աշխատանքներին Google Drive-ի, Meet-ի միջոցով։

- **ՀԱԱՀ**– LMS համակարգի միջոցով իրականացվում է ուսանողների համատեղ աշխատանք:
- **ԵՊԲՀ** – ներքին կանոնակարգեր առկա են էլեկտրոնային ուսուցման կազմակերպման վերաբերյալ:

2. Ոչ ֆորմալ կամ դասախոսների նախաձեռնությամբ իրականացվող մոտեցումներ (մոտ 53%)

Բուհերի մեծ մասը նշել է, որ համագործակցությունն ապահովվում է առանձին դեպքերում: Այս բուհերում համագործակցության ձևաչափերը հիմնականում ներառված են առարկայական նկարագրերում կամ գնահատման տարրերում:

3. Բացակայություն կամ փաստաթղթային հիմքի բացակայություն (մոտ 30%)

Շատ բուհեր նշել են, որ նման մեխանիզմներ չկան կամ չեն կիրառվում պարբերաբար: Որոշ դեպքերում համագործակցությունը սահմանափակվում է լսարանում իրականացվող նախագծերով:

Վերլուծությունները ցույց են տալիս.

- **Ամենատարածված ձևը** ուսանողների համագործակցության համար ոչ ֆորմալ խմբային աշխատանքներն են և դասախոսների կողմից կազմակերպված քննարկումները:
- **Հաստատված մեխանիզմներ** առկա են սահմանափակ թվով բուհերում՝ հիմնականում խոշոր պետական հաստատություններում:
- **Թվային հարթակների (Google Workspace, Teams, Moodle)** կիրառումն ապահովում է համագործակցության տեխնիկական հիմքը, սակայն ոչ մեթոդաբանական հստակեցումը:

Սահմանված ընթացակարգեր՝ ապահովելու թվային բովանդակության հասանելիությունը բոլոր ուսանողների, այդ թվում՝ հատուկ կարիք ունեցողների համար

Գնահատվել է՝ բուհերում ներդրված են արդյոք հստակ ընթացակարգեր կամ մեխանիզմներ, որոնք ապահովում են թվային կրթական բովանդակության հասանելիությունը բոլոր ուսանողների համար՝ ներառյալ հատուկ կարիք ունեցողների:

Գծապատկեր 12. Թվային բովանդակության հասանելիությունը բոլոր ուսանողների համար ապահովելու ընթացակարգեր



Աղյուսակ 14. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	**Պատասխանների քանակ**	**Տոկոս**	**Բնութագիր**
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	5	**9.09%**	Տեղեկությունը անհայտ է կամ պատասխանողը չի տիրապետում տվյալներին։
1 – Առկա չէ	23	**41.82%**	Բուհում բացակայում են հաստատված ընթացակարգեր թվային բովանդակության հասանելիության ապահովման համար։
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	17	**30.91%**	Կիրառվում են անհատական կամ ըստ անհրաժեշտության լուծումներ։
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	2	**3.64%**	Կանոնակարգերի մշակման գործընթացն ընթացքի մեջ է։
4 – Համակարգային կերպով իրականացվող	8	**14.55%**	Գործում են հաստատված ընթացակարգեր և ապահովվում է ներառական մատչելիություն։
Ընդհանուր	**55**	**100%**	

Արդյունքները ցույց են տալիս, որ բուհերի մեծ մասում թվային բովանդակության հասանելիության ապահովման ընթացակարգերը դեռևս ամբողջությամբ ձևավորված չեն։

- 41.82% բուհերում նման ընթացակարգեր առկա չեն,
- 30.91% բուհերում դրանք իրականացվում են ոչ ֆորմալ՝ ըստ անհրաժեշտության կամ կոնկրետ դեպքերի։
- Միայն 14.55% բուհեր ունեն հաստատված մեխանիզմներ կամ քաղաքականություն, որը ներառում է նաև հատուկ կարիք ունեցողների համար նախատեսված հասանելիության լուծումներ։

Այս բաշխումը վկայում է, որ ներառական թվային միջավայրի ձևավորումը դեռևս առկա է որպես զարգացող ուղղություն։

Հիմնավորումների վերլուծությունը ցույց է տալիս մի քանի հիմնական միտում.

1. Համակարգային մոտեցում ունեցող բուհեր (մոտ 14%)

- **Գավառի պետական համալսարան** – «Հեռավար կրթության կազմակերպման կարգը» ներառում է հասանելիության ապահովման դրույթներ։

- **ՀՊՄՀ** – զարգացման ռազմավարական ծրագիր 2020–2025, որտեղ նշվում են թվային մատչելիության ուղղությունները։
- **ՀԱԱՀ** – e-learning հարթակներում ապահովված են տեխնիկական պայմաններ հասանելիության համար։

2. Ոչ ֆորմալ կամ անհատական մոտեցումներ (մոտ 31%)

Բուհերը հիմնականում արձանագրում են, որ հասանելիությունն ապահովվում է ըստ պահանջի։

3. Բացակայություն կամ ձևավորման փուլ (մոտ 42%)

Բազմաթիվ բուհեր նշել են, որ ընթացակարգեր սահմանված չեն։

Վերլուծությունները ցույց են տալիս.

- Թվային բովանդակության հասանելիության քաղաքականությունները դեռևս ամբողջությամբ ձևավորված չեն՝ մոտ կես բուհեր (41.82%) չունեն հստակ կարգեր։
- Ընդամենը 8 բուհ (14.55%) ապահովում են համակարգային ներառականություն՝ ներառյալ հատուկ կարիք ունեցողների համար հարմարեցված լուծումներ։
- Մոտ 31% բուհերում գործում են անհատական մոտեցումներ կամ մասնակի ապահովում։

Դասավանդման արդյունավետության և ուսանողների ներգրավվածության գնահատումը՝ ներառված դասընթացների և ծրագրերի պարբերական վերանայման գործընթացներում

Գնահատվել է՝ բուհում արդյո՞ք դասավանդման արդյունավետության և ուսանողների ներգրավվածության գնահատումը ներառված է դասընթացների/ծրագրերի պարբերական վերանայման հաստատված գործընթացներում։

Գծապատկեր 13. Դասավանդման արդյունավետության և ուսանողների ներգրավվածության գնահատում



Աղյուսակ 15. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	2	**3.64%**	Տեղեկությունը անհայտ է
1 – Առկա չէ	13	**23.64%**	Պարբերական վերանայման գործընթացում կարգ չի կիրառվում
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	8	**14.55%**	Կիրառվում է անհատական կամ ամբիոնային նախաձեռնությամբ
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	5	**9.09%**	Գործընթացը ձևակերպման փուլում է
4 – Համակարգային կերպով իրականացվող	27	**49.09%**	Գործում են հաստատված մեխանիզմներ և պարբերական վերանայում
Ընդհանուր	**55**	**100%**	

Տվյալները ցույց են տալիս հարաբերականորեն բարձր ինստիտուցիոնալացում. գրեթե կեսը՝ 49.09%, հաստատել է, որ դասավանդման արդյունավետության և ուսանողների ներգրավվածության գնահատումը ներառված է պարբերական վերանայման գործընթացներում: Միևնույն ժամանակ 23.64% բուհերում նման մոտեցումներ դեռ առկա չեն, իսկ 14.55%–ում դրանք իրականացվում են ոչ ֆորմալ հիմքով:

Հարցման վերլուծությունը ցույց է տալիս հետևյալ պատկերը.

1) Համակարգային/փաստաթղթավորված մոտեցումներ (տարածված)

- **ԳՊՀ** – «Դասալսումների կազմակերպման, քննարկման և գնահատման կարգ», ինչպես նաև ուսանողական հարցումների կանոնակարգ (պարբերական հարցումներ):
- **ՇՊՀ** – կրթական ծրագրերի մշտադիտարկման, գնահատման/բողոքարկման և վերանայման կարգեր:
- **ՀՊՄՀ** – Ռազմավարական ծրագիր (2020–2025, 2022–2025), ամբիոնային և ռեկտորատային պարբերական քննարկումներ, ՊԴԿ վերապատրաստումներ, ուսանողական բավարարվածության հարցումներ:
- **Մի շարք այլ բուհեր** – պարբերական ուսանողական հարցումներ (յուրաքանչյուր կիսամյակ), LMS-ով հավաքագրված հետադարձ կապի վերլուծություն:
- **ՈԱ քաղաքականություն / ծրագրերի գնահատման ու վերանայման կարգ՝** մի շարք պատասխաններում որպես հիմնական հիմք:

2) Ոչ ֆորմալ կիրառում կամ մշակման փուլ

- Մի քանի հաստատություններում գնահատումն իրականացվում է առանձին ստորաբաժանման (օր.՝ ՈԳԱ/ՈԱ կենտրոն) կողմից՝ առանց ամբողջական կարգի։

3) Բացակայություն կամ մասնակի կիրառություն

- Մնացած բուհերում գործընթացը դեռ չի ինտեգրվել որակի ապահովման ցիկլի մեջ։

Բաժին 5. Դասախոսական կազմի վերապատրաստում և օժանդակում

Պարտադիր վերապատրաստումներ դասախոսների համար թվային ուսուցման ձևերի և տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ (մինչ առցանց դասավանդման իրականացումը)

Գնահատվել է՝ բուհում իրականացվո՞ւմ են պարտադիր վերապատրաստումներ դասախոսների համար՝ առցանց/խառը/հիբրիդային ուսուցում, թվային բովանդակության ստեղծում, խաղայնացում և նման թեմաներով, նախքան նրանց առաջին առցանց դասավանդումը։

Գծապատկեր 14. Պարտադիր վերապատրաստումներ դասախոսների համար թվային ուսուցման ձևերի և տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ



Աղյուսակ 16. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	4	**7.27%**	Տեղեկությունը անհայտ է
1 – Առկա չէ	13	**23.64%**	Պարտադիր վերապատրաստումներ չկան
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	19	**34.55%**	Կազմակերպվում են, բայց ոչ պարտադիր /

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
			անհատական նախաձեռնությամբ
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	3	**5.45%**	Կանոնակարգը ձևակերպման փուլում է
4 – Համակարգային կերպով իրականացվող	16	**29.09%**	Կան հաստատված և պարտադիր վերապատրաստումներ
Ընդհանուր	**55**	**100%**	

Արդյունքները ցույց են տալիս, որ ոլորտը գտնվում է անցումային փուլում. պարտադիր վերապատրաստումներ ունեն մոտ 29.09% բուհերը, իսկ ամենամեծ բաժինը (34.55%) գործնականում իրականացնում է վերապատրաստումներ ոչ ֆորմալ/ըստ անհրաժեշտության։ 23.64% բուհերում պարտադիր վերապատրաստումներ առհասարակ չկան։
Վերլուծությունները ցույց են տալիս.

1) Համակարգային/պաշտոնապես ձևակերպված մոտեցումներ (մոտ 29%)

- **ԲՊՀ** – ՊԴ կազմի վերապատրաստման կարգ։
- **ՀԱՊՀ** –համապատասխան քաղաքականություն, վերապատրաստման կենտրոնի ընթացակարգեր։
- **ՀՊՄՀ** – պարբերական վերապատրաստումներ Google Classroom/Meet, էլ. փաթեթների պատրաստում, մեթոդական սեմինարներ, ռեկտորատի/ամբիոնների համակարգում։

2) Ոչ ֆորմալ կամ մասամբ հաստատված պրակտիկա (մոտ 35%)

- Վերապատրաստումներ իրականացվում են ամբիոնների, ՈԱ կենտրոնների կամ SS բաժինների կողմից՝ առանց պարտադիր պահանջի։
- Նշվում են միջազգային համագործակցությունների արդյունքում կազմակերպված վերապատրաստումներ՝ Erasmus+, ՆԱՏՕ գործընկերներ, ինչպես նաև ներքին աշխատաժողովներ/մեթոդական հավաքներ։

3) Բացակայություն կամ մշակման փուլ (մոտ 24% + 5%)

- Մի շարք բուհերում կան «կարգի նախագծեր» կամ «դասախոսների վերապատրաստման նոր կարգի որոշ դրույթներ»՝ դեռևս չգործող պարտադիր պահանջով։

Դասախոսների շարունակական մասնագիտական զարգացման հնարավորություններ թվային ուսուցման ուղղությամբ

Գնահատվել է՝ բուհերում դասախոսներին հասանելի՞ են շարունակական մասնագիտական զարգացման և վերապատրաստման հնարավորություններ թվային ուսուցման ոլորտում՝ ներառյալ սեմինարներ, առցանց դասընթացներ, փորձի փոխանակման հարթակներ և նման նախաձեռնություններ։

Գծապատկեր 15. Դասախոսների շարունակական մասնագիտական զարգացման հնարավորություններ թվային ուսուցման ուղղությամբ



Աղյուսակ 17. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	5	**9.09%**	Տեղեկությունը անհայտ է
1 – Առկա չէ	13	**23.64%**	Չկան շարունակական մասնագիտական զարգացման ծրագրեր կամ վերապատրաստման հարթակներ
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	16	**29.09%**	Գործում են ոչ ֆորմալ ծրագրեր, հիմնականում անհատական նախաձեռնությամբ
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	3	**5.45%**	Մշակվում են կամ ձևակերպվում են նոր մոտեցումներ
4 – Համակարգային կերպով իրականացվող	18	**32.73%**	Գործում են հաստատված շարունակական վերապատրաստման և աջակցության համակարգեր
Ընդհանուր	**55**	**100%**	

Արդյունքները ցույց են տալիս, որ շուրջ ⅓ բուհերում (32.73%) գործում են հաստատված, շարունակական վերապատրաստման և աջակցության մեխանիզմներ, որոնք ընդգրկում են

տարբեր ձևաչափեր՝ առցանց դասընթացներ, սեմինարներ, մեթոդական քննարկումներ և միջազգային համագործակցություններ։
Մյուս կողմից՝ մոտ 29.09% բուհերում այդ փորձը կիրառվում է ոչ ֆորմալ ձևով՝ առանց ինստիտուցիոնալ կառավարման։
Միաժամանակ 23.64% բուհեր նշում են, որ նման հնարավորություններ առհասարակ չկան։
Վերլուծությունները ցույց են տալիս հետևյալ պատկերը.

1. Համակարգային մոտեցումներ (մոտ 33%)

- **ՀՊՄՀ** – լայնածավալ վերապատրաստումներ Google Classroom և Google Meet հարթակներում, մեդիագրագիտության և թվային մեթոդների թեմաներով։
- **ԲՊՀ** – ՊԴ կազմի վերապատրաստման կարգ։
- **ԳՊՀ** – էլեկտրոնային ուսուցման համակարգ (learn.gsu.am), հեռավար ուսուցման հարթակ և պարբերական սեմինարներ։
- **ՀԱԱՀ** – թվային ուսուցման դասընթացներ՝ ներառյալ առցանց հարթակներ և կարիերայի զարգացման բաժնի կազմակերպած վերապատրաստումներ։

Այս բուհերը պարբերաբար իրականացնում են վերապատրաստումներ, հաճախ ունեն հաստատված քաղաքականություն կամ կայուն արտաքին գործընկերություններ։

2. Ոչ ֆորմալ կամ մասնակի հասանելիություն

- Ակտիվ սեմինարներ, մեթոդական հավաքներ, փորձի փոխանակման հանդիպումներ, որոնք իրականացվում են ամբիոնների կամ ՈԱ կենտրոնների միջոցով։
- SS բաժինների կողմից կազմակերպված ներքին դասընթացներ, առանձին ֆակուլտետների նախաձեռնություններ։
- Հաճախ նշվում է, որ վերապատրաստումները կատարվում են «ըստ անհրաժեշտության» կամ «միջազգային նախագծերի շրջանակում» (օր. Erasmus+ SMARTI, CompIIT, DeSIRe)։

3. Բացակայություն կամ մշակման փուլ

- Նշվում են «առկա չէ», «տվյալ չկա», «մշակման փուլում է» արձագանքները։
- Որոշ բուհեր ունեն միայն ռազմավարական ուղղություն կամ կարգի նախագիծ՝ դեռևս չգործող մեխանիզմներով։

Վերլուծությունները ցույց են տալիս.

- **Դրական միտում.** Թվային ուսուցման շարունակական մասնագիտական զարգացման մշակույթն աստիճանաբար կայանում է. համակարգային մոտեցում ունեցող բուհերի թիվը մոտենում է մեկ երրորդին։
- **Տարածված պրակտիկա.** Բազմաթիվ բուհեր կիրառում են գործընկերային վերապատրաստումներ՝ ամբիոնների կամ SS բաժինների մակարդակով, ինչը լավ հիմք է ինստիտուցիոնալացման համար։
- **Միջազգային ազդեցություն.** Erasmus+ և այլ ծրագրերի շրջանակներում իրականացվող վերապատրաստումները դարձել են հիմնական խթան՝ տեխնոլոգիական և մանկավարժական հմտությունների զարգացման համար։

Տեխնիկական աջակցության ծառայություններ դասախոսների համար թվային ուսումնական նյութերի մշակման գործընթացում

Հարցը նպատակ է ունեցել բացահայտել՝ արդյոք բուհերում դասախոսական կազմին տրամադրվո՞ւմ են տեխնիկական աջակցություն և ծառայություններ (օր.՝ մեդիա նյութերի ձայնագրություն, տեսանյութերի մշակում, տեխնիկական խորհրդատվություն)՝ բարձրորակ թվային դասընթացների և ուսումնական նյութերի մշակման նպատակով:

Գծապատկեր 16. Տեխնիկական աջակցության ծառայություններ դասախոսների համար թվային ուսումնական նյութերի մշակման գործընթացում



Աղյուսակ 18. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	4	**7.27%**	Տեղեկությունը անհայտ է կամ չի կիրառվել
1 – Առկա չէ	9	**16.36%**	Տեխնիկական աջակցության կառուցակարգեր չկան
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	23	**41.82%**	Աջակցությունը տրամադրվում է անհատական կամ ամբիոնային մակարդակով՝ առանց հաստատված ընթացակարգի
3- Փաստաթղթավորված / մշակման փուլում	2	**3.64%**	Գործընթացը ձևակերպման փուլում է
4 Համակարգային կերպով իրականացվող	17	**30.91%**	Տրամադրվում է հաստատված կարգով կամ SS/մեդիա ստորաբաժանումների միջոցով
Ընդհանուր	**55**	**100%**	

Բուհերի ավելի քան 70%-ը որևէ կերպ ապահովում է դասախոսներին տեխնիկական օժանդակությամբ, սակայն դրանց մեծ մասը իրականացվում է ոչ ֆորմալ ձևաչափով: Միայն

մոտ մեկ երրորդը (30.91%) ունի հաստատված, համակարգային մոտեցում՝ ներառյալ մեդիալաբորատորիաներ, SS բաժիններ և մեդիա ծառայություններ։ Միաժամանակ 16.36% բուհերում նման ծառայություններ առհասարակ չկան։

Այս պատկերն արտացոլում է, որ թվային դասընթացների մշակման համար անհրաժեշտ տեխնիկական օժանդակությունը հիմնականում հասանելի է, սակայն դեռևս ոչ հավասարաչափ՝ բուհերի միջև։

Վերլուծությունը ցույց է տալիս.

1. Համակարգային աջակցություն (մոտ 31%)

- **ՀՊՄՀ** – SS կենտրոնը և ամբիոնների մասնագետներն ապահովում են տեխնիկական աջակցություն դասախոսներին՝ մեդիա նյութերի ստեղծման և ներկայացման փուլերում, առկա են մեթոդական ուղեցույցներ և մեդիա ռեսուրսներ։
- **ԳՊՀ** – SS բաժինն իրականացնում է տեխնիկական օժանդակություն առցանց դասերի կազմակերպման համար։
- **ԳԿՄԿ** – գործող մեդիալաբորատորիա, որտեղ դասախոսներին տրամադրվում է մեդիա-տեխնիկական օգնություն։
- **ԵՊՀ** – առկա են ձայնագրության և վիդեո արտադրության ստուդիաներ, լաբորատորիաներ։
- **ՀԱԱՀ** – դասախոսներին հասանելի են ուսումնական նյութերի մշակման դասընթացներ։

2. Ոչ ֆորմալ կամ ըստ անհրաժեշտության աջակցություն (մոտ 42%)

- Աջակցությունը տրամադրվում է՝ ըստ դիմումների կամ նախաձեռնությունների, հիմնականում SS բաժինների կամ ծրագրերի շրջանակներում։
- Շատ բուհեր նշել են Erasmus+, NATO e-academy, DEEP portal և այլ միջազգային նախագծեր, որոնց միջոցով դասախոսները ստանում են մեդիա հմտությունների զարգացում։
- Աջակցությունը հաճախ ապահովվում է ամբիոնների կամ ֆակուլտետների մակարդակով՝ առանց միասնական քաղաքականության։

3. Բացակայություն կամ մշակման փուլ (մոտ 20%)

Որոշ բուհեր ունեն միայն ռազմավարական ուղղություն կամ դեռ մշակվող քաղաքականություն։

Հիմնական միտում. Թվային կրթության զարգացմանը զուգահեռ աճում է տեխնիկական աջակցության կարիքը, և մեծ մասը բուհերի փորձում է ապահովել այն, թեկուզ ոչ ֆորմալ ձևով։

Համակարգային պակաս. Թեև մեկ երրորդ բուհերում առկա են հաստատված մեդիա լաբորատորիաներ կամ SS կենտրոններ, մեծ մասը դեռևս չունի ամրագրված ընթացակարգեր կամ վերահսկողության մեխանիզմներ։

Թվային ուսուցման լավագույն փորձի տարածման և խորհրդատվական ծրագրերի իրականացում

Գնահատվել է՝ արդյոք բուհերում իրականացվում են խորհրդատվական ծրագրեր և գործընկերների միջև փորձի փոխանակման նախաձեռնություններ՝ թվային ուսուցման լավագույն փորձը տարածելու նպատակով։

Գծապատկեր 17. Թվային ուսուցման լավագույն փորձի տարածման և խորհրդատվական ծրագրերի իրականացում



Աղյուսակ 19. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	7	**12.73%**	Տեղեկությունը անհայտ է կամ տվյալներ չկան
1 – Առկա չէ	15	**27.27%**	Խորհրդատվական ծրագրեր կամ փորձի փոխանակման նախաձեռնություններ չկան
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	22	**40.00%**	Գործընթացը իրականացվում է անհատական նախաձեռնությամբ կամ ոչ ֆորմալ ձևով
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	2	**3.64%**	Գործընթացը գտնվում է մշակման կամ հաստատման փուլում
4 – Համակարգային կերպով իրականացվող	9	**16.36%**	Կիրառվում են հաստատված խորհրդատվական ծրագրեր կամ միջազգային փոխանակման մեխանիզմներ
Ընդհանուր	**55**	**100%**	

Հարցաշարի արդյունքները ցույց են տալիս, որ բուհերի մոտ կեսը (43.64%) ունի որևէ ձևով իրականացվող խորհրդատվական կամ փորձի փոխանակման գործունեություն՝ հիմնականում ոչ ֆորմալ մակարդակով: Միայն 16.36% բուհերում է այդ փորձի տարածումը

դարձել հաստատված և համակարգային գործընթաց։ Միևնույն ժամանակ 27.27% բուհերում նման մեխանիզմներ առհասարակ չկան։

Այս պատկերն ընդգծում է, որ թվային ուսուցման լավագույն փորձի փոխանակման գործընթացները դեռևս կախված են անհատական նախաձեռնություններից կամ միջազգային ծրագրերի ներգրավվածությունից։

Հարցաշարի արդյունքների դիտարկմամբ կարելի է առանձնացնել հետևալ պատկերը.

1. Համակարգային և հաստատված մոտեցումներ (մոտ 16%)

- **ԳՊՀ** – իրականացվում են գործընկերային խորհրդատվություններ, փորձի փոխանակման հարթակներ։
- **ՀՊՄՀ** – ամբիոններում պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ, փոխադարձ աջակցության և խորհրդատվական ծրագրեր։
- **ՀԱԱՀ**– ունի առցանց հարթակներ (elearning.anau.am) և կազմակերպում է միջազգային խորհրդատվական հանդիպումներ։

2. Ոչ ֆորմալ և անհատական նախաձեռնություններ (մոտ 40%)

- Բազմաթիվ բուհեր նշել են, որ փորձի փոխանակում կատարվում է ամբիոնների, ֆակուլտետների կամ վերապատրաստման դասընթացների ընթացքում։
- Տարածված ձևերն են՝ սեմինարներ, աշխատանքային խմբեր, գործուղումներ, փորձի ներկայացում ֆակուլտետային նիստերում։
- Որոշ բուհեր ընդգծել են, որ միջազգային ծրագրերից (օր.՝ Erasmus+, eCampus, ElCampus) վերապատրաստված դասախոսները իրենց գիտելիքները տարածում են տեղական թիմերի մեջ։

3. Բացակայություն կամ ձևավորման փուլ (մոտ 30%)

- Նշվել է, որ նման նախաձեռնություններ դեռևս չեն իրականացվում կամ գտնվում են մշակման փուլում։
- Որոշ բուհեր ունեն միայն ռազմավարական ուղղություններ առանց գործող ընթացակարգերի։

Վերլուծությունները ցույց են տալիս.

- Թվային ուսուցման փորձի փոխանակման մշակույթը բուհերում ձևավորման փուլում է . մեծամասնությունը գործում է առանց պաշտոնական կարգավորումների։
- Միջազգային ծրագրերի (Erasmus+, eCampus, NATO DEEP) ներգրավվածությունը նպաստում է գիտելիքների փոխանակման և նոր մեթոդների տարածմանը։
- Հատուկ պլատֆորմներ կամ քաղաքականություն՝ թվային ուսուցման լավագույն փորձի տարածման համար, առկա են միայն սահմանափակ թվով բուհերում։

Առցանց դասավանդող դասախոսների պարտադիր վերապատրաստման ընդգրկվածության մակարդակ

Գնահատվել է՝ առցանց դասավանդող դասախոսների քանի տոկոսն է անցել պարտադիր վերապատրաստում՝ թվային ուսուցման գործիքների և մեթոդների արդյունավետ կիրառման համար։

Հիմք ընդունելով բուհերի տված պատասխանները՝ ստացվել է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 20. Առցանց դասավանդող դասախոսների պարտադիր վերապատրաստման ընդգրկվածության մակարդակ

Ցուցիչ	Պատասխան	Նշում
Վերապատրաստված դասախոսների միջին մակարդակ	**≈ 42.7%**	Միջին մակարդակից ցածր ընդգրկվածություն, մեծ տատանում բուհերի միջև
Բուհերի բաժանում՝ ըստ ընդգրկվածության մակարդակի		
· Բարձր (≥80%)	≈ 16%	Բոլոր կամ գրեթե բոլոր առցանց դասավանդողներն անցել են վերապատրաստում
· Միջին (40–70%)	≈ 20%	Վերապատրաստումներն իրականացվել են մասամբ, հիմնականում կամավոր կամ նախագծային հիմքով
· Ցածր (≤30%)	≈ 33%	Վերապատրաստումը սահմանափակ է կամ ոչ պարտադիր
· Տվյալ չտրամադրած / անորոշ	≈ 31%	Տեղեկատվություն առկա չէ

Պատկերը ցույց է տալիս.

1. **Համակարգային կամ պարտադիր վերապատրաստումներ**
   - **ԳՊՀ**– բոլոր առցանց դասավանդողները վերապատրաստվել են, առկա են գրանցամատյաններ Ակադեմիական քաղաքականության բաժնում։
   - **ԲՊՀ** – ամբողջական ընդգրկում, բոլոր մասնակիցները ստացել են հավաստագրեր։
   - **ՀԱԱՀ**– պարբերաբար վերապատրաստումներ, պաշտոնական հրապարակումներ։
   - **ԵՊՀ** – իրականացվում է շարունակական վերապատրաստում Moodle հարթակում։
2. **Ոչ ֆորմալ կամ ծրագրային մոտեցումներ**
   - Վերապատրաստումները հիմնականում իրականացվել են **միջազգային նախագծերի շրջանակում՝**
     - **PrinTeL**, **ICITAP**, **SMARTI**, **DeSIRe** և այլ ծրագրեր։
   - Մի շարք բուհեր նշել են՝ վերապատրաստումներ իրականացվել են ամբիոնների կամ ՏՏ բաժինների մակարդակով՝ բայց առանց պարտադիր կարգի։
3. **Վերապատրաստում չիրականացնող կամ չհաշվառող բուհեր**
   - Թիվը կազմում է մոտ **30%-ից ավել**, որտեղ տեղեկատվությունը չի հավաքագրվում, ընթացակարգեր առկա չեն։

Դիտարկումները ցույց են տալիս.

- **Հիմնական միտում.** Թվային ուսուցման ձևերի ներդրմանը զուգահեռ դասախոսների վերապատրաստումը դեռևս համատարած պարտադիր չէ. գործընթացը հիմնականում

պայմանավորված է բուհի ներսում գործող ծրագրերով կամ միջազգային գործընկերների աջակցությամբ:

- **Խոչընդոտ.** Առկա է տվյալների բացակայություն կամ անորոշություն՝ վերապատրաստման հաշվառման և վերահսկման գործընթացում (թղթային մատյաններ, տարբեր ձևաչափերով հաշվետվություններ):
- **Լավ փորձ.** ԳՊՀ, ԲՊՀ, ՀԱԱՀ և ԵՊՀ ապահովում են վերապատրաստումների փաստաթղթավորված վերահսկում և թվային ուսուցման մեթոդների շարունակական զարգացում:

Բաժին 6. Ուսանողների գնահատում և ակադեմիական ազնվություն

Թվային միջավայրում ուսանողների գնահատման չափանիշների առկայություն

Հարցը պարզում է՝ արդյոք բուհերի գնահատման քաղաքականության մեջ հստակ սահմանված են թվային միջավայրում ուսանողների գնահատման չափանիշները և գործիքները, ինչպես նաև դրանց կիրառման պաշտոնական կարգավորումները:

Գծապատկեր 18. Թվային միջավայրում ուսանողների գնահատման չափանիշների առկայություն



Աղյուսակ 21. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	4	**7.27%**	Տեղեկությունը անհայտ է կամ տվյալներ չկան
1 – Առկա չէ	26	**47.27%**	Թվային միջավայրում գնահատման քաղաքականություն կամ չափանիշներ չկան
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	10	**18.18%**	Գնահատումը իրականացվում է անհատական մոտեցումներով՝

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
			առանց հաստատված չափորոշիչների
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	3	**5.45%**	Քաղաքականությունը մշակման կամ հաստատման փուլում է
4 – Համակարգային կերպով իրականացվող	12	**21.82%**	Գնահատման չափորոշիչները հաստատված են և կիրառվում են բոլոր թվային դասընթացներում
Ընդհանուր	**55**	**100%**	

Թվային միջավայրում ուսանողների գնահատման չափորոշիչների առկայությունը բավական ցածր է (մոտ 27% համակարգային կամ փաստաթղթավորված մակարդակ)։ Գրեթե կեսը (47.27%) արձանագրել են, որ նման քաղաքականություն կամ հստակ չափանիշներ առկա չեն, իսկ մոտ 18% բուհեր դրանք կիրառում են ոչ ֆորմալ ձևով՝ ըստ դասախոսի կամ ամբիոնի մոտեցման։

Սա ցույց է տալիս, որ թվային ուսուցման գնահատման համակարգը դեռևս ձևավորման փուլում է և հաճախ չի տարբերակվում ավանդական գնահատման գործընթացից։

Վերլուծությունը ցույց է տալիս հետևյալ պատկերը.

1. Համակարգային և հաստատված մոտեցումներ (մոտ 22%)

- **ԳՊՀ** – գործում է հաստատված կարգ բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանների համար՝ ներառյալ առցանց ուսուցման ձևերը։
- **ՀՊՄՀ** – «Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգ» փաստաթուղթը ներառում է առցանց հանձնարարությունների և ռուբրիկների օգտագործման չափորոշիչներ։
- **ԲՊՀ** – «Ուսումնական գործընթացի հեռավար ձևով կազմակերպման կանոնակարգ», որտեղ սահմանված են նաև գնահատման մոտեցումներ։
- **ANAU** – «Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կանոնակարգ»։
- **ԵՊՀ** – օգտագործում է Turnitin համակարգը, Moodle հարթակը և «եռաչափ» գնահատման մոտեցում՝ ուսանող-դասախոս-հաստատություն եռակցված հսկողությամբ։

2. Ոչ ֆորմալ կամ ընդհանուր կիրառվող մոտեցումներ (մոտ 18%)

- Գնահատման չափորոշիչները հիմնականում ձևավորվում են ամբիոնների մակարդակով՝
    - կիրառվում են թեստեր, “open book exam”, “take-home exam”, համագործակցային գնահատում,
    - գնահատման արդյունքները գրանցվում են բուհերի էլեկտրոնային կառավարման համակարգերում (օր.՝ eBuH, LMS)։

- Այս մոտեցումները հաճախ չեն ամրագրված պաշտոնապես, այլ կիրառվում են ըստ դասախոսի կամ ֆակուլտետի նախաձեռնության։

3. **Մշակման փուլում կամ բացակայող համակարգեր (մոտ 53%)**
- Մի շարք բուհեր նշել են, որ առցանց գնահատման չափանիշներ դեռ չեն սահմանվել կամ մշակման փուլում են։
- Որոշ բուհեր ունեն միայն ընդհանուր քաղաքականություն առանց թվային բաղադրիչների։
- Կան բուհեր, որտեղ առցանց գնահատման ձևաչափ ընդհանրապես չի կիրառվում։

Աղյուսակ 22. Գործիքների և ծրագրային ապահովման օրինակներ

Բուհեր	**Կիրառվող գործիքներ և մոտեցումներ**
ԵՊՀ	Moodle, Turnitin, առցանց թեստեր, անհատական առաջադրանքներ
ՀՊՄՀ	Google Classroom, ռուբրիկների կիրառություն, առցանց հանձնարարություններ
ԳՊՀ	Կրեդիտային համակարգի հիմքով գնահատման կարգ
ԲՊՀ	Հեռավար ուսուցման կանոնակարգ, գնահատման չափանիշների ներառում
ՀԱԱՀ	Էլեկտրոնային թեստեր և գնահատման կանոնակարգ
ԵԹԿՊԻ	Կարգի նախագծեր՝ հեռավար ուսուցման և գնահատման գործընթացների համար

Վերլուծությունները ցույց են տալիս.
- **Հիմնական խնդիր.** Թվային գնահատման չափորոշիչները հիմնականում դեռ չեն առանձնացվում ավանդական գնահատման քաղաքականությունից։
- **Լավ փորձ.** ԲՊՀ, ՀՊՄՀ, ԳՊՀ և ԵՊՀ բուհերում առկա են հստակ փաստաթղթավորված կամ կարգավորող մեխանիզմներ։
- **Առկա խնդիր.** Քաղաքականությունների ճշգրտման և թվայնացման մակարդակը տարբեր է բուհերից բուհ, և մոտ կեսը դեռևս չունի պաշտոնական համակարգ։

Առցանց գնահատման արժանահավատության, հուսալիության և արդարության ապահովման միջոցառումներ

Հարցը պարզում է՝ արդյոք բուհերում առկա են միջոցառումներ և քաղաքականություններ, որոնք ապահովում են առցանց գնահատման արժանահավատությունը, հուսալիությունն ու արդարությունը՝ տեխնիկական, կազմակերպական և բարեվարքության մակարդակներով։

Գծապատկեր 19. Առցանց գնահատման արժանահավատության, հուսալիության և արդարության ապահովման միջոցառումներ



Աղյուսակ 23. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	4	**7.27%**	Տեղեկությունը անհայտ է կամ տվյալներ չկան
1 – Առկա չէ	18	**32.73%**	Թվային գնահատման արժանահավատությունն ապահովող քաղաքականություն կամ գործընթաց չկա
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	18	**32.73%**	Գնահատման վերահսկումը կամ ազնվության ապահովումը իրականացվում է անհատական կամ ոչ ֆորմալ մակարդակով
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	4	**7.27%**	Քաղաքականությունը ձևակերպված է, սակայն դեռևս ամբողջությամբ չի կիրառվում
4 – Համակարգային կերպով իրականացվող	11	**20.00%**	Արժանահավատության ապահովման գործընթացը պաշտոնապես հաստատված է և կիրառվում է համակարգային ձևով
Ընդհանուր	**55**	**100%**	

Առցանց գնահատման արժանահավատությունը ապահովող գործողությունները բավական անհամաչափ են բուհերի միջև. մոտ 20% բուհերում դրանք իրականացվում են համակարգային ձևով, մինչդեռ ավելի քան 65%-ում գործընթացը դեռևս հիմնված է ոչ ֆորմալ կամ անհատական մոտեցումների վրա։

Այսինքն՝ առկա է ընդհանուր գիտակցում խնդրի կարևորության մասին, բայց հստակ ձևակերպված և հետևողականորեն կիրառվող մեխանիզմներ առկա են միայն սահմանափակ թվով բուհերում:

Վերլուծությունը ցույց է տալիս հետևյալ պատկերը.

1. Համակարգային մոտեցում ունեցող բուհեր (մոտ 20%)

- **ԲՊՀ** – exam.brusov.am հարթակի միջոցով իրականացվում է էլեկտրոնային թեստավորում, որն ապահովում է գնահատման օբյեկտիվությունը:
- **ԳՊՀ**– գործում են «Ակադեմիական ազնվության հայեցակարգ» և «Գնահատման կարգ», որոնցում սահմանված են արդարության և ազնվության ապահովման մեխանիզմներ:
- **ՀՊՄՀ** – կիրառվում է «Բարեվարքության կանոնակարգ», որտեղ գնահատման օբյեկտիվության և թափանցիկության ապահովման դրույթները ներառված են ուսումնական գործընթացի կառավարման կարգերում: Գնահատականների հրապարակումն իրականացվում է Google Classroom հարթակում՝ ապահովելով տեսանելիություն բոլոր ուսանողների համար: Ավարտական ատեստավորման գործընթացները ձայնագրվում են:
- **ԵՊՀ** – գործում է բազմամակարդակ վերահսկողության մեխանիզմ՝ ֆակուլտետի, կրթական ծրագրի ղեկավարի և ուսումնական վարչության ներգրավմամբ: Առցանց գնահատման աշխատանքները վերահսկվում են ԵՊՀ Կրթական նոր տեխնոլոգիաների բաժնի կողմից:

2. Միջանկյալ կամ ոչ ֆորմալ մոտեցումներ (մոտ 33%)

- Բազմաթիվ բուհեր ունեն հիմնականում կարգավորող քաղաքականություններ ակադեմիական ազնվության ուղղությամբ, սակայն դրանք առնչվում են միայն ընդհանուր վարքականոններին:
- Առցանց գնահատման ընթացքում ազնվության ապահովումը կախված է դասախոսի անհատական վերահսկողությունից կամ հարթակի գործիքներից:
- Որոշ բուհերում առկա են հանձնաժողովային վերահսկողություն և ձայնագրությունների կամ տեսադիտարկման կիրառություն, սակայն առանց միասնական կարգի:

3. Մշակման փուլում կամ բացակայող մոտեցումներ (մոտ 40%)

- Մոտ մեկ երրորդ բուհերի պատասխաններում նշվել է, որ առցանց գնահատման մեխանիզմներ կամ քաղաքականություն առայժմ չկան, կամ դրանք սահմանափակվում են ընդհանուր «Ակադեմիական ազնվության» կանոնակարգով՝ առանց առցանց բաղադրիչի:
- Մի շարք բուհեր նշել են, որ համապատասխան փաստաթղթերը մշակման փուլում են (ԵԹԿՊԻ, Ավանդական բժշկության համալսարան և այլն):

Աղյուսակ 23. Օգտագործվող գործիքներ և ձևաչափեր

Բուհ	**Գործիք / Մեխանիզմ**
ԲՊՀ	exam.brusov.am թեստավորման հարթակ

Բուհ	Գործիք / Մեխանիզմ
ԳՊՀ	Ակադեմիական ազնվության հայեցակարգ, կրեդիտային համակարգով գնահատման կարգ
ՀՊՄՀ	Google Classroom-ի գնահատականներ, ձայնագրված պաշտպանություններ
ԵՊՀ	Բազմաստիճան վերահսկողություն՝ դեկանատ, վարչություն, ԿՆՏ բաժին
ՀԱԱՀ	«Գիտելիքների ստուգման և գնահատման կանոնակարգ»՝ թվային գնահատման բաղադրիչներով

Գնահատման արժանահավատությունը ապահովող հիմնական միջոցառումներ

- Թեստերի ավտոմատացված ձևավորում և արդյունքների էլեկտրոնային պահպանում
- Առցանց քննությունների ձայնագրություն և հետադարձ դիտարկման հնարավորություն
- Ակադեմիական ազնվության քաղաքականությունների կիրառում (գրագողության ստուգում, էթիկայի վերահսկում)
- Հանձնարարությունների հրապարակում և գնահատման թափանցիկություն LMS համակարգերում
- Հանձնաժողովային վերահսկողություն և վերանայման ընթացակարգեր

Վերլուծությունը ցույց է տալիս.

- **Հիմնական բացը.** Թվային գնահատման ազնվության և արժանահավատության հարցերը հաճախ դիտվում են ընդհանուր բարեվարքության քաղաքականության մեջ և չեն ունենում առանձին մեխանիզմներ։
- Մեծ թվով բուհերում բացակայում են տեխնիկական հսկողության միջոցներ (proctoring, ավտոմատ վերլուծություն, ձայնագրություն)։

Ակադեմիական ազնվության ապահովման ընթացակարգեր առցանց գնահատման միջավայրում

Նպատակն է գնահատել՝ արդյոք բուհերում գործում են հստակ ընթացակարգեր, որոնք ապահովում են ակադեմիական ազնվությունն առցանց գնահատման ընթացքում՝ ներառյալ գրագողության կանխարգելում, արտագրության հսկողություն, վերահսկվող քննություններ և այլն։

Գծապատկեր 20. Ակադեմիական ազնվության ապահովման ընթացակարգեր առցանց գնահատման միջավայրում



Աղյուսակ 24. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	5	**9.09%**	Տեղեկությունը անհայտ է կամ տվյալներ չկան
1 – Առկա չէ	23	**41.82%**	Առցանց միջավայրում ակադեմիական ազնվությունը ապահովող քաղաքականություն կամ գործընթաց չկա
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	9	**16.36%**	Կան անհատական կամ ամբիոնային նախաձեռնություններ, սակայն ոչ հաստատված ընթացակարգեր
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	3	**5.45%**	Կանոնակարգերը մշակման կամ փորձնական կիրառման փուլում են
4 – Համակարգային կերպով իրականացվող	15	**27.27%**	Գործում են հաստատված կանոնակարգեր և տեխնիկական գործիքներ, որոնք կիրառվում են հետևողականորեն
Ընդհանուր	**55**	**100%**	

Բուհերի գրեթե կեսը (41.8%) դեռևս չունի առցանց գնահատման ազնվության ապահովման հստակ մեխանիզմներ: Միաժամանակ, մոտ մեկ քառորդը (27.3%) արդեն գործարկում է համակարգային մոտեցումներ՝ փաստաթղթավորված կանոնակարգերով և թվային գործիքներով: Բուհերի մնացած հատվածը (~30%) գործում է ոչ ֆորմալ ձևաչափերով՝ կիրառելով առանձին գործնական մեթոդներ (օր.՝ թեստերի վերահսկում, LMS-ի հաշվետվություններ, տեսաձայնագրություն):
Հիմնավորումները ցույց են տալիս հետևալ պատկերը.

1. **Համակարգային մոտեցումներ ունեցող բուհեր**
   - **ԲՊՀ** – գործում է «Բարեվարքության կանոնակարգ» կիրառվում են նաև էլեկտրոնային թեստավորման հարթակներ՝ գնահատման թափանցիկությունն ապահովելու համար։
   - **ԳՊՀ** – հաստատված է «Ակադեմիական ազնվության հայեցակարգը», որն ապահովում է ուսանողների և դասախոսների պատասխանատվության և արդարության չափանիշները։
   - **ՀՊՄՀ** – «Բարեվարքության կանոնակարգի» հիման վրա գործում են հստակ պահանջներ. ուսանողների հանձնարարությունները և գնահատականները պարտադիր ներկայացվում են Google Classroom հարթակում, ավարտական գործընթացները ձայնագրվում են՝ բողոքարկման հնարավորության ապահովմամբ։
   - **ՇՊՀ** – «Ուսումնական արդյունքների գնահատման և բողոքարկման կարգը» սահմանում է առցանց քննությունների անցկացման և վերահսկման պահանջները։
   - **ԵՊՀ** – կիրառվում է Turnitin համակարգը՝ գրագողության կանխարգելման և գրավոր աշխատանքների ստուգման համար։
2. **Միջանկյալ և ոչ ֆորմալ մոտեցումներ**
   - Մի շարք բուհերում գնահատման ազնվությունն ապահովվում է դասախոսների կամ ամբիոնների նախաձեռնությամբ՝ առանց ընդհանուր կարգի։
   - Օրինակ՝ որոշ բուհերում նշվում է, որ հանձնաժողովներն են վերահսկում քննությունները, կամ որ նյութերի թափանցիկ տեղադրումը LMS հարթակում ապահովում է պատասխանատվություն։
   - Արժանահավատության ապահովման միջոցառումները (օր.՝ վերահսկվող թեստեր, արդյունքների հրապարակային հասանելիություն) իրականացվում են ըստ անհրաժեշտության։
3. **Բացակայող կամ մշակման փուլում գտնվող բուհեր**
   - Բազմաթիվ պատասխաններ վկայում են, որ առցանց գնահատման ազնվությունը դեռևս կարգավորված չէ կամ մշակման փուլում է։
   - Որոշ բուհեր նշել են, որ առցանց գնահատման համակարգ առհասարակ չկա, ուստի նման քաղաքականություն ներկայումս **անհրաժեշտ չեն համարում**։

Աղյուսակ 25. Լավ փորձեր և գործիքներ

Բուհ	**Գործիք / Փաստաթուղթ**
ԲՊՀ	Բարեվարքության կանոնակարգ, թեստավորման հարթակ
ԳՊՀ	Ակադեմիական ազնվության հայեցակարգ
ՀՊՄՀ	Բարեվարքության կանոնակարգ, LMS թափանցիկություն, ձայնագրություն
ՇՊՀ	Գնահատման և բողոքարկման ընթացակարգեր
ԵՊՀ	Turnitin գրագողության կանխարգելման համակարգ

Վերլուծությունները ցույց են տալիս.

- Թվային կրթական միջավայրում ակադեմիական ազնվության ապահովումը դեռևս լիարժեք համակարգված չէ բուհերի մեծ մասում:
- Մի շարք բուհեր հաջողությամբ ներդրել են գրագողության վերահսկման, թափանցիկ գնահատման և ձայնագրված քննությունների մեխանիզմներ:
- Որպես կանոն՝ կրթական բարեվարքության քաղաքականությունները ձևավորվում են ընդհանուր էթիկայի շրջանակում, և առցանց բաղադրիչը դեռևս չունի առանձին մշակված կարգավորում:

Համակարգված տեխնոլոգիական լուծումների և ընթացակարգերի կիրառում՝ առցանց միջավայրում գրագողության և ակադեմիական անազնվության այլ ձևերը հայտնաբերելու և կանխելու համար

Գնահատվել է՝ արդյոք բուհում կիրառվում են համակարգված տեխնոլոգիական լուծումներ և ընթացակարգեր՝ առցանց միջավայրում գրագողության և ակադեմիական անազնվության այլ ձևերի հայտնաբերման ու կանխման համար (օր.՝ Turnitin, Copyleaks և այլն):

Գծապատկեր 21. Համակարգված տեխնոլոգիական լուծումների և ընթացակարգերի կիրառում՝ առցանց միջավայրում գրագողության և ակադեմիական անազնվության այլ ձևերը հայտնաբերելու և կանխելու համար



Աղյուսակ 26. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	4	**7.27%**	Տեղեկությունը անհայտ է կամ տվյալներ չկան
1 – Առկա չէ	26	**47.27%**	Քաղաքականություն և/կամ տեխնոլոգիական լուծումներ չեն կիրառվում

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	6	**10.91%**	Օգտագործվում են անհատական գործիքներ առանց հաստատված կարգի
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	5	**9.09%**	Քաղաքականությունը կամ համակարգը կա, բայց նոր է/մասնակիորեն է կիրառվում
4 – Համակարգային կերպով իրականացվող	14	**25.45%**	Գործում են հաստատված ընթացակարգեր ու կենտրոնացված գործիքներ
Ընդհանուր	**55**	**100%**	

Բուհերի մոտ կեսը (47.3%) համակարգված լուծումներ չունի: Քառորդը (25.5%) արդեն աշխատում է ամբողջական քաղաքականությամբ և գործիքակազմով (օր.՝ Turnitin/այլ սքաներներ, ներքին կարգեր): 20%–ը անցումային կամ ոչ ֆորմալ փուլում է (մասնակի կիրառումներ, փորձնական ներդրումներ):
Վերլուծությունից պարզ է դառնում հետևյալ պատկերը.

- **Կիրառվող գործիքներ.** «Turnitin», «antiplagiarism.net», «Copyleaks», «Antiplagiat»— մեծ մասով՝ ծրագրեր, որոնք օգտագործվում են կամ կենտրոնացված, կամ ամբիոնային մակարդակով:
- **Կանոնակարգող փաստաթղթեր.** առկա են «Ակադեմիական ազնվության հայեցակարգեր» և «Գրագողության դեմ պայքարի» կարգեր (օրինակ՝ ՇՊՀ, ԳՊՀ, ՀԱԱՀ), մի մասում՝ հաստատված, մի մասում՝ «մշակման/վերանայման փուլում»:
- **Խնդիրներ.** մի շարք պատասխաններ շեշտում են, որ համակարգային լուծում չկա, գործիքները կիրառվում են անհատական նախաձեռնությամբ, կամ առցանց գնահատում ընդհանրապես չի իրականացվում, ինչի պատճառով ոլորտը չի կարգավորվել:

Ուսումնառության արդյունքների ձեռքբերումն արժանահավատ կերպով գնահատելու նպատակով բուհի կողմից թվային գնահատման բազմազանեցված մեթոդների (ձևավորող, ամփոփիչ, ինքնագնահատում) կիրառում

Գնահատվել է՝ արդյոք բուհը խրախուսում և աջակցում է թվային գնահատման բազմազանեցված մեթոդների կիրառումը (ձևավորող, ամփոփիչ, ինքնագնահատում):

Գծապատկեր 22. Ուսումնառության արդյունքների ձեռքբերումն արժանահավատ կերպով գնահատելու նպատակով բուհի կողմից թվային գնահատման բազմազանեցված մեթոդների կիրառում



Աղյուսակ 27. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	3	**5.45%**	Տեղեկությունը անհայտ է կամ տվյալներ չկան
1 – Առկա չէ	20	**36.36%**	Քաղաքականություն/աջակցություն չի իրականացվում
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	14	**25.45%**	Կիրառվում է անհատական նախաձեռնությամբ, առանց միասնական կարգի
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	2	**3.64%**	Կարգը կամ գործընթացը կա, բայց նոր է/մասամբ կիրառվող
4 – Համակարգային կերպով իրականացվող	16	**29.09%**	Հաստատված և ինստիտուցիոնալացված մոտեցում, բազմազան մեթոդների կայուն կիրառություն
Ընդհանուր	**55**	**100%**	

Մոտ մեկ երրորդը (29.1%) արդեն համակարգային է կիրառում ձևավորող/ամփոփիչ/ինքնագնահատման թվային մեթոդներ: 36.4%-ը նշել է, որ չկա ինստիտուցիոնալ աջակցություն: Քառորդը (25.5%) գործադրում է ոչ ֆորմալ, դասախոսակենտրոն լուծումներ: Հիմնավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս.

- Շատերը հղվում են ընդհանուր «ուսանողների գնահատման կարգերին» և առանձին ընթացակարգերին (բանավոր/թեստային), երբեմն՝ առցանց թեստավորման կարգերին:
- Մի շարք բուհերում ընդգծվում է, որ բազմազանեցումը ներկայացված է կարգերում, բայց ոչ միշտ է ապահովված տեխնոլոգիական աջակցությամբ կամ միասնական հաշվետվությամբ:

Բուհում համապատասխան կանոնակարգերով սահմանված են ուսանողներին գնահատականների վերաբերյալ հետադարձ կապի տրամադրման ժամկետներն ու ձևերը

Գնահատվել է, թե բուհերում որքանով են պաշտոնապես սահմանված և իրականում կիրառվում ուսանողներին գնահատականների վերաբերյալ հետադարձ կապի ժամկետներն ու ձևերը՝ ներառյալ հրապարակման վերջնաժամկետները, հաղորդակցության ալիքները և բողոքարկման ընթացակարգերը:

Գծապատկեր 23. Ուսանողներին գնահատականների վերաբերյալ հետադարձ կապի տրամադրման ժամկետների ու ձևերի կանոնակարգում



Աղյուսակ 28. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ/չեմ կարող պատասխանել	3	5.45%	Անտեղյակություն/տվյալ չկա
1 – Առկա չէ	10	18.18%	Կանոնակարգ կամ պրակտիկա չկա
2 – Ոչ ֆորմալ/ըստ անհրաժեշտության	6	10.91%	Կիրառվում է անհատական նախաձեռնությամբ
3 – Փաստաթղթավորված/մշակման փուլում	2	3.64%	Կանոնակարգը նոր է կամ ճանապարհին
4 – Համակարգային կերպով իրականացվող	34	61.82%	Պաշտոնապես հաստատված և կիրառվող պրակտիկա
Ընդամենը	**55**	**100%**	

Պատասխանողների զգալի մեծ մասը՝ 61.82%, գնահատել է, որ հետադարձ կապի մեխանիզմները համակարգային են։ Միևնույն ժամանակ, 18.18% բուհերում դրանք բացակայում են, իսկ 10.91%–ում գործում են ոչ ֆորմալ հիմնավորմամբ։
Վերլուծությունները ցույց են տալիս.

- **Համակարգային գործարկում** ունեցող բուհերը հղվում են թվային կառավարման հարթակների վրա՝ «EBUHh», «AMS», «ASPU Classroom», «Google Classroom»։ Նշվում են նաև կոնկրետ ժամկետներ (օր.՝ քննությունից հետո մինչև 5 աշխատանքային օր) և էլեկտրոնային ամփոփաթերթեր։
- **Կանոնակարգային հիմք**. հաճախ է հիշատակվում «Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգը», ինչպես նաև **բողոքարկման** ընթացակարգերը (ԳՊՀ, ՇՊՀ, ՀԱԱՀ և այլն)՝ ապահովելով հետադարձ կապի թափանցիկություն։
- **Ոչ ֆորմալ պրակտիկա**. մի շարք պատասխաններ մատնանշում են, որ հետադարձ կապը «կիրառվում է ըստ անհրաժեշտության» կամ «իրականացվում է ոչ ֆորմալ ձևով», իսկ որոշ դեպքերում մեխանիզմներ «սահմանված չեն»։

Ուսանողների ներկայացրած առցանց աշխատանքների ստուգում ավտոմատ ստուգման (գրագողության կանխարգելման) գործիքներով

Գնահատվել է՝ բուհերում առցանց ներկայացվող ուսանողական աշխատանքներից ի՞նչ բաժինն է ավտոմատ կերպով ստուգվում հակագրագողության ծրագրերով (օր.՝ Turnitin, Copyleaks և այլն)։

Աղյուսակ 29. Քանակական բաշխում՝ ըստ ստուգման ծավալի

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0%	21	38.18%	Ավտոմատ ստուգում չկա (կամ «չի ենթարկվում», «չի ստուգվում»)
1–24%	2	3.64%	Սահմանափակ ծավալով
25–49%	3	5.45%	Մասամբ ստուգվում է
50–74%	3	5.45%	Կեսից ավելին ստուգվում է
75–99%	1	1.82%	Գերակշիռ մասը
100%	2	3.64%	Բոլոր աշխատանքները
Տվյալ չկա / չի կիրառվում / բացատրական պատասխան	23	41.82%	«տեղյակ չեմ», «Առցանց աշխատանք չի ներկայացվում», «-», կամ միայն ընթացակարգային նկարագրություն առանց տոկոսի
Ընդամենը	55		

Պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս.

- **Զրոյական կիրառումը գերակշռում է**. առնվազն 38% հաստատել է 0% ավտոմատ ստուգում, և ևս 42% չի տվել քանակական տվյալ (կամ առցանց աշխատանք չի ներկայացվում)։
- **Լիարժեք ավտոմատ ստուգում ունեցածները քիչ են**. 100% ավտոմատ ստուգում հայտարարվել է ընդամենը 2 դեպքում (3.64%)։
- **Ստուգման եզակի դեպքեր՝** մոտ 12% պատասխանների դեպքում ստուգվում է ≥25% աշխատանքները (ներառյալ 50% և ավելի ունեցողները)։
- **Քաղաքականության մասնակի կիրառում՝** մի շարք բուհեր համակարգային ստուգում են ավարտական/թեզային աշխատանքները, իսկ ընթացիկ/միջանկյալ առաջադրանքների ստուգումը թողնված է դասախոսի հայեցողությանը։

Տվյալների որակական վերլուծությունը ցույց է տալիս.

- **«Չի կիրառվում/չի ենթարկվում»**. մի մասը բացատրում է, որ առցանց աշխատանքներ փաստացի չեն ներկայացվում կամ առցանց գնահատում չի իրականացվում, ուստի ավտոմատ ստուգման ցուցանիշը 0 է։
- **«Մասնակի/թեզային» մոդել**. հաճախ ստուգվում են միայն ավարտական կամ մագիստրոսական աշխատանքները («50%», «բոլոր թեզերը»), իսկ սովորական կուրսային/առաջադրանքների ստուգումը ոչ պարտադիր է։
- **Գործիքների ինտեգրում**. առկա են օրինակներ, երբ Turnitin-ը ինտեգրված է Moodle LMS-ում, կամ օգտագործվում են այլ հակագրագողության ծառայություններ (Copyleaks/Antiplagiarism և այլն), սակայն ամբողջական ներդրումը սահմանափակ է։
- **Կարգավորումների հղումներ**. բազմաթիվ հղումներ տրված են ընդհանուր «գնահատման կարգերին» կամ «ակադեմիական ազնվության» փաստաթղթերին՝ առանց հստակեցնելու առցանց կատարված աշխատանքների ստուգումը։

Բաժին 7. Ուսանողների օժանդակություն և աջակցող ծառայություններ

Բոլոր ուսանողներին ընձեռվում է հնարավորություն մասնակցելու թվային գործիքների օգտագործման վերաբերյալ կողմնորոշման ծրագրերի և վերապատրաստումների

Այս դրույթով ուսումնասիրվել է, թե բուհերը որքանով են ապահովում ուսանողների՝ առցանց ուսուցման նախապատրաստման հնարավորությունները՝ մասնավորապես՝ թվային գործիքների կիրառման վերաբերյալ կողմնորոշման և վերապատրաստման ծրագրերի մատչելիությունը, պարբերականությունը և համակարգայնությունը։

Գծապատկեր 24. Թվային գործիքների օգտագործման վերաբերյալ կողմնորոշման ծրագրերի և վերապատրաստումների առկայություն



Աղյուսակ 30. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	6	10.91%	Տեղեկատվության բացակայություն
1 – Առկա չէ	20	36.36%	Կողմնորոշման կամ վերապատրաստման ծրագրեր չկան
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	13	23.64%	Գործընթացը իրականացվում է անհատական կամ ամբիոնային մակարդակով
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	3	5.45%	Գործընթացը ձևակերպվում է կամ գտնվում է հաստատման փուլում
4 – Համակարգային կերպով իրականացվող	13	23.64%	Կազմակերպվում են պարբերական վերապատրաստումներ, գործում են աջակցող ծառայություններ
Ընդամենը	**55**	**100%**	

Ամենամեծ մասնաբաժինը՝ 36.36%, կազմում են բուհերը, որտեղ ծրագրեր չկան կամ չեն իրականացվում: Միաժամանակ 47.28%–ը ցույց է տալիս, որ մի շարք բուհերում առկա են գործնական աջակցման ձևեր, սակայն ոչ միշտ են դրանք հաստատված կանոնակարգով: Հիմնավորումների վերլուծությունը վկայում է.

- **Համակարգային մոտեցում ունեցող բուհերում** ուսանողները առաջին կուրսում ստանում են խորհրդատվություն թվային գործիքների կիրառման վերաբերյալ: Դրանք կարող են լինել առանձին սեմինարներ, ՏՀՏ դասընթացներ, ինչպես նաև

ֆակուլտետների կամ ուսումնական բաժինների կողմից իրականացվող խորհրդատվական հանդիպումներ։

- **Ոչ ֆորմալ աջակցություն** իրականացվում է ամբիոնների և դասախոսների կողմից՝ անհատական ուղեցույցների, մուտքի և օգտագործման ցուցումների տրամադրմամբ (օր.՝ Google Classroom-ի կամ Moodle-ի աշխատանքային կանոնների ներկայացում)։
- Տարբեր բուհեր նշել են առկա թվային ռեսուրսների հղումներ՝ օրինակ՝ ANAU e-learning պլատֆորմ, ԳՊՀ կայքի ուսանողական աջակցության բաժիններ, ինչպես նաև ASPU մեդիաուղեցույցներ։
- Շատ հաստատություններում վերապատրաստումը դեռևս չի դիտվում որպես պարտադիր գործընթաց. այն իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ առավելապես նոր ուսանողների կամ առցանց հարթակների ներդրման ժամանակ։

Վերլուծության ընդհանուր պատկերը ցույց է տալիս, որ բուհերի զգալի մասում առկա են ուսանողների թվային կողմնորոշման տարրեր, սակայն դրանք հաճախ ունեն **ոչ ֆորմալ բնույթ**։ Միայն քառորդն է ապահովում **համակարգային մոտեցում**՝ պարբերական վերապատրաստումներով և պատասխանատու ստորաբաժանումների ներգրավմամբ։ Գնահատման միջինից բարձր ցուցանիշը վկայում է, որ առկա է **զարգացման միտում**, և ոլորտը շարժվում է դեպի ինստիտուցիոնալացված թվային ուսուցման մշակույթ։

Ուսումնական և տեխնիկական աջակցման ծառայություններ առցանց սովորող ուսանողների կարիքները բավարարելու համար

Գնահատվել է, թե բուհերը որքանով են ապահովում ուսումնական և տեխնիկական աջակցման ծառայությունների մատչելիությունն ու արդյունավետությունը՝ ուղղված առցանց սովորող ուսանողների կարիքների բավարարմանը։ Մասնավորապես դիտարկվել է, թե արդյոք գործում են մեխանիզմներ՝ ուսանողների փոխգործակցությունը խթանելու և թվային միջավայրում աջակցություն ապահովելու նպատակով (օր.՝ ֆորումներ, թիմային աշխատանքներ, սոցիալական մեդիայի գործիքներ և այլն)։

Գծապատկեր 25. Ուսումնական և տեխնիկական աջակցման ծառայություններ առցանց սովորող ուսանողների կարիքները բավարարելու համար



Աղյուսակ 31. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	4	7.27%	Տեղեկատվության բացակայություն
1 – Առկա չէ	23	41.82%	Աջակցման ծառայությունները կամ քաղաքականությունը բացակայում են
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	18	32.73%	Կիրառվում են անհատական նախաձեռնությամբ կամ ըստ անհրաժեշտության
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	0	0.00%	Դեռևս չի փաստաթղթավորվել կամ ձևակերպման փուլում չէ
4 – Համակարգային կերպով իրականացվող	10	18.18%	Գործում են պաշտոնապես հաստատված և համակարգային աջակցման ծառայություններ
Ընդամենը	**55**	**100%**	

Հիմնական հատվածը՝ 41.82%, չի ապահովում ուսումնական կամ տեխնիկական աջակցության ձևավորված համակարգեր։ Միաժամանակ մոտ 33% բուհերում առկա են ոչ ֆորմալ փորձեր՝ սովորաբար դասախոսների կամ ամբիոնների մակարդակով իրականացվող անհատական աջակցություն։

Միայն 18.18% հաստատություններ են ապահովում համակարգային աջակցություն, ինչը վկայում է ծառայությունների ոչ համաչափ զարգացման մասին։

Հիմնավորումների բովանդակությունը ցույց է տալիս հետևյալ միտումները.

- **Ոչ ֆորմալ աջակցություն.** մի շարք բուհերում ուսանողները ստանում են աջակցություն դասախոսների, ամբիոնների կամ SS բաժնի աշխատակիցների կողմից՝ հիմնականում ըստ անհրաժեշտության կամ կոնկրետ խնդիրների առաջացման դեպքում։
- **Թվային հարթակներ և գործիքներ.** տարբեր բուհեր կիրառում են Moodle, Google Workspace, Teams կամ ներքին LMS համակարգեր (օր.՝ learn.gsu.am, elearning.anau.am), որոնք հնարավորություն են տալիս կազմակերպել առցանց քննարկումներ և ֆորումներ։
- **Համակարգային փորձ.** առանձին հաստատություններում առկա են SS կամ էլեկտրոնային ուսուցման բաժիններ, որոնք համակարգում են ուսանողների թվային աջակցությունը։

- **Բացեր և սահմանափակումներ.** շատ բուհեր նշում են, որ առցանց ուսուցման կազմակերպման գործում **հատուկ ծառայություններ նախատեսված չեն**, իսկ առանձին քաղաքականություններ (օր.՝ ներառականության ապահովման) դեռևս մշակված չեն։

Թվային դասընթացների և ուսումնական նյութերի համապատասխանությունը մատչելիության չափորոշիչներին (հատուկ կարիքներով ուսանողների համար, WCAG ստանդարտներ)

Այս դրույթով ուսումնասիրվել է՝ արդյոք բուհերում կիրառվող թվային դասընթացներն ու ուսումնական նյութերը համապատասխանում են մատչելիության չափորոշիչներին, ներառյալ հատուկ կարիքներով ուսանողների համար նախատեսված տեխնիկական և մեթոդական հարմարեցումները, ինչպես նաև՝ արդյոք բուհերը հետևում են միջազգային WCAG (Web Content Accessibility Guidelines) ստանդարտներին։

Գծապատկեր 26. Թվային դասընթացների և ուսումնական նյութերի համապատասխանությունը մատչելիության չափորոշիչներին



Աղյուսակ 32. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	5	9.09%	Տեղեկատվության բացակայություն
1 – Առկա չէ	28	50.91%	Թվային դասընթացները չեն համապատասխանեցնում մատչելիության պահանջներին
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	16	29.09%	Մասնակի փորձեր առկա են անհատական կամ ամբիոնային մակարդակով

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	2	3.64%	Կարգավորումները մշակման փուլում են, բայց դեռևս չեն կիրառվում
4 – Համակարգային կերպով իրականացվող	4	7.27%	Գործում է հաստատված և համակարգային քաղաքականություն
Ընդամենը	**55**	**100%**	

Ամենամեծ խումբը՝ 50.91%, նշում է, որ մատչելիության քաղաքականություն առկա չէ։ Այսինքն՝ կեսից ավել բուհերում թվային միջավայրի ներառականությունը դեռևս չի ձևավորվել։
29.09% բուհերում առկա է ոչ ֆորմալ փորձ՝ դասախոսների կամ ամբիոնների մակարդակով իրականացվող անհատական հարմարեցումների ձևով (օր.՝ ֆոնտի չափի փոփոխություն, վիդեոների ենթագրեր կամ անհատական խորհրդատվություն)։
Միայն 7.27% բուհեր են հաստատել կամ կիրառում համակարգային մոտեցում, ինչը ցածր ցուցանիշ է ներառականության միջազգային պահանջների համեմատ։
Հիմնավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս հետևյալ հիմնական միտումները.

- **Մատչելիության ապահովման բացակայություն.** Շատ բուհեր նշում են, որ չեն կիրառում հստակ չափորոշիչներ կամ չեն ունեցել հատուկ կարիքներով ուսանողների ուսուցման թվային ձևաչափ։
- **Անհատական կամ մասնակի հարմարեցումներ.** Որոշ բուհերում մատչելիության տարրերը կիրառվում են ոչ ֆորմալ կերպով՝ օրինակ դասախոսների նախաձեռնությամբ կամ տեխնիկական բաժինների միջամտությամբ։
- **WCAG ստանդարտների մասին տեղեկացվածության պակաս.** Հիմնավորումների մեծ մասում բացակայում են ուղիղ հղումներ կամ հիշատակումներ WCAG-ի մասին, ինչը վկայում է թեմայի սահմանափակ տարածվածության մասին։
- **Բացառություններ.** Առանձին հաստատություններում (օր.՝ ԳՊՀ, ՀԱԱՀ) մատչելիության տարրեր ներառված են LMS համակարգերի մեջ, կամ ապահովվում են հենաշարժողական խնդիր ունեցող ուսանողների համար տեխնիկական պայմաններ։

Վերլուծությունը ցույց է տալիս, որ բուհերի մեծ մասը դեռևս չունի մատչելի թվային ուսուցման համակարգային քաղաքականություն։ Թվային միջավայրի ներառականությունը հիմնականում ձևավորվում է անհատական ջանքերի շնորհիվ, և WCAG ստանդարտների կիրառումը գրեթե չի դիտվում որպես ինստիտուցիոնալ պահանջ։

Բաժին 8. Տեխնոլոգիաներ և ենթակառուցվածք

Նոր կրթական տեխնոլոգիաների գնահատման և ընտրության համար առկա ընթացակարգեր

Այս դրույթով գնահատվել է, թե բուհերը որքանով են ներդրել նոր կրթական տեխնոլոգիաների գնահատման, ընտրության և ձեռքբերման ինստիտուցիոնալ մեխանիզմներ: Ուսումնասիրվել է՝ արդյոք գոյություն ունեն հստակ ընթացակարգեր, որոնք ապահովում են տեխնոլոգիաների արդյունավետության գնահատում, տվյալների անվտանգության ստուգում, ինչպես նաև բուհի ռազմավարական նպատակներին համապատասխանությունը:

Գծապատկեր 26. Նոր կրթական տեխնոլոգիաների գնահատման և ընտրության համար առկա ընթացակարգեր



Աղյուսակ 33. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	7	12.73%	Տեղեկատվության բացակայություն
1 – Առկա չէ	22	40.00%	Տեխնոլոգիաների ընտրության ձևակերպված ընթացակարգեր չկան
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	9	16.36%	Գործընթացը իրականացվում է մասնակի, անհատների կամ բաժինների նախաձեռնությամբ
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	3	5.45%	Կարգը մշակման կամ հաստատման փուլում է
4 – Համակարգային կերպով իրականացվող	14	25.45%	Գործում է հաստատված, կանոնակարգված և համակարգային ընթացակարգ

Գնահատման տարբերակ	Պատասխանների քանակ	Տոկոս	Բնութագիր
Ընդամենը	55	100%	

Ընդհանուր պատկերը ցույց է տալիս, որ մոտ կեսը՝ 52.73%, չունի հաստատված կամ համակարգային մոտեցում կրթական տեխնոլոգիաների ընտրության հարցում: Միաժամանակ մոտ քառորդը (25.45%) արդեն կիրառում է հաստատված և կանոնակարգված գործընթաց, ինչը վկայում է ոլորտի աստիճանական ինստիտուցիոնալացման մասին:
Հիմնավորումները ցույց են տալիս տարբեր բուհերի մոտեցումների բազմազանությունը.

- **Ոչ ֆորմալ փուլում գտնվող բուհեր.** մեծ մասում նոր տեխնոլոգիաների գնահատումն իրականացվում է պայմանական կամ ըստ անհրաժեշտության՝ առանց հստակ սահմանված չափանիշների: Այսինքն՝ որոշումները հաճախ կախված են դասախոսների կամ ՏՏ բաժնի առաջարկներից:
- **Հաստատված ընթացակարգեր.** մի շարք բուհերում (օր.՝ ԳՊՀ, ՀՊՄՀ, ԵՊՀ) առկա են փաստաթղթավորված կանոնակարգեր՝
    - ՏՏ բաժնի կանոնակարգեր,
    - Գնումների և տեխնոլոգիական ռեսուրսների ապահովման ընթացակարգեր,
    - Տվյալների գաղտնիության և տեխնիկական անվտանգության կանոնակարգեր: Այս փաստաթղթերը ձևավորում են տեխնոլոգիական որոշումների ընդունման ինստիտուցիոնալ շրջանակ:
- **Մշակման փուլում գտնվող բուհեր.** առանձին հաստատություններում ընթացքի մեջ են նոր կանոնակարգերի նախագծեր, որոնք ուղղված են ՏՀՏ գործընթացների կարգավորմանը («Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման կարգ», «Կրթական ռեսուրսների ապահովման ընթացակարգ» և այլն):
- Որոշ բուհեր ունեն ՏՏ բաժիններ, որոնք համակարգում են գործիքների ընտրությունը և առաջարկում լուծումներ՝ ըստ ֆակուլտետների պահանջների:

Բուհերի մեծ մասը դեռևս չունի հստակ սահմանված և փաստաթղթավորված մեխանիզմներ նոր կրթական տեխնոլոգիաների ընտրության և ներդրման համար: Այս գործընթացը շատ դեպքերում հիմնված է անհատական փորձի և ոչ թե հաստատության քաղաքականության վրա:

Ուսումնական տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հուսալիության/ արդյունավետության մշտադիտարկում

Գնահատվել է, թե արդյոք բուհերում ներդրված են պաշտոնական մեխանիզմներ (օր. «Service monitoring», LMS-ի հաշվետվություններ, ցանցային/սերվերային վերահսկում, անվտանգության քաղաքականություններ)՝ ուսումնական տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հուսալիությունն ու արդյունավետությունը պարբերաբար չափելու համար:

Գծապատկեր 27. Ուսումնական տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հուսալիության/ արդյունավետության մշտադիտարկում



Աղյուսակ 34. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
0 – Չգիտեմ	6	10.91%	Տեղեկացված չեն
1 – Առկա չէ	18	32.73%	Մշտադիտարկման պաշտոնական գործընթացներ չկան
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	11	20.00%	Կատարվում է անհատական/անձնական նախաձեռնությամբ
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	3	5.45%	Կարգը մշակման/հաստատման փուլում է
4 – Համակարգային կերպով իրականացվող	17	30.91%	Գործում են հաստատված և կանոնակարգված գործընթացներ
Ընդամենը	**55**	**100%**	

Համակարգային մշտադիտարկում ունեցող բուհերը՝ 30.91%. մոտ երրորդը արդեն աշխատում է հաստատված կարգերով (մոնիթորինգ, աուդիտ)։ Ընդհանուր բացը՝ 32.73%. մոտ մեկ երրորդը չունի որևէ պաշտոնական քաղաքականություն։
Ոչ ֆորմալ կիրառումներ՝ 20%. հիմնականում ըստ անհրաժեշտության, առանց միասնական չափորոշիչների։
Տվյալների որակական վերլուծությունը ցույց է տալիս.

- «Ոչ ֆորմալ» մեխանիզմներ ունեցող բուհերը նշում են, որ կան պարբերական տեխնիկական աշխատանքներ (ցանցի/սերվերի սպասարկում, LMS-ի դիտարկում), բայց չկան միասնական չափորոշիչներ կամ պարտադիր հաշվետվություններ։
- «Համակարգային» մոտեցում ունեցողներ բուհերն ունեն.
    - SS բաժնի կանոնակարգեր,
    - Մոնիթորինգի գործիքներ (ցանցային/սերվերային վերահսկում, մատյաններ, Google Analytics և այլն),
    - Տվյալների պաշտպանություն և գաղտնագրման լուծումներ,

- Ռեսուրսների ապահովման և վերազինման ընթացակարգեր (պարբերական արդիականացում, Wi-Fi գոտիների/սերվերների ընդլայնում, LMS-ի վերահսկում)։
- Մի շարք հիմնավորումներ մատնանշում են կարգերի մշակման փուլի մասին, ինչը ցույց է տալիս ինստիտուցիոնալացման ընթացք։

Շուրջօրյա (24/7) տեխնիկական աջակցություն ուսանողների և դասախոսների համար

Այս դրույթով ուսումնասիրվել է՝ արդյոք բուհերում ապահովված է շուրջօրյա (24/7) տեխնիկական աջակցություն, որը երաշխավորում է առցանց և թվային ուսուցման հարթակների հուսալիությունն ու անխափան աշխատանքը։ Գնահատվել է ինչպես տեխնիկական օժանդակության հասանելիությունը, այնպես էլ դրա կազմակերպման ձևը՝ պաշտոնական/ոչ ֆորմալ մակարդակում։

Գծապատկեր 28. Շուրջօրյա տեխնիկական աջակցություն ուսանողների և դասախոսների համար



Աղյուսակ 35. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	6	10.91%	Տեղեկացված չեն աջակցության ձևերի մասին
1 – Առկա չէ	23	41.82%	Տեխնիկական աջակցության համակարգ գոյություն չունի կամ մասնակի է գործում
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	14	25.45%	Աջակցությունը կատարվում է անհատների նախաձեռնությամբ կամ ամբիոնների միջոցով
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	1	1.82%	Գործընթացը փաստաթղթավորվում է, բայց դեռ ներդրված չէ
4 – Համակարգային կերպով իրականացվող	11	20.00%	Գործում է հաստատված և համակարգային աջակցման ծառայություն
Ընդամենը	**55**	**100%**	

Ամենամեծ խումբը՝ 41.82%, նշում է, որ շուրջօրյա տեխնիկական աջակցություն առկա չէ: Սա վկայում է, որ ուսումնական հարթակների հուսալիությունը հիմնականում չի ապահովվում անընդհատ վերահսկմամբ:
Միևնույն ժամանակ, 25.45% բուհեր ունեն ոչ ֆորմալ աջակցություն, որը կազմակերպվում է ամբիոնների, SS բաժինների կամ առանձին պատասխանատուների միջոցով:
Միայն 20% բուհեր են ապահովում հաստատված և համակարգային տեխնիկական սպասարկում, ինչը համեմատաբար ցածր ցուցանիշ է՝ հաշվի առնելով թվային ուսուցման տարածվածությունը:
Հիմնավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս հետևյալ հիմնական միտումները.

- **Պաշտոնական կարգերի բացակայություն.** Շատ բուհեր արձանագրում են, որ աջակցության համակարգ գոյություն ունի, սակայն այն չի փաստաթղթավորվել և գործում է ըստ իրավիճակի:
- **Աջակցություն ամբիոնների մակարդակով.** Բազմաթիվ դեպքերում տեխնիկական աջակցությունը կազմակերպվում է ֆակուլտետների կամ ամբիոնների կողմից՝ ուսանողների կամ դասախոսների անհատական դիմումների հիման վրա:
- **Համակարգային լուծումներ.** Մի շարք բուհեր (օր.՝ ԳՊՀ, ԵՊՀ, ՀԱԱՀ) ունեն SS բաժիններ կամ էլեկտրոնային ուսուցման գրասենյակներ, որոնք ապահովում են շուրջօրյա մոնիթորինգ և աջակցության հասանելիություն (էլ. փոստ, հեռախոս, LMS support channels):
- **Մշակման փուլում գտնվող համակարգեր.** Որոշ բուհեր նշում են, որ այժմ ընթացքի մեջ են աջակցման կարգերի և արձանագրությունների մշակման աշխատանքները, ինչը ցույց է տալիս ինստիտուցիոնալացման ուղղությամբ շարժ:

Բաժին 9. Տվյալների գաղտնիություն և անվտանգություն

Տվյալների պաշտպանության քաղաքականություն

Այս դրույթով ուսումնասիրվել է՝ արդյոք բուհերն ունեն տվյալների պաշտպանության քաղաքականություն, որն ապահովում է ուսանողների և դասախոսների անձնական տվյալների անվտանգությունը թվային ուսումնական հարթակներում:

Գծապատկեր 29. Տվյալների պաշտպանության քաղաքականության առկայություն



Աղյուսակ 36. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	4	7.27%	Տեղեկացված չեն տվյալների պաշտպանության մեխանիզմների մասին
1 – Առկա չէ	22	40.00%	Բուհում տվյալների պաշտպանության քաղաքականություն չկա կամ փաստաթղթավորված չէ
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	9	16.36%	Գործընթացը կատարվում է անհատական կամ բաժինների մակարդակով՝ առանց միասնական կանոնակարգերի
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	4	7.27%	Քաղաքականությունը մշակման կամ հաստատման փուլում է
4 – Համակարգային կերպով իրականացվող	16	29.09%	Տվյալների պաշտպանությունը պաշտոնապես կանոնակարգված է և գործում է համակարգային ձևով
Ընդամենը	**55**	**100%**	

40% բուհերում պաշտոնական քաղաքականությունը բացակայում է, ինչը փաստում է տվյալների պաշտպանության ոլորտում համակարգայնության պակասի մասին։
Միևնույն ժամանակ, 29.09% բուհերում գործում է հաստատված և համակարգային քաղաքականություն, որը համահունչ է ՀՀ օրենսդրությանը և ապահովում է տվյալների գաղտնիությունը։ Համեմատաբար փոքր, բայց աճող խումբը (7.27%) գտնվում է մշակման փուլում, ինչը վկայում է քաղաքականությունների ձևավորման ակտիվ ընթացքի մասին։
Հիմնավորումները նշում են բուհերի մոտեցումների տարբեր մակարդակներ.

- **Համակարգային մոտեցում ունեցող բուհեր.** Բազմաթիվ բուհեր (օր.՝ ԵՊԲՀ, ԵՊՀ, ԳՊՀ, ՀՊՄՀ, ՀԱԱՀ) ունեն տվյալների անվտանգության և գաղտնիության կանոնակարգեր։ Դրանք ներառում են.
    - SS բաժինների կամ տեղեկատվական անվտանգության ստորաբաժանումների կանոնակարգեր,
    - Անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրական դրույթների կիրառություն,
    - Օգտագործվող հարթակների (օր.՝ Microsoft 365, Moodle, AMS) միջազգային անվտանգության ստանդարտներին համապատասխանությունը։
- **Ոչ ֆորմալ մոտեցումներ.** Որոշ բուհերում տվյալների պաշտպանությունն իրականացվում է՝ հիմնվելով աշխատակիցների անհատական պատասխանատվության վրա՝ առանց միասնական փաստաթղթային հիմքի։ Օրինակ՝ գաղտնիությունը պահպանվում է աշխատանքային պայմանագրերով կամ բաժինների ներքին կարգերով։

- **Բացակայող քաղաքականություններ.** Բուհերի մի զգալի մասը դեռևս չունի հստակ ձևակերպված տվյալների անվտանգության ռազմավարություն կամ կարգ, թեև փաստում են օրենսդրական պահանջներով առաջնորդվելու մասին:
- **Մշակման փուլում գտնվող բուհեր.** Մի շարք համալսարաններ տեղեկացնում են, որ տվյալների պաշտպանության կարգերի նախագծերն արդեն մշակվում են կամ գտնվում են հաստատման փուլում:

Այսկերպ, տվյալների պաշտպանության համակարգի ձևավորման մակարդակը բուհերում տատանվում է ոչ ֆորմալից մինչև լիարժեք ինստիտուցիոնալացված տարբերակ: Թեև մոտ մեկ երրորդ բուհեր արդեն ներդրել են համապատասխան քաղաքականություններ, ընդհանուր համակարգային ներդրումը դեռ լիովին կայացած չէ: Այնուամենայնիվ, փաստաթղթերի առկայությունն ու մշակման փուլում գտնվող նախաձեռնությունները վկայում են կարգավորման և իրավական համապատասխանության միտումների ձևավորման մասին:

Տվյալների հավաքագրման և օգտագործման համար համաձայնության գործընթաց

Այս դրույթը գնահատում է, թե բուհերում որքանով է ապահովված հստակ և թափանցիկ գործընթաց, որի միջոցով ուսանողներից և աշխատակիցներից ստացվում է գրավոր կամ էլեկտրոնային համաձայնություն՝ նրանց տվյալները թվային ուսումնական հարթակներում հավաքագրելու և մշակելու համար:

Գնահատվել է ինչպես իրավական ձևակերպումների առկայությունը, այնպես էլ դրանց կիրառման գործնական մակարդակը:

Գծապատկեր 30. Տվյալների հավաքագրման և օգտագործման համար համաձայնության գործընթացի առկայություն



Աղյուսակ 37. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	5	9.09%	Տեղեկացված չեն տվյալների օգտագործման համաձայնության ընթացակարգի մասին

Գնահատման տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
1 – Առկա չէ	22	40.00%	Համաձայնության ստացման գործընթաց պաշտոնապես գոյություն չունի
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	14	25.45%	Գործընթացն իրականացվում է անհատական կամ ոչ պաշտոնական մակարդակով
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	2	3.64%	Կանոնակարգը մշակման կամ հաստատման փուլում է
4 – Համակարգային կերպով իրականացվող	12	21.82%	Գործում է հաստատված, փաստաթղթավորված համաձայնության գործընթաց
Ընդամենը	**55**	**100%**	

40% բուհերում համաձայնության ստացման մեխանիզմը բացակայում է, ինչը վկայում է իրավական և վարչարարական բացերի մասին։
25.45% բուհերում այն իրականացվում է ոչ ֆորմալ ձևով, հիմնականում ուսանողական պայմանագրերի կամ ներքին վարչարարության միջոցով։
Միայն 21.82% բուհեր ունեն հաստատված և համակարգային մոտեցում, որտեղ տվյալների հավաքագրումն իրականացվում է հստակ ընթացակարգով։
Հիմնավորումների բովանդակությունը վկայում է տարբեր մոտեցումների մասին.

- **Համակարգային մոտեցումներ.** Մի շարք բուհեր (օր.՝ ԵՊԲՀ, ԳՊՀ, ՀԱԱՀ) կիրառում են համապատասխան կանոնակարգեր, որոնցում սահմանվում են տվյալների հավաքագրման և օգտագործման պայմանները։ Համաձայնությունը սովորաբար արտահայտվում է.
    - ուսանողի կամ աշխատակցի գրանցման պահին,
    - պայմանագրային ձևակերպումներով,
    - թվային հարթակի օգտագործման պայմանների ընդունմամբ։
- **Ոչ ֆորմալ կիրառումներ.** Շատ բուհերում համաձայնությունը դիտարկվում է՝ որպես ուսումնական գործընթացում ներգրավվածության մաս։ Օրինակ՝ ուսանողի կողմից հարթակում գրանցվելը կամ տվյալների մուտքագրումը համարվում է համաձայնության ձև։
- **Բացակայող քաղաքականություններ.** 40%-ի մոտ որևէ պաշտոնական ձևակերպում չի գործում։ Այս բուհերում տվյալների օգտագործման վերաբերյալ հստակ թափանցիկ քաղաքականություն կամ տեղեկացված համաձայնություն չի կիրառվում։
- **Մշակման փուլում գտնվողներ.** Որոշ բուհեր տեղեկացրել են, որ նման քաղաքականությունների մշակումը կամ ինտեգրումը նոր SS կանոնակարգերի մեջ ներկայումս ընթացքի մեջ է։

Թվային ուսուցման հարթակների տվյալների պահպանման, կառավարման և փոխանցման ընթացակարգեր

Այս դրույթով ուսումնասիրվել է՝ արդյոք բուհերում կան պաշտոնապես սահմանված ընթացակարգեր, որոնք կարգավորում են թվային հարթակներով հավաքագրված տվյալների անվտանգ պահպանումը, կառավարումը, փոխանցման կարգը՝ համաձայն ազգային և միջազգային նորմերի։

Գծապատկեր 31. Թվային ուսուցման հարթակների տվյալների պահպանման, կառավարման և փոխանցման ընթացակարգերի առկայություն



Աղյուսակ 38. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	4	7.27%	Տեղեկացված չեն տվյալների պահպանման ընթացակարգերի մասին
1 – Առկա չէ	29	52.73%	Բուհում նման քաղաքականություն կամ մեխանիզմ առկա չէ
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	12	21.82%	Գործընթացները իրականացվում են անհատական կամ ֆակուլտետային մակարդակով
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	3	5.45%	Կանոնակարգերը մշակման կամ հաստատման փուլում են
4 – Համակարգային կերպով իրականացվող	7	12.73%	Գործում են հաստատված ընթացակարգեր՝ տվյալների անվտանգ կառավարման և փոխանցման ապահովման համար
Ընդամենը	**55**	**100%**	

Ամենամեծ խումբը (52.73%) արձանագրում է, որ բուհերում չկան պաշտոնապես հաստատված ընթացակարգեր՝ տվյալների պահպանման և կառավարման համար։
Միայն 12.73% բուհեր ապահովում են տվյալների պաշտպանությունը համակարգային և փաստաթղթավորված ձևով, ինչը դեռևս ցածր ցուցանիշ է թվային կառավարման տեսանկյունից։
21.82% բուհերում գործընթացն իրականացվում է ոչ ֆորմալ կերպով՝ հիմնականում SS բաժինների կամ առանձին պատասխանատուների ջանքերով։
Հիմնավորումների բովանդակությունը ցույց է տալիս.

- **Առկա կանոնակարգերի օրինակներ.** Գավառի պետական համալսարանի SS բաժնի կանոնակարգը և ՀԱԱՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կարգը օրինակ

են, որտեղ առկա են տվյալների պահպանման և փոխանցման պաշտոնապես հաստատված մեխանիզմներ: ԵՊՀ-ում նշվել է նաև արխիվացման համակարգի առկայությունը, որն ապահովում է տվյալների «սառեցում» և սահմանափակ հասանելիություն:

- **Ոչ ֆորմալ պրակտիկաներ.** Շատ բուհեր փաստում են, որ տվյալների անվտանգությունը պահպանվում է «ըստ անհրաժեշտության»՝ առանց կարգավորող փաստաթղթերի: Այս մոտեցումը հիմնականում հիմնված է SS մասնագետների կամ վարչության պատասխանատվության վրա:
- **Օրենսդրական հղումներ.** Մի շարք պատասխաններ վկայում են ՀՀ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի կիրառությունը որպես հիմնական իրավական հիմք, սակայն տեղային կարգերի բացակայությունը թույլ չի տալիս ապահովել գործնական վերահսկում:
- **Մշակման փուլում եղած համակարգեր.** Որոշ բուհեր նշում են, որ տվյալների անվտանգության քաղաքականությունները գտնվում են մշակման կամ ներդրման փուլում, ինչը վկայում է բարելավման միտումների մասին:

Կիբերանվտանգության աուդիտ և տվյալների արտահոսքի կանխարգելման միջոցառումներ

Այս դրույթով ուսումնասիրվել է՝ արդյոք բուհերում իրականացվում են կիբերանվտանգության պարբերական աուդիտներ, ինչպես նաև՝ արդյոք կիրառվում են համապատասխան տեխնիկական և կազմակերպական միջոցառումներ տվյալների արտահոսքը կանխելու, կիբերսպառնալիքներին արձագանքելու և ռիսկերն արդյունավետ կառավարելու նպատակով:

Գծապատկեր 32. Կիբերանվտանգության աուդիտ և տվյալների արտահոսքի կանխարգելման միջոցառումներ



Աղյուսակ 39. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	7	12.73%	Պատասխանողը տեղեկացված չէ կիբերանվտանգության համակարգերի մասին

Գնահատման տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
1 – Առկա չէ	27	49.09%	Կիբերանվտանգության աուդիտ չի իրականացվում, կամ նման քաղաքականություն չկա
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	9	16.36%	Գործընթացն իրականացվում է անհատական նախաձեռնությամբ կամ ըստ անհրաժեշտության
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	2	3.64%	Կանոնակարգը մշակման կամ հաստատման փուլում է
4 – Համակարգային կերպով իրականացվող	10	18.18%	Կիբերանվտանգությունը վերահսկվում է հաստատված քաղաքականության և պարբերական աուդիտների միջոցով
Ընդամենը	55	100%	

49.09% բուհեր արձանագրում են, որ կիբերանվտանգության աուդիտներ չեն իրականացվում, ինչը վկայում է համակարգային բացերի մասին։
Միայն 18.18% բուհեր ունեն պաշտոնապես հաստատված և պարբերական աուդիտի համակարգ, ինչը համարվում է բավարար մակարդակի մեկնարկային ցուցանիշ։
16.36% բուհերում աուդիտներ իրականացվում են ոչ ֆորմալ ձևով՝ ՏՏ բաժինների կողմից՝ առանց փաստաթղթային հիմքի։
Հիմնավորումները ցույց են տալիս բուհերի մոտեցումների բազմազանություն.

- **Համակարգային օրինակներ.** Որոշ բուհերում (օր.՝ ԵՊՀ, ՀՊՄՀ, ՀԱԱՀ, ԳՊՀ) կիբերանվտանգության միջոցառումները ներառված են ՏՏ բաժնի կամ տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կանոնակարգերում։ Օրինակ՝ ԵՊՀ-ում իրականացվում են պարբերական սերվերային մոնիտորինգներ, պահուստային պատճենում (backup), անվտանգության թարմացումներ, իսկ ՀՊՄՀ-ում ՏՏ կենտրոնը կատարում է ցանցային վերահսկման և սպառնալիքների արձագանքման շարունակական աշխատանքներ։
- **Ոչ ֆորմալ մոտեցումներ.** Շատ բուհերում կիբերանվտանգության գործողությունները կատարվում են պատասխանատու մասնագետների մակարդակով՝ առանց հաստատված կարգի կամ պարբերական աուդիտի։ Սովորաբար դրանք ներառում են համակարգերի տեղային ստուգումներ, հակավիրուսային ծրագրերի կիրառություն կամ արխիվների հսկողություն։
- **Բացակայող քաղաքականություններ.** Բուհերի մոտ կեսում նման պրակտիկա ընդհանրապես չկա։ ՏՏ ենթակառուցվածքի անվտանգությունն իրականացվում է «ըստ անհրաժեշտության» սկզբունքով՝ առանց ներքին կամ արտաքին աուդիտի։
- **Մշակման փուլում եղած նախաձեռնություններ.** Թեև փոքր թվով բուհեր (3–4%) նշել են, որ համապատասխան ընթացակարգեր մշակման փուլում են, սակայն դա վկայում է գործընթացի դեռևս նախնական բնույթի մասին։

Բաժին 10. Էթիկա և արդարություն

Արհեստական բանականության (ԱԲ) էթիկական և թափանցիկ կիրառման կանոնակարգեր

Այս դրույթը գնահատում է՝ արդյոք բուհերում առկա են հաստատված կանոնակարգեր կամ ուղեցույցներ, որոնք ապահովում են արհեստական բանականության գործիքների էթիկական, թափանցիկ և պատասխանատու օգտագործումը, ինչպես նաև դրանց կիրառումը ուսուցման և գնահատման գործընթացներում:

Գծապատկեր 33. Արհեստական բանականության (ԱԲ) էթիկական և թափանցիկ կիրառման կանոնակարգերի առկայություն



Աղյուսակ 40. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	5	9.09%	Տեղեկացված չեն ԱԲ-ի կիրառման կանոնների մասին
1 – Առկա չէ	36	65.45%	Բուհը չունի ԱԲ-ի էթիկական կամ քաղաքական ձևակերպումներ
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	5	9.09%	Կիրառվում են անհատական կամ ոչ ֆորմալ մոտեցումներ
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	4	7.27%	Կանոնակարգերի մշակումն ընթացքի մեջ է
4 – Համակարգային կերպով իրականացվող	5	9.09%	ԱԲ-ի կիրառման քաղաքականությունը հաստատված է և գործնականում կիրառվում է
Ընդամենը	**55**	**100%**	

65.45% բուհեր չունեն ԱԲ-ի կիրառման վերաբերյալ ոչ մի հաստատված քաղաքականություն կամ կանոնակարգ, ինչը վկայում է այս ոլորտի նոր և չկարգավորված բնույթի մասին: Միայն 9.09% բուհերում ԱԲ-ի կիրառման գործընթացն ունի հաստատված և փաստաթղթավորված կարգավորումներ, որոնք ներառում են էթիկայի և թափանցիկության սկզբունքներ:

9.09% բուհեր կիրառում են ԱԲ գործիքներ ոչ ֆորմալ՝ ըստ անհրաժեշտության կամ դասախոսների անհատական նախաձեռնությամբ։
Հիմնավորումները վկայում են, որ բուհերում ԱԲ-ի կիրառման քաղաքականությունները դեռևս չեն ձևավորվել ամբողջությամբ.

- **Հաստատված և կիրառվող փորձեր.** Մի քանի բուհեր (օր.՝ ՀՊՄՀ, ԳՊՀ) նշում են, որ գործում են ընդհանուր էթիկական կանոններ և հանձնաժողովներ, որոնք այժմ ընդլայնվում են՝ ներառելու ԱԲ-ի էթիկական կիրառման սկզբունքները։ ՀՊՄՀ-ում ավարտական և մագիստրոսական աշխատանքների պատրաստման կարգերում արդեն սահմանված է ԱԲ-ի կիրառման առավելագույն թույլատրելի ծավալը, ինչպես նաև համապատասխան հղումների կատարումը։
- **Մշակման փուլում գտնվող նախաձեռնություններ.** Որոշ բուհեր արձանագրել են, որ ԱԲ-ի էթիկական կանոնակարգերը դեռ մշակման փուլում են, և նախատեսվում է դրանց ինտեգրում բուհի ընդհանուր էթիկայի կանոնների մեջ։
- **Ոչ ֆորմալ մոտեցումներ.** Մոտ մեկ տասնյակ բուհերում ԱԲ գործիքների կիրառությունը տեղի է ունենում առանձին դասախոսների նախաձեռնությամբ՝ առանց միասնական վերահսկողության։
- **Առկա էթիկայի կանոնների ընդհանրական բնույթ.** Շատ բուհեր ունեն էթիկայի հանձնաժողովներ կամ կանոնակարգեր, որոնք նախատեսում են ակադեմիական ազնվության ընդհանուր սկզբունքներ, սակայն դրանք չեն անդրադառնում ԱԲ-ի կիրառման առանձնահատկություններին։

Այսկերպ, բուհերի մեծ մասում (ավելի քան երկու երրորդում) **արհեստական բանականության կիրառման քաղաքականությունները բացակայում են**, իսկ առկա էթիկական փաստաթղթերը դեռ չեն հասցեագրում ԱԲ-ի գործիքների ազդեցությունը ուսուցման և գնահատման գործընթացների վրա։
Այնուամենայնիվ, առանձին բուհեր արդեն սկսել են քայլեր կատարել՝ սահմանելով ԱԲ-ի օգտագործման թույլատրելի ծավալ, հղումների պարտադիր նշման կանոններ և ներառելով թեման ակադեմիական ազնվության և գնահատման կանոնակարգերում։

Թվային միջավայրում ուսանողների խնդիրների լուծման միջոցառումներ և գնահատումներ
Այս դրույթով ուսումնասիրվել է՝ արդյոք բուհերն իրականացնում են **պարբերական և համակարգված միջոցառումներ**՝ ուղղված թվային միջավայրում ուսանողների առաջացող խնդիրների լուծմանը, մասնավորապես՝

- թվային տեխնոլոգիաների և հուսալի համացանցային կապի հասանելիության ապահովում,
- թվային գրագիտության և հմտությունների զարգացում,
- ուսանողների կարիքների պարբերական գնահատում։

Գծապատկեր 34. Թվային միջավայրում ուսանողների խնդիրների լուծման միջոցառումների և գնահատումների առկայություն



Աղյուսակ 41. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
0 – Չգիտեմ / չեմ կարող պատասխանել	4	7.27%	Պատասխանողը տեղեկացված չէ իրականացվող ծրագրերի մասին
1 – Առկա չէ	18	32.73%	Բուհում նման քաղաքականություն կամ ծրագրեր չկան
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	13	23.64%	Գործընթացները կատարվում են անհատական կամ ամբիոնային մակարդակով՝ առանց պաշտոնական ձևակերպման
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	1	1.82%	Մշակվում է համապատասխան կարգ կամ ռազմավարություն
4 – Համակարգային կերպով իրականացվող	19	34.55%	Բուհում գործում են հաստատված միջոցառումներ և գնահատման մեխանիզմներ՝ ուսանողների թվային կարիքների լուծման ուղղությամբ
Ընդամենը	**55**	**100%**	

34.55% բուհեր ունեն համակարգային մոտեցում՝ իրականացնելով պարբերական գնահատումներ և ուսանողների թվային կարիքների վերհանում: 23.64% բուհերում իրականացվում են աջակցման ոչ ֆորմալ միջոցառումներ՝ ըստ անհրաժեշտության կամ ամբիոնների նախաձեռնությամբ: 32.73% բուհերում նման գործընթացներ առկա չեն: Հիմնավորումների բովանդակությունը վկայում է մի շարք դրական միտումների և տարբեր փորձառությունների մասին.

- **Համակարգային մոտեցումներ.** Որոշ բուհեր (օր.՝ ԳՊՀ, ՀՊՄՀ, ԲՊՀ) պարբերաբար իրականացնում են ուսանողների կարիքների վերհանում, թվային միջավայրում նրանց խնդիրների մոնիտորինգ և պատասխանատու ստորաբաժանումների միջոցով

աջակցության տրամադրում: ԳՊՀ-ում, օրինակ, ուսանողները յուրաքանչյուր կիսամյակ մասնակցում են անանուն հարցումների, որոնց միջոցով գնահատվում է թվային միջավայրի հասանելիությունն ու աջակցման արդյունավետությունը:

- **Ոչ ֆորմալ պրակտիկաներ.** Բազմաթիվ բուհերում աջակցությունը կազմակերպվում է ամբիոնների, SS բաժինների կամ դասախոսների կողմից՝ անհատական ձևաչափով: Թեև այս փորձը տարածված է, այն դեռևս չունի ինստիտուցիոնալ հիմք:
- **Թվային հմտությունների զարգացման օրինակներ.** Մի շարք բուհերում իրականացվում են ուսումնական ծրագրեր կամ առանձին դասընթացներ՝ «Մեդիագրագիտություն», «ՏՀՏ հիմունքներ» և այլ թեմաներով, որոնք նպաստում են ուսանողների թվային հմտությունների ձևավորմանը:
- **Քաղաքականությունների բացակայություն.** Թեև որոշ հաստատություններ արձանագրում են տեխնիկական աջակցության առկայություն, այնուամենայնիվ, համակարգված մոտեցում դեռևս սահմանված չէ:

Թվային միջավայրում ուսանողների խնդիրների լուծման ոլորտը բուհերում գտնվում է ակտիվ զարգացման փուլում: Մոտ մեկ երրորդ բուհերում ձևավորվել են հաստատված ընթացակարգեր և մոնիտորինգային մեխանիզմներ, իսկ մնացած հատվածում գործընթացը հիմնականում ոչ ֆորմալ բնույթ ունի: Ուսանողների թվային գրագիտության բարձրացմանն ուղղված գործունեությունը, թեև ընդլայնվում է, սակայն դեռևս պահանջում է համալիր ռազմավարական մոտեցում:

Բաժին 11. Մշտադիտարկում և շարունակական բարելավում

Ուսանողների կարծիքների կանոնավոր հավաքագրում թվային ուսուցման փորձի վերաբերյալ

Գնահատվել է՝ արդյոք բուհերը կիսամյակային/տարեկան պարբերականությամբ ուսանողներից հավաքագրում են կարծիքներ թվային ուսուցման փորձի մասին (հարցումներ, ֆոկուս-խմբեր, քննարկումներ) և այդ տվյալները դարձնում են բարելավման հիմք:

Գծապատկեր 35. Ուսանողների կարծիքների կանոնավոր հավաքագրում թվային ուսուցման փորձի վերաբերյալ



Աղյուսակ 42. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Գնահատման տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
0 – Չգիտեմ / հայտնի չէ	5	9.09%	Տեղեկատվության բացակայություն պատասխանողի մակարդակում
1 – Առկա չէ	15	27.27%	Կանոնավոր հավաքագրում չի իրականացվում
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	7	12.73%	Տարասպան, անհատական կամ ամբիոնային նախաձեռնություններով
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	5	9.09%	Գործընթացը ձևակերպվում է, բայց դեռ ոչ կայուն
4 – Համակարգային կերպով իրականացվող	23	41.82%	Կանոնակարգված հարցումներ/ֆոկուս-խմբեր ու զեկույցներ
Ընդամենը	**55**	**100%**	

41.82% բուհերում ուսանողական կարծիքների հավաքագրումն իրականացվում է համակարգային ձևով (հաճախ՝ ՈԱ կենտրոնների միջոցով)։ 27.27% հաստատություններում նման պրակտիկա չկա։

Բուհերի ներկայացուցիչների կողմից ներկայացված հիմնավորումները ցույց են տալիս հետևյալ պատկերը.

- **Գործիքներ.** Տարածված են Google Forms/SurveyMonkey հարցումները, ինչպես նաև ֆոկուս-խմբային քննարկումներ։
- **Կառավարում.** Շատ բուհերում գործընթացը համակարգում է Որակի ապահովման կենտրոնը, պատրաստվում են զեկույցներ և ներկայացվում ղեկավար մարմիններին։
- **Ծածկույթ.** Թվային ուսուցման մասին հատուկ բաժիններն անպայման ընդգրկվում են ընդհանուր ուսանողական հարցաշարերում (պլատֆորմների որակ, հասանելիություն, բավարարվածություն)։
- **Բացեր.** Որոշ բուհերում հավաքագրումը կատարվում է ոչ պարբերաբար կամ միայն դասախոսների անհատական նախաձեռնությամբ, իսկ արդյունքների հետադարձ կապը միշտ չէ, որ ապահովվում կամ հրապարակվում է։

Ընդհանուր պատկերը ցույց է տալիս, որ բուհերի զգալի մասը արդեն անցել է կանոնակարգված ուսանողական հետադարձ կապի ռեժիմի, սակայն մոտ մեկ երրորդում դեռ պակասում են պարբերականությունը կամ ինստիտուցիոնալ մեխանիզմները։

Դասախոսական կազմի կարծիքների կանոնավոր հավաքագրում թվային ուսուցման մասով

Գնահատվել է՝ արդյոք բուհերը պարբերաբար և ինստիտուցիոնալ ձևով հավաքում են դասախոսների կարծիքներն ու կարիքները թվային ուսուցման վերաբերյալ (գործիքներ, հարթակներ, աջակցություն, վերապատրաստումներ) և օգտագործում են դրանք բարելավման համար։

Գծապատկեր 36. Դասախոսական կազմի կարծիքների կանոնավոր հավաքագրում թվային ուսուցման մասով



Քանակական պատկեր

Աղյուսակ 43. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
0 – Չգիտեմ / հայտնի չէ	6	10.91%	Տեղեկատվության բացակայություն պատասխանողի մակարդակում
1 – Առկա չէ	17	30.91%	Կանոնավոր հավաքագրում չի իրականացվում
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	9	16.36%	Անհատական/ամբիոնային նախաձեռնություններով
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	6	10.91%	Գործընթացը ձևակերպվում է, բայց դեռ կայուն չէ
4 – Համակարգային կերպով իրականացվող	17	30.91%	Տարեկան/կիսամյակային հարցումներ, զեկույցներ, քննարկումներ
Ընդամենը	**55**	**100%**	

Համակարգային հավաքագրում ունի ~31% բուհերի խումբը՝ համարժեք բաժնով այն բուհերի հետ, որտեղ մոտ մոտեցում չկա (31%)։

Որակական հիմնավորումները ցույց են տալիս հետևյալ պատկերը.

- **Գործիքներ.** Google Forms/Analytics, ներքին AMS/LMS հարցումներ, ֆոկուս-խմբեր, ամբիոնային նիստեր։
- **Կառավարում.** Շատ դեպքերում համակարգումն իրականացնում է Որակի ապահովման բաժինը/կենտրոնը, ձևակերպվում են տարեկան պլաններ և զեկույցներ։
- **Բացեր.** Մի շարք հաստատություններում գործընթացը կա, բայց ոչ պարբերական է կամ դեռ մշակման փուլում, իսկ արդյունքների հետադարձ կապը միշտ չէ, որ հասանելի է ամբիոններին/դասախոսներին։

Ուսանողներից ստացվող հետադարձ կապի տվյալների վերլուծության ընթացակարգ
Գնահատվել է՝ արդյո՞ք բուհերն ունեն հստակ ընթացակարգ, որով վերլուծվում են ուսանողների հետադարձ կապից ստացված տվյալները (առաջադիմություն, մասնակցություն, բավարարվածություն)՝ թվային ուսուցման բարելավումներ նախագծելու համար:

Գծապատկեր 37. Ուսանողներից ստացվող հետադարձ կապի տվյալների վերլուծության ընթացակարգի առկայություն



Աղյուսակ 44. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
0 – Չգիտեմ / հայտնի չէ	6	10.91%	Տեղեկատվության բացակայություն
1 – Առկա չէ	18	32.73%	Ընթացակարգ չի գործում
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	12	21.82%	Ամբիոնային/անձնական նախաձեռնություններ
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	3	5.45%	Ձևակերպվում է, բայց դեռ կայուն չէ
4 – Համակարգային կերպով իրականացվող	16	29.09%	Կանոնակարգ, հաշվետվություններ, գործողությունների պլան
Ընդամենը	**55**	**100%**	

Մոտ 29% բուհերի մոտ կա համակարգային վերլուծություն, մինչդեռ 33%-ի մոտ այն բացակայում է:
Դիտարկումների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալ պատկերը.

- **Գործիքներ.** Google Forms/հարցաշարեր, ՈԱ կենտրոնի զեկույցներ, ռեկտորատ/ամբիոններին ներկայացվող ամփոփումներ:
- **Կառավարում.** Շատ տեղերում գործընթացը համակարգում է Որակի ապահովման ստորաբաժանումը, սակայն մի մասը դեռ մշակման փուլում է կամ ոչ փաստաթղթավորված:

- **Սահմանափակում.** Մասամբ նշվում է, որ գործիքակազմը ոչ հատուկ է թվային ուսուցման բարելավումների թիրախավորմանը (ավելի լայն է, քան թվայինն է)։ Կա հիմք մշտադիտարկման և վերլուծության համար, սակայն յուրաքանչյուր երրորդ բուհում ընթացակարգը բացակայում է, իսկ մյուս կարևոր հատվածում՝ ոչ ֆորմալ է։

Թվային ուսուցման լավագույն փորձի տարածում բուհում

Գնահատվել է՝ արդյոք բուհը պարբերաբար տարածում է թվային ուսուցման լավագույն փորձը, ներառյալ՝ ուսանողների և դասախոսների գնահատումների արդյունքները, բարելավման գործողությունները, և ներբուհական փոխանակման մեխանիզմները։

Գծապատկեր 38. Թվային ուսուցման լավագույն փորձի տարածման մեխանիզմների առկայություն



Աղյուսակ 45. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
0 – Չգիտեմ / հայտնի չէ	5	9.09%	Տեղեկատվության բացակայություն պատասխանողի կողմից
1 – Առկա չէ	24	43.64%	Գործընթացը բացակայում է կամ իրականացվում է ոչ կանոնավոր
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	11	20.00%	Փորձի փոխանակում՝ անհատական կամ ամբիոնային մակարդակով
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	1	1.82%	Գործընթացը ձևակերպվում է, բայց դեռևս չի կիրառվում հետևողականորեն
4 – Համակարգային կերպով իրականացվող	14	25.45%	Գործուն պարբերական մեխանիզմ՝ հաշվետվություններ, սեմինարներ, կայք
Ընդամենը	**55**	**100%**	

44% բուհերի մոտ գործընթացը բացակայում է, իսկ մոտ 25%–ում այն իրականացվում է համակարգային ձևով: Թվային ուսուցման փորձի փոխանակման մշակույթը դեռևս ձևավորման փուլում է:

Որակական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալ պատկերը.

- **Տարածման ձևեր.**
  - հաշվետվությունների և ամփոփումների ներկայացում ռեկտորատում, ֆակուլտետային խորհրդում, գիտխորհրդում,
  - ամբիոնային կամ ֆակուլտետային սեմինարներ,
  - ՈԱ բաժնի կամ բուհական կայքի միջոցով հրապարակումներ:
- **Կանոնավոր մեխանիզմներ** ունեն սահմանափակ թվով բուհեր (օր.՝ ԳՊՀ, ԵՊՀ, ՀՊՄՀ, ՀԱԱՀ), որտեղ փորձի փոխանակումն իրականացվում է էլեկտրոնային հարթակների միջոցով:
- **Բացեր.** Շատ հաստատություններում հետադարձ կապի արդյունքները մնում են ներքին հաշվետվությունների մակարդակում՝ առանց տարածման կամ բարելավման համակարգված շարունակության: Թվային ուսուցման լավագույն փորձի տարածումը ներկայում ավելի հաճախ կատարվում է անհատական նախաձեռնություններով, ոչ թե ինստիտուցիոնալ քաղաքականությամբ: Դեռևս պահանջվում է ստեղծել թափանցիկ և պարբերական մեխանիզմներ, որոնք կապահովեն փորձի փոխանակման շարունակական հոսք և բարելավման ցիկլի ամբողջականություն:

Թվային ուսուցման բովանդակության և գործիքների պարբերական վերանայում և թարմացում

Գնահատվել է, թե որքանով են բուհերում ձևավորված պարբերական մեխանիզմներ՝ թվային ուսուցման բովանդակության և գործիքների վերանայման և թարմացման համար: Այս դրույթը վերաբերում է թե՛ կրթական բովանդակության արդիականացմանը, թե՛ տեխնոլոգիական լուծումների և ուսուցման հարթակների արդիականությանը:

Գծապատկեր 39. Թվային ուսուցման բովանդակության և գործիքների պարբերական վերանայում և թարմացում



Աղյուսակ 46. Քանակական բաշխում՝ ըստ պատասխանների և տոկոսների

Տարբերակ	Քանակ	%	Բնութագիր
0 – Չգիտեմ / հայտնի չէ	4	7.27%	Պատասխանողը տեղյակ չէ ընթացակարգերից
1 – Առկա չէ	18	32.73%	Թարմացման հաստատված գործընթաց չկա կամ իրականացվում է անկանոն կերպով
2 – Ոչ ֆորմալ / ըստ անհրաժեշտության	14	25.45%	Թարմացումները կատարվում են անհատական կամ ամբիոնային նախաձեռնությամբ
3 – Փաստաթղթավորված / մշակման փուլում	4	7.27%	Կանոնակարգերը մշակման փուլում են, բայց դեռ չեն կիրառվում
4 – Համակարգային կերպով իրականացվող	15	27.27%	Գործընթացը ձևակերպված է և պարբերաբար իրականացվում է տարբեր կառույցների մասնակցությամբ

Գրեթե մեկ երրորդ բուհերում (33%) վերանայման ձևավորված քաղաքականություն չկա, իսկ մեկ քառորդում (25%) այն իրականացվում է ոչ ֆորմալ ձևով։ Միևնույն ժամանակ, մոտ 27% բուհերում արդեն առկա են համակարգային մեխանիզմներ՝ պարբերական վերանայումների և մշտադիտարկման միջոցով։

Որակական պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալ պատկերը.

- Շատ բուհերում թվային ուսուցման բովանդակությունը **թարմացվում է ըստ անհրաժեշտության**, առանց միասնական չափորոշիչների կամ պլանավորված ցիկլի։
- Որոշ բուհեր ունեն **թարմացման և մշտադիտարկման հաստատված քաղաքականություններ** (օր.՝ ՇՊՀ, ՀՊՄՀ, ԳՊՀ)։
- Թարմացումները ներառում են՝
  - ուսումնական պլատֆորմների (Moodle, Google Classroom) գործառույթների բարելավում,
  - էլեկտրոնային փաթեթների, դասընթացների վերանայում,
  - ՊԴ վերապատրաստումներ,
  - ամբիոնային քննարկումներ և հաշվետվություններ։
- Միևնույն ժամանակ, մի շարք հիմնավորումներ մատնանշում են խոչընդոտներ՝
  - **հատվածային վերահսկման մեխանիզմներ**,
  - **դասախոսների թվային հմտությունների տարբեր մակարդակ**,
  - **իրավական սահմանափակումներ** առցանց ուսուցման մասով որոշ մասնագիտությունների դեպքում։

Թվային ուսուցման բովանդակության և գործիքների թարմացումը բուհական համակարգում սկսել է դառնալ պարբերական և գիտակցված գործընթաց, սակայն այն դեռևս լիարժեք ինստիտուցիոնալացված չէ։ Թարմացումների մեծ մասն իրականացվում է ոչ ֆորմալ ձևով՝ առանց միասնական ընթացակարգերի կամ գնահատման ցուցիչների։ Այնուամենայնիվ, մի

շարք բուհերում ձևավորվում են հստակ կառավարչական և որակի ապահովման մեխանիզմներ, որոնք ապահովում են վերանայման պարբերականությունը։

Բաժին 12. ՀՀ բուհերում որակյալ թվային ուսուցման հիմնական մարտահրավերներ

Հարցի շրջանակներում բուհերի ներկայացուցիչներն առանձնացրել են թվային ուսուցման հիմնական մարտահրավերները, որոնք խմբավորվել են մի քանի թեմատիկ ուղղություններում։

Աղյուսակ 47. Քանակական բաշխում՝ ըստ հիմնական ուղղությունների

Մարտահրավերի խումբ	Տոկոսային բաժին	Բնութագիր
Տեխնիկական ենթակառուցվածքների սահմանափակումներ	≈80%	Համացանցի արագության, սարքավորումների, սերվերների և միասնական հարթակների պակաս։
Դասախոսների և ուսանողների թվային հմտությունների անհավասար մակարդակ	≈75%	Հատկապես տարիքային տարբեր խմբերի թվային կարողությունների անհամաչափություն և վերապատրաստման պակաս։
Ֆինանսական և մարդկային ռեսուրսների սղություն	≈60%	Տեխնիկական հագեցվածության և ծրագրային ապահովման թարմացման միջոցների սահմանափակություն։
Բովանդակության և մեթոդաբանության ադապտացիայի խնդիրներ	≈55%	Առցանց ձևաչափում դասընթացների կառուցման, գնահատման և գործնական բաղադրիչի ինտեգրման դժվարություններ։
Կանոնակարգերի և քաղաքականությունների բացակայություն	≈40%	Թվայնացման գործընթացների իրականացում՝ «ըստ անհրաժեշտության», առանց հաստատված ներքին ընթացակարգերի։
Մոտիվացիայի և ներգրավվածության խնդիրներ	≈25%	Ուսանողների պասիվություն և դասախոսների մոտիվացիայի նվազում թվային ուսուցման նկատմամբ։

Վերլուծության շրջանակում առանձնացված հիմնավորումներ

- Միասնական առցանց հարթակի բացակայություն, բարձր տարիքի ՊԴ կազմի թվային հմտություններին ոչ լիարժեք տիրապետում
- Ֆինանսական ռեսուրսների սղություն, հզոր սերվերային համակարգի բացակայություն
- Թվային քաղաքականության բացակայություն
- Բովանդակության և մեթոդաբանության հարմարեցման դժվարություններ՝ տեխնոլոգիական սահմանափակումների պատճառով

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ թվային ուսուցման որակի ապահովման համակարգը բուհերում գտնվում է **ձևավորման և ինստիտուցիոնալացման նախնական փուլում**:

Մարտահրավերների մեծ մասը կառուցվածքային և համակարգային բնույթի են՝ պայմանավորված **տեխնոլոգիական հիմքերի**, **մարդկային ներուժի** և **կառավարման մեխանիզմների** անհստակությամբ:

Բուհերի մեծ մասում թվային ուսուցումը զարգանում է ոչ թե հաստատված ռազմավարությամբ, այլ **անհատական կամ ամբիոնային նախաձեռնություններով**, ինչը հանգեցնում է անհամաչափ փորձի: Միևնույն ժամանակ, առկա է **զարգացման ներուժ**՝ կապված դրական հետևյալ միտումների հետ.

- թվային գործիքների կիրառման ընդլայնում,
- դասախոսների վերապատրաստման պահանջարկի աճ,
- առանձին բուհերում քաղաքականությունների և ընթացակարգերի մշակման մեկնարկ:

Բաժին 13. ՀՀ բուհերում առցանց ուսուցման կազմակերպման հաջողված փորձեր

Հարցաշարի շրջանակում վերլուծության են ենթարկվել ՀՀ բուհերի թվային ուսուցման մեթոդների կիրառման և դրանց հաջողված փորձերը, որոնք կարող են լինել օգտակար մյուս հաստատությունների համար:

Հաջողված փորձերի օրինակներ

1. **ԲՊՀ-ի հայերենի էլեկտրոնային ուսուցում օտարերկրացիների համար**. ԲՊՀ-ում կիրառում են **էլեկտրոնային ուսուցման համակարգ**, որը նախատեսված է օտարերկրացի ուսանողների համար՝ դասընթացները կազմակերպելու և գնահատելու համար: Այս համակարգը օգտագործում է **համագործակցային մոտեցում**, որտեղ ուսանողները կարողանում են կիրառել **աուդիո գործիքներ**՝ ծանոթանալով հայերենի հնչյունական համակարգին: Նման գործիքների միջոցով ուսանողները զարգացնում են իրենց ընթերցանության հմտությունները, ինչը թույլ է տալիս նրանց գործնական առաջադրանքների միջոցով ստանալ անմիջական արդյունքներ: Այս մեթոդը, որ կիրառվել է ուսումնական գործընթացում, տալիս է որոշակի առաջադիմություն և հեշտացնում է ուսանողների ներգրավվածությունը:
2. **HyFlex մեթոդը՝ ԳՊՀ-ում**. ԳՊՀ-ում հաջողությամբ ներդրվել է **HyFlex** (Hybrid-Flexible) մեթոդը, որը համատեղում է **անցանց** և **առցանց** ուսուցման ձևաչափերը: Այս մեթոդը սովորեցնում է ինչպես դասավանդել ինչպես համաժամանակյա (live/online), այնպես էլ տարաժամանակյա (recorded/self-paced) ձևաչափերով: Ուսանողները կարող են ընտրել իրենց անհատական մոտեցմանը համապատասխան եղանակը՝ մասնակցելով թե առցանց, թե տեղում դասերին: Այս հիբրիդ մոդելը հնարավորություն է տալիս ուսանողներին համատեղել առկա դասերը և առցանց ուսուցումը, ինչը նպաստում է ուսանողների ավելի ակտիվ մասնակցությանը և ուսումնական նյութերի հետ ինքնուրույն աշխատելու կարողության զարգացմանը:
3. **Microsoft Teams-ի և Google Classroom-ի ինտեգրում**. Բազմաթիվ բուհերում հաջողությամբ օգտագործվում են **Microsoft Teams** և **Google Classroom** հարթակները՝

ուսումնական գործընթացի կազմակերպման համար: Այս մոտեցումը դասախոսներին և ուսանողներին հնարավորություն է տալիս հեշտությամբ հարաբերակցել, փոխանակվել նյութերով և գնահատականներով՝ ապահովելով ավելի արդյունավետ և հարմարավետ ուսուցման միջավայր: Այս գործիքներն ապահովում են **հնարավորություն հաղորդակցության**, նյութերի բաշխման և հանձնարարությունների կատարման համար:

4. **COVID-19-ի պայմաններում առցանց ուսուցման արագ ներդրում**. COVID-19 համավարակի ժամանակ, ամբողջ կրթական համակարգը անցել է առցանց հարթակների կիրառման: Այս ժամանակահատվածում բուհերն օգտագործել են արդեն գործող **թվային ենթակառուցվածքները**, ինչը հնարավորություն է տվել ուսումնական գործընթացը կազմակերպելու առցանց ձևաչափով:

Հարցաշարի վերլուծությունները ցույց են տալիս, որ բուհերը առավել շատ շեշտադրում են **հիբրիդային ուսուցման իրականացումը**: Շատ կարևոր է նաև **նոր տեխնոլոգիաների արագ ներդրումը**, ինչպես օրինակ՝ **Google Classroom**, **Microsoft Teams** և **Moodle**, որոնք ապահովում են դասերի կազմակերպումը, ուսանողների ներգրավվածությունը և արդյունավետ աշխատանք: Սակայն պետք է նաև նշել, որ որոշ փորձեր, օրինակ, **առցանց գրադարանների և կրթական ռեսուրսների ինտեգրումը**, դեռ պահանջում են զարգացում, ինչպես նաև անհրաժեշտ է լրացուցիչ ներդրումներ կատարել **տեխնիկական ենթակառուցվածքների** բարելավման համար՝ աջակցելու թվային գործիքների լիարժեք կիրառմանը:

Բաժին 14. Լրացուցիչ դիտարկումներ և առաջարկություններ

Հարցաշարի շրջանակում բուհերի ներկայացուցիչներն արել են համապատասխան առաջարկություններ և դիտարկումներ, որոնք վերաբերում են թվային ուսուցման գործընթացի բարելավմանը: Առաջարկությունները խմբավորվել են հիմնական մի քանի խմբերում և ներկայացված են ստորև.

Հիմնական առաջարկություններ

1. **Թվային կոմպետենցիաների շրջանակի ներդրում**
   Բարձրացվել է թվային կոմպետենցիաների կարիքը, որը կարող է բարելավվել՝ նպատակ ունենալով ներդնել թվային և առցանց կրթության ավելի որակյալ գնահատման մեխանիզմներ:
2. **Վիրտուալ լաբորատորիաների և սիմուլյատորների զարգացման անհրաժեշտություն**
   Առաջարկվել է զարգացնել վիրտուալ լաբորատորիաներ և սիմուլյատորներ՝ հատուկ շարժումների վերլուծության, կենսամեխանիկական և ֆիզիոլոգիական գնահատումների համար:
3. **Հիբրիդ ուսուցման մոդելի կիրառում**
   Առաջարկվում է զարգացնել խառը ուսուցման մոդելը, որտեղ տեսական նյութերը կլինեն առցանց տարբերակով հասանելի, իսկ գործնական պարապմունքները կանցկացվեն գործնական միջավայրում՝ այսպիսով համատեղելով տեսական և գործնական ուսուցումը:
4. **Դասախոսների և ուսանողների թվային գրագիտության վերապատրաստումներ**

Անհրաժեշտություն կա կազմակերպել թվային գրագիտության վերապատրաստումներ՝ ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների համար։ Սա թույլ կտա բարելավել թվային կրթության կարողությունները բոլոր մասնակիցների համար։

5. **Մեթոդական աջակցություն և շարունակական վերապատրաստումներ**
   Նշվել է, որ անհրաժեշտ է ստեղծել մեթոդական աջակցություն տրամադրող պատասխանատու միավոր և իրականացնել շարունակական վերապատրաստումներ դասախոսների համար, որպեսզի նրանք կարողանան արդյունավետ կիրառել թվային գործիքները և օպտիմալացնել ուսուցման գործընթացը։
6. **Թվային ուսուցման որակի չափորոշիչների սահմանում և մշտադիտարկման իրականացում**
   Դիտարկվել է, որ թվային ուսուցման որակի չափորոշիչներ պետք է սահմանվեն և կիրառվեն շարունակական բարելավման նպատակով։
7. **Տեխնիկական հագեցվածության բարձրացում**
   Հաճախ կրկնվել է անհրաժեշտությունը տեխնիկական հագեցվածության բարձրացման, ինչպես նաև համապատասխան մարդկային ռեսուրսների պատրաստվածության։

Պատասխաններն ընդգծում են, որ **թվային կրթության** բարելավումը մի քանի ոլորտներում պետք է լինի ինտեգրված՝ տեխնոլոգիական հագեցվածությունից մինչև վերապատրաստման և մեթոդական աջակցություն։ Դիտարկվող որոշումներն ընդգծում են **հիբրիդային ուսուցման մոդելի** գործնական կիրառությունը, ինչպես նաև **թվային գրագիտության** բարելավման անհրաժեշտությունը։

IV. ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ բուհերում թվային ուսուցման որակի գնահատման վերլուծությունը ցույց է տալիս, որ ոլորտը գտնվում է ակտիվ ձևավորման և ինստիտուցիոնալացման փուլում։ Թվային կրթական միջավայրի ձևավորումը մի շարք բուհերում դիտվում է որպես ռազմավարական ուղղություն, սակայն դրա արդյունավետ կիրառումը դեռևս սահմանափակվում է մի շարք համակարգային և տեխնոլոգիական գործոններով։

Վերլուծության արդյունքներով պարզ է դառնում, որ բուհերի մեծ մասում թվային ուսուցման գործընթացները հիմնականում իրականացվում են **անհատական և ամբիոնային նախաձեռնությունների** հիման վրա՝ առանց հստակ հաստատված քաղաքականությունների և չափորոշիչների։ Սա հանգեցնում է թվայնացման անհամաչափ մակարդակների և փորձի տարաբնույթ ձևերի։ Միևնույն ժամանակ, արձանագրվում են նաև **զգալի դրական միտումներ**, որոնք ցույց են տալիս զարգացման ուղղությունները.

- Թվային գործիքների և հարթակների (Microsoft Teams, Google Classroom, Moodle) լայն կիրառում ուսուցման գործընթացում,
- Դասախոսների թվային հմտությունների զարգացման պահանջարկի աճ և վերապատրաստումների ակտիվացում,
- Թվային ուսուցման բովանդակության և մեթոդաբանության բարելավման առաջին քայլեր,
- Հիբրիդային մոդելների կիրառման դրական արդյունքներ՝ ուսանողների ներգրավվածության և ինքնուրույնության բարձրացման ուղղությամբ։

Միաժամանակ, հետազոտությունը վկայում է, որ թվային ուսուցման որակի բարձրացման հիմնական **մարտահրավերները** կապված են տեխնիկական ենթակառուցվածքների, մարդկային ռեսուրսների, ֆինանսական ապահովման և կառավարման մեխանիզմների թերզարգացվածության հետ։ Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է համակարգային մոտեցում՝ ներառյալ մեթոդական և տեխնոլոգիական բարելավումներ։

Առաջարկությունների շրջանակում առանձնանում են մի քանի առանցքային ուղղություններ.

- Թվային կոմպետենցիաների շրջանակի ներդրում և հաստատում,
- Դասախոսների և ուսանողների շարունակական վերապատրաստման ծրագրերի կազմակերպում,
- Թվային ուսուցման որակի չափորոշիչների և գնահատման գործիքակազմի մշակում,
- Վիրտուալ լաբորատորիաների, էլեկտրոնային գրադարանների և սիմուլյատորների զարգացում,
- Տեխնիկական հագեցվածության և հուսալի ենթակառուցվածքների ապահովում։

V. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Բուհում թվային ուսուցման որակի ապահովման (ՈԱ) համակարգի ինքնավերլուծության հարցաշար

Նպատակը

Սույն հարցաշարի նպատակն է բացահայտել Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում (բուհ) թվային և առցանց ուսուցման որակի ներկայիս վիճակը, ինչպես նաև հավաքագրել տվյալներ և փաստեր բուհի որդեգրած թվային ուսուցման ռազմավարությունների, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ: Հավաքագրված տեղեկատվությունը կօգնի բացահայտել թվային ուսուցման ոլորտում բուհի կարիքները և մշակել համապատասխան բարելավման միջոցառումներ:

Թիրախային խումբ

Հարցաշարը նախատեսված է բուհի վարչական անձնակազմի համար՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ՏՀՏ համակարգերի գծով պրոռեկտոր կամ կենտրոնի տնօրեն, որակի ապահովման բաժնի ղեկավար, դեկան, ուսումնամեթոդական վարչության պետ, կրթական ծրագրի ղեկավար և այլն:

Ընդհանուր տեղեկատվություն

Բուհը՝ _____

Լրացնողի անուն, ազգանուն՝ _____

Բուհում զբաղեցրած պաշտոնը՝ _____

Լրացման ամսաթիվ՝ _____

Ցուցումներ

Խնդրում ենք տրամադրել հակիրճ և փաստերի վրա հիմնված տեղեկատվություն: Հնարավորության դեպքում նշեք համապատասխան փաստաթղթերի, զեկույցների կամ ընթացակարգերի հղումները:

2-11 բաժիններում տվյալների գնահատման համար օգտվեք ստորև ներկայացված գնահատման (համապատասխանության) սանդղակից: Ձեր պատասխանը հիմնավորելու համար խնդրում ենք տրամադրել անհրաժեշտ փաստաթղթերի (քաղաքականություն, զեկույցներ, կարգեր/ կանոնակարգեր, կայքեր և այլն) հղումները:

Գնահատման (համապատասխանության) սանդղակ

Ձեր գնահատականը նշեք համապատասխանության վանդակում՝ ըստ հետևյալ սանդղակի.

- **0 – Չգիտեմ** - չեմ կարող պատասխանել/հայտնի չէ
- **1 – Առկա չէ -** փորձը կամ քաղաքականությունն առկա չէ
- **2 – Ոչ ֆորմալ//ըստ անհրաժեշտության** - փորձն առկա է, սակայն ոչ ֆորմալ է և կիրառվում է անհատների նախաձեռնությամբ կամ ըստ անհրաժեշտության
- **3 – Փաստաթղթավորված/մշակման փուլում** - պաշտոնական գործընթացը կամ քաղաքականությունը փաստաթղթավորված է, սակայն նոր է և հետևողականորեն չի կիրառվում
- **4 – Համակարգային կերպով իրականացվող** - փորձը կամ քաղաքականությունը պաշտոնապես հաստատված է և համակարգային կերպով իրականացվում է։

Բաժին 1. Ինստիտուցիոնալ նկարագրություն

1.1. Խնդրում ենք նշել այն ուսանողների մոտավոր թիվը կամ տոկոսը (%), որոնք ընդգրկված են էական թվային բաղադրիչ (առցանց, հիբրիդային, խառը և այլն) ունեցող դասընթացներում՝ _____

1.2. Խնդրում ենք նշել այն դասախոսների մոտավոր թիվը կամ տոկոսը (%), որոնք դասավանդում են էական թվային բաղադրիչ (առցանց, հիբրիդային, խառը և այլն) ունեցող դասընթացներ՝ _____

1.3. Նշեք Ձեր հաստատությունում լայնորեն կիրառվող ուսուցման կառավարման համակարգը (LMS).

( ) Մուդլ (Moodle)

( ) Կանվաս (Canvas)

( ) Բլեքբորդ (Blackboard)

( ) Հաստատությունում մշակված ներքին համակարգ (In-house system)

( ) Այլ՝ _____

Բաժին 2. Կառավարում և ՈԱ ռազմավարություն

Սույն բաժնի նպատակն է բացահայտել/գնահատել հաստատության հանձնառությունը և ֆորմալ կառույցները՝ ուղղված թվային ուսուցման որակի ապահովմանը:

N	ԴՐՈՒՅԹ	Համապատաս-խանության աստիճանը (0-4)	**Հիմնավորում** (փաստաթղթի, զեկույցի կամ կառույցի անվանումը և հղումը)
2.1.	Բուհն ունի թվային և առցանց ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ պաշտոնապես հաստատված ռազմավարություն կամ քաղաքականություն, որն ամրագրված է փաստաթղթերում (օր.՝ բուհի ռազմավարական ծրագիր, կարգ/ կանոնակարգ, որոշում և այլն)։		
2.2.	Թվային ուսուցման որակի ապահովման (ՈԱ) գործընթացում ներգրավված բոլոր ստորաբաժանումների (ֆակուլտետներ, ՈԱ կենտրոն, ՏՏ կենտրոն, ուսումնամեթոդական բաժին և այլն) դերն ու պարտականությունները հստակ սահմանված և փաստաթղթավորված են։		
2.3	Թվային ուսուցման իրականացման աշխատանքների համակարգման համար ստեղծված է առանձին կառույց կամ նշանակված է կառավարող օղակ։		

Բաժին 3. Ուսումնական պլանի և դասընթացի մշակում

Սույն բաժնի նպատակն է բացահայտել/գնահատել թվային ուսուսման դասընթացների մշակման և իրականացման գործընթացները:

N	ԴՐՈՒՅԹ	Համապատաս-խանության աստիճանը (0-4)	**Հիմնավորում** (փաստաթղթի, ձևաչափի կամ վերանայման գործընթացի անվանումը և հղումը)
3.1.	Բուհում առկա են չափորոշիչներ կամ ձևաչափեր (օրինակ՝ LMS-ում) թվային և առցանց դասընթացների մշակման, բովանդակության կառուցման և մատուցման համար։		
3.2	Բուհում գործում են հաստատված մեխանիզմներ և գործիքներ (օր.՝ մուլտիմեդիա և այլ ինտերակտիվ գործիքներ), որոնք ապահովում են ուսանողների ակտիվ մասնակցությունն ու ներառականությունը թվային դասընթացներում։		

3.3	Բուհում հաստատված է թվային դասընթացների որակի և արդիականության պարբերաբար վերանայման գործընթաց:		
3.4	Նոր թվային կամ առցանց դասընթացների որակի գնահատման համար գործում են հստակ մեխանիզմներ (օր.՝ գործընկերային գնահատում, վերանայում, հաստատում ղեկավար օղակի կողմից և այլն):		

Բաժին 4. Դասավանդում և ուսանում

Սույն բաժնի նպատակն է բացահայտել/գնահատել բուհի քաղաքականությունը և գործող մեխանիզմները, որոնք ուղղված են թվային միջավայրում բարձրորակ դասավանդման, արդյունավետ հաղորդակցության և հետադարձ կապի ապահովմանը:

N	ԴՐՈՒՅԹ	Համապատաս-խանության աստիճանը (0-4)	**Հիմնավորում** (համապատասխան քաղաքականության, ձեռնարկների, գնահատման չափանիշների կամ այլ փաստաթղթերի անվանումները և հղումները)
4.1.	Բուհն ունի դիդակտիկ ուղեցույցներ, որոնք խթանում են թվային ուսուցման տարբեր ձևերի կիրառումը (օր.՝ ակտիվ, սինխրոն/ասինխրոն առցանց ուսուցում և այլն):		
4.2.	Բուհն ունի հաստատված չափորոշիչներ, որոնք սահմանում են առցանց դասընթացներում ուսանողների հետ դասախոսների հաղորդակցության պահանջվող մակարդակը (օր.՝ առցանց հարթակներում արձագանքման առավելագույն ժամանակը, տեղեկատվության տրամադրման պարբերականությունը և այլն):		
4.3.	Բուհում ներդրված են մեխանիզմներ՝ առցանց դասընթացներում ուսանողների միջև համագոր-ծակցության ապահովման համար (օր.՝ խմբային նախագծեր, գործընկերային գնահատում, քննարկումներ):		
4.4.	Բուհում սահմանված են ընթացակարգեր՝ ապահովելու թվային բովանդակության հասանելիությունը բոլոր ուսանողների, այդ թվում՝ հատուկ կարիք ունեցողների համար (օր.՝ ձայնային օժանդակում և այլն):		

4.5.	Դասավանդման արդյունավետության և ուսանողների ներգրավվածության գնահատումը ներառված է դասընթացների և ծրագրերի պարբերական վերանայման գործընթացներում:		

Բաժին 5. Դասախոսական կազմի վերապատրաստում և օժանդակում

Սույն բաժնի նպատակն է բացահայտել/գնահատել առցանց դասավանդող դասախոսական կազմի օժանդակության համակարգերը:

N	ԴՐՈՒՅԹ	Համապատաս-խանության աստիճանը (0-4)	**Հիմնավորում** (վերապատրաստման ծրագրի, օժանդակման ծառայության, կամ ռեսուրսային պորտալի անվանումը և հղումը)
5.1.	Բուհում դասախոսների համար իրականացվում են պարտադիր վերապատրաստումներ թվային ուսուցման ձևերի և տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ (օր.՝ առցանց, խառը կամ հիբրիդային ուսուցում, խաղայնացում, թվային բովանդակու-թյան ստեղծում, և այլն)՝ նախքան նրանց առաջին առցանց դասավանդումը:		
5.2	Դասախոսներին հասանելի են թվային ուսուցման (թվային գործիքներ և մանկավարժական մոտեցումներ) վերաբերյալ շարունակական մասնագիտական զարգացման/վերապատրաս-տման ծրագրեր կամ այլ հնարավորություններ (սեմինարներ, առցանց դասընթացներ, փորձի փոխանակում):		
5.3.	Դասախոսական կազմին տրամադրվում են տեխնիկական աջակցության տարբեր ծառայու-թյուններ (օր.՝ մեդիա նյութերի ստեղծում և մատուցում)՝ բարձրորակ թվային ուսումնական նյութերի/դասընթացների մշակման համար:		
5.4.	Թվային ուսուցման լավագույն փորձը տարածելու նպատակով իրականացվում են խորհրդատվական ծրագրեր (օրինակ՝ գործընկերների միջև փորձի փոխանակում):		
	Քանակական տվյալներ	**Պատասխան**	**Հիմնավորում** (օր.՝ վերապատրաս-տումների

			գրանցամատյան և այլն)
5.5.	Առցանց դասավանդող դասախոսների քանի՞ տոկոսն է (%) անցել պարտադիր վերապատրաստում:	——— %	

Բաժին 6. Ուսանողների գնահատում և ակադեմիական ազնվություն

Սույն բաժնի նպատակն է գնահատել/բացահայտել թվային ուսուցման միջավայրում ուսանողների գնահատմանն առնչվող քաղաքականությունն ու ընթացակարգերը:

N	ԴՐՈՒՅԹ	Համապատաս-խանության աստիճանը (0-4)	**Հիմնավորում** (գնահատման, ակադեմիական ազնվության կարգերի և կիրառվող ծրագրային ապահովման անվանումը և հղումը)
6.1.	Բուհի գնահատման քաղաքականության մեջ հստակորեն սահմանված են թվային միջավայրում ուսանողների գնահատման չափանիշները:		
6.2.	Բուհում ձեռնարկված են միջոցառումներ առցանց գնահատման արժանահավատությունը, հուսալիությունը և արդարությունը ապահովելու համար:		
6.3.	Գործում են ընթացակարգեր՝ առցանց գնահատման միջավայրում ակադեմիական ազնվության սկզբունքները (խաբեության/արտագրության կանխում, վերահսկվող քննություններ և այլն) ապահովելու համար: :		
6.4.	Բուհը կիրառում է համակարգված տեխնոլոգիական լուծումներ և ընթացակարգեր (գրագողության դեմ պայքարի գործիքներ (օր.՝ Turnitin)՝ առցանց միջավայրում գրագողության և ակադեմիական անազնվության այլ ձևերը հայտնաբերելու և կանխելու համար:		
6.5.	Ուսումնառության արդյունքների ձեռքբերումն արժանահավատ կերպով գնահատելու նպատակով բուհը խրախուսում և աջակցում է թվային գնահատման բազմազանեցված մեթոդների (ձևավորող, ամփոփիչ, ինքնագնահատում) կիրառումը:		

6.6.	Բուհում համապատասխան կանոնակարգերով սահմանված են ուսանողներին գնահատականների վերաբերյալ հետադարձ կապի տրամադրման ժամկետներն ու ձևերը:		
	Քանակական տվյալներ	**Պատասխան**	**Հիմնավորում** (առցանց ուսուցման գնահատման կարգ, LMS-ի զեկույց և այլն)
6.7.	Ուսանողների ներկայացրած առցանց աշխատանքների ո՞ր տոկոսն է (%) ենթարկվում ավտոմատ ստուգման՝ գրագողության կանխարգելման ծրագրային գործիքների միջոցով:	____ %	

Բաժին 7. Ուսանողների օժանդակություն և աջակցող ծառայություններ

Սույն բաժնի նպատակն է գնահատել/բացահայտել առցանց միջավայրում սովորող ուսանողների աջակցության ծառայությունները:

N	ԴՐՈՒՅԹ	Համապատասխանության աստիճանը (0-4)	**Հիմնավորում** (ծառայության անվանումը, հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար նախատեսված քաղաքականության, առցանց դասընթացների մասին տեղեկատվության հղումները)
7.1.	Առցանց ուսուցման նախապատրաստելու նպատակով բոլոր ուսանողներին հնարավորություն է ընձեռվում մասնակցելու թվային գործիքների օգտագործման վերաբերյալ կողմնորոշման ծրագրերի և վերապատրաստումների:		
7.2.	Ուսումնական և տեխնիկական աջակցման ծառայությունները հատուկ նախատեսված են առցանց սովորող ուսանողների կարիքները բավարարելու համար (օր.՝ վիրտուալ միջավայրում ուսանողների մեկուսացումը նվազեցնելու համար օգտագործվում են խմբային աշխատանքներ, չատ ֆորումներ կամ սոցիալական մեդիա՝ ուսանողների փոխագործակցությունը խթանելու նպատակով):		
7.3	Բոլոր թվային դասընթացները/ուսումնական նյութերը համապատասխանում են մատչելիության չափորոշիչներին (մատչելի		

	են հաշմանդամություն ունեցող ուսանողներին, համապատասխանում են WCAG[1] ստանդարտներին):		

Բաժին 8. Տեխնոլոգիաներ և ենթակառուցվածք

Սույն բաժնի նպատակն է գնահատել/բացահայտել տեխնոլոգիական ենթակառուցվածքների և ուսանողների տվյալների կառավարման արդյունավետությունը:

N	ԴՐՈՒՅԹ	Համապատասխանության աստիճանը (0-4)	**Հիմնավորում** (SS օգտագործման գործընթացները սահմանող փաստաթղթի, ծառայությունների մատուցման փաստաթղթերի, տվյալների գաղտնիության ապահովման քաղաքականության անվանումները և հղումները)
8.1	Բուհի օգտագործման նպատակով ձեռք բերվող նոր կրթական տեխնոլոգիաները գնահատելու և ընտրելու համար առկա է համապատասխան ընթացակարգ:		
8.2.	Բուհում ներդրված են ընթացակարգեր՝ ուսումնական տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների (օր.՝ LMS) հուսալիության և արդյունավետության մշտադիտարկման նպատակով:		
8.3.	Ուսանողների ու դասախոսների համար գործում է շուրջօրյա (24/7) տեխնիկական աջակցություն, ինչն ապահովում է թվային և առցանց ուսուցման հարթակի հուսալիությունն ու կայունությունը:		

Բաժին 9. Տվյալների գաղտնիություն և անվտանգություն

Սույն բաժնի նպատակն է գնահատել/բացահայտել ուսանողների տվյալների պաշտպանության բուհում գործող համակարգերի համապատասխանությունն իրավական կարգավորումներին և լավագույն միջազգային փորձին:

N	ԴՐՈՒՅԹ	Համապատասխանության աստիճանը (0-4)	**Հիմնավորում** (համապատասխան քաղաքականությունը սահմանող փաստաթղթի անվանումը, տվյալների

[1] WCAG - Վեբ բովանդակության մատչելիության ուղեցույցներ

			պաշտպանության համար պատաս-խանատու ստորա-բաժանումը/ պա-տասխանատուն, հղումներ)
9.1.	Բուհն ունի տվյալների պաշտպանության գործող քաղաքականություն, որը համահունչ է համապատասխան իրավական ակտերին (օր.՝ GDPR[2]) և կարգավորում է ուսանողների տվյալների անվտանգությունն ու գաղտնիությունը թվային ուսումնական հարթակներում:		
9.2.	Բուհում առկա է հստակ և թափանցիկ գործընթաց, որով սահմանվում է ուսանողներից և աշխատակազմից համաձայնության ստացումը՝ նրանց տվյալները թվային ուսումնական հարթակներում հավաքագրելու և օգտագործելու նպատակով:		
9.3.	Բուհում սահմանված են ընթացակարգեր՝ թվային ուսումնական հարթակների միջոցով հավաքագրված ուսանողների տվյալների անվտանգ պահպանման, կառավարման և փոխանցման համար:		
9.4	Բուհը կանոնավոր կերպով իրականացնում է կիբերանվտանգության աուդիտ և կիրառում է համապատասխան միջոցներ՝ տվյալների հնարավոր արտահոսքը կամ կիբերսպառնալիքները կառավարելու և մեղմելու նպատակով:		

Բաժին 10. Էթիկա և արդարություն

Սույն բաժնի նպատակն է գնահատել/բացահայտել բուհի հանձնառությունը տեխնոլոգիաների և տվյալների էթիկական կիրառման, ինչպես նաև թվային միջավայրում բոլոր ուսանողների համար արդարության ապահովման գործում:

N	ԴՐՈՒՅԹ	Համապատաս-խանության աստիճանը (0-4)	**Հիմնավորում** (էթիկայի, արդարության, արհեստական բանականության կիրառման քաղաքականություն

[2] Անձնական տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգ

			ները, էթիկայի հանձնաժողովի հղումները)
10.1.	Բուհն ունի հաստատված կանոնակարգեր կամ ուղեցույցներ, որոնք ապահովում են արհեստական բանականության (ԱԲ) էթիկական և թափանցիկ կիրառումը ուսուցման և գնահատման մեջ:		
10.4.	Բուհը պարբերաբար իրականացնում է համակարգված միջոցառումներ և գնահատումներ՝ միտված թվային միջավայրում ուսանողների մոտ առաջացած խնդիրների լուծմանը (թվային տեխնոլոգիաների և հուսալի ինտերնետի հասանելիություն, թվային գրագիտություն/ հմտությունների առկայություն):		

Բաժին 11. Մշտադիտարկում և շարունակական բարելավում

Սույն բաժնի նպատակն է գնահատել/բացահայտել թվային ուսուցման որակի շարունակական բարելավման մեխանիզմները:

N	ԴՐՈՒՅԹ	Համապատասխանության աստիճանը (0-4)	**Հիմնավորում** (հարցման գործիքները, զեկույց արդյունքների վերաբերյալ, ՈԱ հանձնաժողովի արձանագրությունների հղումները)
11.1.	Բուհը կանոնավոր կերպով (օր.՝ տարեկան կամ կիսամյակային կտրվածքով) հավաքագրում է ուսանողների կարծիքները թվային ուսուցման իրենց փորձի վերաբերյալ (հարցումներ, ֆոկուս-խմբեր և քննարկումներ):		
11.2.	Բուհը կանոնավոր կերպով հավաքագրում է դասախոսական կազմի կարծիքները թվային ուսուցման կարիքների և փորձի վերաբերյալ:		
11.3.	Բուհն ունի ընթացակարգ, որի օգնությամբ վերլուծվում են ուսանողներից հետադարձ կապի օգնությամբ ստացված տվյալները (առաջադիմության ու ներգրավվածության ցուցանիշները)՝ թվային ուսուցման բարելավման ուղղությունները բացահայտելու նպատակով:		
11.4.	Թվային ուսուցման լավագույն փորձի տարածման նպատակով վերոնշյալ գնահատումների արդյունքները պարբերաբար տարածվում են բուհում:		

11.5.	Բուհն ըստ անհրաժեշտության (տարեկան, կիսամյակային և այլ կտրվածքով) վերանայում և թարմացնում է թվային ուսուցման բովանդակությունն ու գործիքները:		

Բաժին 12. Բաց հարցեր

1. Նշեք Ձեր բուհում որակյալ թվային ուսուցման ապահովման երեք հիմնական մարտահրավերները:
2. Ներկայացրեք մեկ կամ երկու հաջողված փորձ, որոնք Ձեր կարծիքով կարող են օգտակար լինել որակյալ թվային ուսուցում կազմակերպելու տեսանկյունից:
3. Լրացուցիչ դիտարկումներ և առաջարկություններ:

Հարցաշարի վերջը

Հավելված 2. Հարցաշարը լրացրած բուհերի ցանկ.

1. Ավանդական բժշկության համալսարան
2. Գավառի պետական համալսարան
3. Գորիսի պետական համալսարան
4. Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ
5. Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
6. Երևանի պետական համալսարան
7. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
8. Հայաստանի ազգային ագրարային համալսարան
9. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
10. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղ
11. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ
12. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
13. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
14. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն
15. ՀՀ Ներքին գործերի նախարարության կրթահամալիր
16. ՀՀ պետական կառավարման ակադեմիա
17. ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարան
18. Հյուսիսային համալսարան
19. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
20. «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան
21. Շիրակի պետական համալսարան
22. Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան
23. Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարան

Co-funded by the European Union

Համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակ(ներ)ին և անպայմանորեն չեն արտացոլում Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության տեսակետները: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

V. APPENDICES

Appendix 1: Feedback Questionnaire for Institutional Self- Evaluation of the Digital Education Quality Assurance (QA) System

Purpose

This feedback survey questionnaire is designed to evaluate the quality of digital and online education in higher education institutions (HEIs) in Armenia. Its purpose is to gather information and evidence regarding the institution's formal strategies, policies, and operational systems for ensuring quality in its digital educational offerings.

It uses maturity scales, percentage-based questions, and checklists to gather measurable data, while still prompting for evidence to support the evaluations.

To be completed by: University administration (e.g., Vice-Rector for Academic Affairs, Head of Quality Assurance, Dean, Program Coordinator, or designated representative).

General Information

University name: _____

Respondent's position: _____

Respondent name & title: _____

Date of completion: _____

Instructions

Please provide concise and evidence-based answers. Where possible, refer to or provide links/ appendices for relevant policy documents, reports, or procedural guidelines.

For each statement in Sections 2-11, please rate your institution's current status using the following ***Maturity Scale.*** You will also be asked to provide references to specific evidence (e.g., policy documents, reports, website links, etc.) that substantiates your answers.

Maturity Scale:

Use checkboxes (✓) for:

- **1 = Not in Place:** The practice or policy does not exist.
- **2 = Ad-hoc / Informal:** The practice exists but is informal, or dependent on individuals.
- **3 = Documented / Developing:** A formal process or policy is documented but is new or inconsistently applied.
- **4 = Systematically implemented:** The practice or policy is formally established and systematically implemented.

Section 1: Institutional Profile

1.1. Approximate percentage (%) or number of students enrolled in courses with a significant digital (online, blended, hybrid) component: _____

1.2. Approximate percentage (%) or number of teaching staff teaching courses with a significant digital (online, blended, hybrid) component: _____

1.3. Primary Learning Management System (LMS) used:

( ) Moodle

( ) Canvas

( ) Blackboard

( ) D2L Brightspace

( ) In-house system

( ) Other: _____

Section 2: Governance and QA Strategy

(This section evaluates the institutional commitment and formal structures for QA in digital education)

N	Statement	Maturity Rating (1-4)	Evidence (cite policy name, committee, or report)
2.1	A formal, university-wide strategy or policy for digital/online education is documented and approved.		
2.2	Roles and responsibilities for the quality of digital education are clearly defined, allocated and documented (e.g., roles of Deans, QA Office, IT, Centre for Teaching & Learning, etc.).		
2.3	A dedicated committee or governing body is responsible for overseeing the implementation and review of the digital education strategy.		

Section 3: Curriculum and Course Design

(This section assesses the processes for ensuring high-quality course design and content)

N	Statement	Maturity Rating (1-4)	Evidence (cite guideline document, template name, review process)

3.1	Institution-wide standards or templates for the design, structure, and navigation of digital/online courses (e.g., in the LMS) are established and applied.		
3.2	Policies/mechanisms are in place (e.g. multimedia elements, other interactive features) and used to enhance inclusivity and engagement in course content.		
3.3	A formal process exists to ensure digital course content is regularly reviewed for accuracy, currency, and relevance.		
3.4	A systematic quality review process/approval (e.g., peer review, instructional design review, department heads) is required for all new digital/online courses before they are launched.		

Section 4: Teaching and Learning

(This section assesses the institutional policies and expectations for the delivery of high-quality teaching, interaction, and feedback in the digital environment)

N	Statement	Maturity Rating (1-4)	Evidence (cite policy, handbook, review criteria, or guideline document)
4.1	The institution has pedagogical standards/guidelines promoting the use of digital teaching strategies (e.g., active learning, synchronous/asynchronous balance, community building).		
4.2	There are institutional expectations or standards defining the required level of instructor presence and interaction in online courses (e.g., response times in forums, frequency of announcements).		
4.3	The design of online courses requires to include structured opportunities for student-to-student interaction and collaboration (e.g., group projects, peer reviews, facilitated discussions).		
4.4	The strategies are in place to reduce student isolation in online courses (group activities, online forums, social media engagement).		
4.5	The strategies are in place to ensure digital content is accessible to all students, including those with disabilities (WCAG compliance, adaptive technologies, language support).		

4.6	The evaluation of teaching effectiveness and student engagement is a formal component of the periodic course and programme review process.		

Section 5: Faculty Development and Support

(This section evaluates the support systems in place for academic staff)

N	Statement	Maturity Rating (1-4)	Evidence (cite training programme, support service name, resource portal)
5.1	A mandatory training (e.g., workshops, or resources offered) in digital pedagogy and technology usage (e.g., online, blended or hybrid learning, gamification, content creation, etc.) is required for all teachers before they teach online for the first time.		
5.2	A structured programme or other opportunities of ongoing professional development/training for digital teaching (digital tools and pedagogical approaches) are available to all teachers (workshops, online courses, peer support).		
5.3	Technical support services (e.g., instructional designers, media production specialists) are available to assist teaching staff in developing high-quality digital learning materials/courses.		
5.4	Resources/tools are provided to teaching staff for developing/creating high-quality digital content/materials.		
5.5	A mentorship programme (e.g., peer mentorship) exists for sharing digital teaching best practices.		
5.6	**Quantitative Data:**	**Response**	**Evidence source (e.g., HR report, training records)**
	What percentage (%) of teaching staff currently teaching online have completed the mandatory/foundational training?	____ %	

Section 6: Student Assessment and Academic Integrity

(This section assesses policies and procedures related to digital assessment)

N	Statement	Maturity Rating (1-4)	Evidence (cite assessment policy, academic integrity policy, software used)
6.1	The university's assessment policy explicitly addresses standards for digital and online assessments.		
6.2	Measures are in place to ensure the validity, reliability, and fairness of online assessments.		
6.3	Procedures to ensure academic integrity (cheating prevention, proctored exams) in online assessments are systematically implemented.		
6.4	Technologies and procedures (anti-plagiarism tools, e.g. Turnitin) are systematically used to detect and deter plagiarism and other forms of academic misconduct in the online environment.		
6.5	A variety of (diverse) digital assessment methods (formative, cummative, self-assessments) are formally encouraged and supported to ensure valid measurement of learning outcomes.		
6.6	An institutional policy or standard defines the expected quality and maximum turnaround time for providing feedback to students on their assessments.		
6.7	**Quantitative Data:**	**Response**	**Evidence source (e.g., LMS report, IT policy)**
	What percentage (%) of online course submissions are automatically checked using anti-plagiarism software?	____ %	

Section 7: Student Support and Services

(This section evaluates the support framework for online students)

N	Statement	Maturity Rating (1-4)	Evidence (cite service name, accessibility policy, orientation module)
7.1	An orientation and training sessions for digital tool usage are provided to all students to prepare them for online learning.		

7.2	Academic (e.g., advising, tutoring, library services) and technical support services are explicitly designed and available to meet the needs of online students (e.g., for reducing student isolation - group activities, chat forums, or social media are used to foster interaction).		
7.3	An institutional policy requires all digital courses/learning materials to comply with accessibility standards (e.g., accessible to students with disabilities, compliance with WCAG standards).		

Section 8: Technology and Infrastructure

(This section assesses the management of the technological infrastructure and student data)

N	Statement	Maturity Rating (1-4)	Evidence (cite IT governance document, SLA, data privacy policy)
8.1	A formal process is used to evaluate, select and approve new educational technologies for institutional use.		
8.2	Procedures are in place for monitoring of the reliability and performance of the core learning technologies/infrastructure (e.g., LMS).		
8.3	24/7 technical assistance/support is available for students and faculty to ensure the reliability and stability of digital/online learning platform.		

Section 9: Data Privacy and Security

(This section assesses the institution's formal systems for protecting student data in compliance with legal regulations and best practices)

N	Statement	Maturity Rating (1-4)	Evidence (cite policy name, data protection officer, incident plan, audit report)
9.1	A formal data protection policy, compliant with relevant regulations (e.g., GDPR, FERPA) is in place and governs the security and privacy of student data on digital learning platforms.		
9.2	A clear and transparent process exists to obtain informed consent from students and staff regarding the collection and use of their data in digital learning systems.		

9.3	Documented procedures are in place for the secure storage, handling/management, and transmission of student data collected through digital learning platforms.		
9.4	The institution conducts regular cybersecurity audits and has m**easures** to manage and mitigate potential data breaches or cyber threats.		

Section 10: Ethics and Equity

(This section evaluates the institution's commitment to the ethical use of technology and data, and to ensuring equity for all learners in the digital environment)

N	Statement	Maturity Rating (1-4)	Evidence (cite ethics framework, AI policy, equity statement, committee name)
10.1	A formal ethical framework or policy governs the use of student data and learning analytics, ensuring the focus is on learning support rather than surveillance.		
10.2	The institution has a policy or set of guidelines addressing the ethical and transparent use of Artificial Intelligence (AI) and automation in teaching and assessment.		
10.3	There is a strategic, institution-wide approach to promoting a culture of academic integrity among students and staff in the digital context.		
10.4	The institution systematically assesses and has strategies to address digital equity issues, such as disparities in student access to technology, reliable internet, and digital literacy skills.		

Section 11: Monitoring and Continuous Improvement

(This section evaluates the mechanisms for ongoing quality enhancement)

N	Statement	Maturity Rating (1-4)	Evidence (cite survey instruments, annual report, committee minutes)
11.1	Feedback on the digital learning experience (surveys, focus groups, learning analytics) is systematically collected from students on a regular cycle (e.g., annually, bi-annually).		

11.2	Feedback on digital teaching needs and experiences is systematically collected from faculty on a regular cycle.		
11.3	A formal process exists to analyze feedback and performance data (e.g., student success rates, engagement analytics) to identify areas for improvement in digital offerings.		
11.4	Findings from quality reviews are systematically shared across the institution to promote good practice.		
11.5	Digital content and tools reviewed and updated (annually, bi-annually, as needed).		

Section 12: Open Feedback

1. List 3 key challenges in maintaining digital education quality at your institution.
2. Share 1-2 successful QA practices you recommend.
3. Additional comments:

End of Questionnaire

Appendix 2: List of universities that completed the questionnaire

1. Armenian National Agrarian University
2. Armenian State Institute of Physical Culture and Sport
3. Armenian State University of Economics
4. Brusov State University
5. Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia
6. Gavar State University
7. Goris State University
8. Khachatur Abovian Armenian State Pedagogical University
9. Mkhitar Gosh Armenian-Russian International University
10. NAS RA International Scientific-Educational Center
11. National Polytechnic University of Armenia
12. National Polytechnic University of Armenia, Gyumri Branch
13. National Polytechnic University of Armenia, Vanadzor Branch
14. National University of Architecture and Construction of Armenia
15. Northern University
16. Public Administration Academy of the Republic of Armenia
17. RA MOD National Defense Research University
18. Shirak State University
19. University of Traditional Medicine
20. Vanadzor State University after Hovhannes Tumanyan
21. Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
22. Yerevan State Theatre and Film Institute
23. Yerevan State University

Co-funded by
the European Union

Co-funded by the European Union. Views and opinions expressed are, however, those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union or European Education and Culture Executive Agency. Neither the European Union nor the granting authority can be held responsible for them.